Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՍԱՓԱՐ

1-2 (575-576)
30.01.2020
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Лусарар ● ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՐԹ ● Lusarar

Սոկրատ ԽԱՆՅԱՆ

ԳԱՆՁ

Անց են կենում օրերս
Կանաչ-կարմիր շորերում,
Թռվռում են լորերս
Իմ կարոտի ծորերում:
Հետ բերելու հույս չկա,
Ձեռք մեկնելու ի՜նչ իմաստ,
Շոշափում եմ իմ սիրտը,
Երազներն իմ արևկա:
Լույսի թելեր եմ մանում,
Հիմնում եմ նոր մի կամար,
Թեկուզ տեսել եմ կյանքում
Քանի՜ գարուն ու ամառ:
Նորից ծփանք է տալիս
Դեմս ծնծղան արևի…
Հոգիս խուտուտ է գալիս,
Խորքում գանձ կա երևի:

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԳԻՐ

Հարգելի պարոն Խանյան

Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության անունից սրտանց շնորհավորում եմ Ձեզ ծննդյան 90-ամյակի կապակցությամբ: Ձեր թողած հետագիծը լուսավոր է և արցախցու երկարակեցության ու աշխատասիրության ինքնատիպ օրինակ է, իսկ Ձեր անհատականությունը դրսևորվել է բազմամյա բեղմնավոր գործունեության ընթացքում: Դուք Ձեր համեստ ներդրումն եք ունեցել դեռևս խորհրդային տարիներին Բաքվի հայ երիտասարդներին հայ պահելու գործում՝ տեղի պետական մանկավարժական ինստիտուտում հայ գրականություն դասավանդելով: Իսկ հայոց լեզու և գրականություն բաժինն ավարտելուց հետո Ձեր առաքելությունը շարունակել եք ադրբեջանական լծի տակ գտնվող ձեր հայրենի երկրամասում՝ Արցախի ուսանողներին մատուցելով հայ բազմադարյա գրականության գոհարները՝ ի շահ հայապահպանումի և ազգակերտումի: Արժանահիշատակ է Ձեր գործունեությունը նաև նորանկախ Արցախում: Պատերազմի վերքերից ապաքինված փոքրիկ հայրենիքում նոր գաղափարներով և ազգային մտածելակերպով օժտված սերունդներ կերտող ազգային դպրոցի կայացմանը լծվեցիք անվերապահորեն՝ այդ կենսական գործին ի սպաս դնելով Ձեր գիտելիքներն ու արհեստավարժությունը: Մեծ է Ձեր ներդրումը նաև արցախյան բարձրագույն դպրոցի կայացման գործում և գրականագիտության մեջ ընդհանրապես: Կրկին շնորհավորում եմ Ձեզ հոբելյանի առթիվ և մաղթում առողջություն ու արևշատություն:

Նախարար՝ Նարինե ԱՂԱԲԱԼՅԱՆ

ԱՐՑԱԽՈՒՄ ՆԵՐԴՐՎԵՑ ՀԵՐԹԱԿԱՆ «ԱՐՄԱԹ» ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆ

Հերթական՝ 27-րդ «Արմաթ» ինժեներական լաբորատորիան բացվեց Արցախում՝ Ստեփանակերտի Անդրեյ Սախարովի անվան հ. 8 միջնակարգ հոսքային դպրոցում: Այն կյանքի է կոչվել ՀՀ առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկության միության (ԱՏՁՄ) նախաձեռնությամբ և Բաքվի ջարդերը վերապրած, ամերկաբնակ հայ գրող Աննա Աստվածատրյան-Թերքոտի հովանավորությամբ:

Հիշարժան իրադարձության կապակցությամբ դպրոց են այցելել ԱՀ Ազգային ժողովի նախագահ Աշոտ Ղուլյանը, արտաքին գործերի նախարար Մասիս Մայիլյանը, կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանը, ԱՏՁՄ ներկայացուցիչներ, հովանավորը, որոնց դիմավորել են աղ ու հացով: Հյուրերը ծաղիկներ խոնարհեցին Արցախյան գոյամարտում զոհվածների հիշատակը հավերժացնող հուշատախտակին: Այնուհետև տեղի ունեցավ լաբորատորիայի

բացման հանդիսավոր արարողությունը: Բացման խոսք ասաց դպրոցի տնօրեն Լյովա Գևորգյանը, որը նշեց, որ տեխնիկական նորագույն միջոցներով հագեցած ու կահավորված ինժեներական ուսումնական լաբորատորիան կխթանի տեխնոլոգիական կրթությունը, կուժեղացնի դպրոցում տեխնիկական կրթության բազան, կնպաստի երեխաների մասնագիտական կողմնորոշմանը: Ըստ նրա՝ «Արմաթը» մեծ դեր կունենա տեխնիկական կրթության մասնագիտական աշխատուժ պատրաստելու գործում, ինչը կարևոր պայման է տնտեսության արդի պահանջների լուծման համար: Դպրոցի մանկավարժական և աշակերտական հանրույթի անունից նա երախտագիտություն հայտնեց ԱՏՁՄ-ին և հովանավոր Աննա Աստվածատրյանին՝ նման հրաշալի նվեր պարգևելու համար:

11-րդ դասարանի աշակերտուհի Միլենա Կարապետյանն իր սրտի խոսքն ասաց անգլերենով:

- 21-րդ դարի դպրոցը դժվար է պատկերացնել առանց տեխնիկական կրթության: Եվ «Արմաթ» լաբորատորիայի մուտքը շատ կարևոր փոփոխություններ է բերում դպրոց»,- ասաց կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանը: Նախարարի խոսքով՝ 27-րդ «Արմաթը» բացվեց Արցախում: Դրանցից հինգը Ստեփանակերտում են, 22-ը՝ շրջաններում, ընդ որում 15-ը՝ գյուղական բնակավայրերի դպրոցներում: «Դա նշանակում է, որ նախարարությունն անչափ կարևորում է տեխնիկական կրթության հասանելիությունը բոլորի համար և փորձում է չկենտրոնանալ միայն Ստեփանակերտում»,- ասաց Ն. Աղաբալյանը՝ հավելելով, որ դրանք բոլորը կյանքի են կոչվել ԱՏՁՄ-ի հետ նախարարության համագործակցության շրջանակներում և բարերարների աջակցությամբ: Մյուս «Արմաթ»-ները տեղադրվել են Հայ կրթական հիմնարկության, Յունիբանկի, «Բեյզ մեթլս» ընկերության, «Արցախբանկի», «Շեն» կազմակերպության, անհատ բարերարների օգնությամբ և Կովսականում՝ ՀՀ նախագահի կողմից: Նախարարը վստահություն հայտնեց, որ այս անունների շարքը դեռ կլրացվի, և լաբորատորիաներ կտեղադրվեն նաև մյուս դպրոցներում: Ն. Աղաբալյանը հատուկ շնորհակալություն հայտնեց Ա. Աստվածատրյանին, որը հայերի նկատմամբ ադրբեջանցիների վայրագությունների պատասխանն այս ձևով է տալիս՝ վերահաստատելով, որ հայը ոչ միայն այս տարածաշրջանում, ոչ միայն Արցախում շարունակում է ապրել, այլև նայում է դեպի առաջ և քայլում է աշխարհի հետ համաքայլ:

Իր հերթին Աննա Աստվածատրյանն ասաց, որ ջարդերից փրկված և արտերկրում հաստատված մեր հայրենակիցները պատրաստ են բարոյապես և ֆինանսապես աջակցություն ցուցաբերել Արցախին: Բաքվի հայերի ջարդերի 30-րդ տարելիցի կապակցությամբ ինքը Թալինում անտառ է հիմնել՝ ի հիշատակ զոհերի. «Ես ցանկացա նմանատիպ մի ծրագիր անել Արցախում, և քանի որ Արցախում անտառի կարիք չկա, ցանկացա փաստել նրա ապագան, իսկ ապագան երեխաներն են»: Դրանում իրեն ուղղորդել է Արցախի արտաքին գործերի նախարարությունը, որն առաջարկել է այդ ծրագիրն իրականացնել

հ.8 դպրոցում, որը ժամանակին ընդունել է Բաքվի փախստականներին: «Ես տեսնում եմ, որ այստեղ խաչվում են անցյալն ու ապագան, և շատ ուրախ եմ տեսնել այստեղ շատ ստեղծագործ, շնորհալի երեխաների»,- ասաց Ա. Աստվածատրյանը՝ վստահեցնելով, որ շարունակելու է աջակցել Արցախին, ինչով կարող է:

Լաբորատորիայի մուտքը երիզող կարմիր ժապավենը կտրելու պատիվը տրվեց Աննա Աստվածատրյանին և դպրոցի 5-րդ դասարանի աշակերտ Գեղամ Բեգլարյանին:

Լաբորատորիայի բովանդակությանը ներկաներին ծանոթացրեց ԱՏՁՄ ծրագրի ղեկավար Սեդրակ Վարդանյանը: Սարքավորումները հնարավորություն են տալիս աշխատել երեք ուղղություններով՝ համակարգչային ծրագրավորում, ռոբոտաշինություն և եռաչափ մոդելավորում: Նրա խոսքով՝ դա 575-րդ «Արմաթ»-ն է, որ իրենք ներդնում են: Ինչպես արդեն ասվեց, դրանցից 27-ը Արցախում են, 4-ը՝ Ջավախքում: Մոտ օրերս ԱՏՁՄ-ն 2000 լաբորատորիա կբացի Հնդկաստանում, և շարունակվելու է այդ ընթացքը: Ըստ նրա տեղեկությունների՝ այս պահի դրությամբ «Արմաթ» հաճախում են 14 հազարից ավելի երեխաներ: Արդեն կան արդյունքները: Միջազգային առևտրական կազմակերպության ուսումնասիրությունների արդյունքներով «Արմաթ» երկու տարուց ավելի հաճախած երեխաների 88



տոկոսն ընդունվել է բարձրագույն ուսումնական հաստատություններ, որի 44 տոկոսը և՛ աշխատում է, և՛ սովորում: Այսինքն՝ այդ երեխաները 1-2-րդ կուրսերից արդեն ուսման ծախսերի բեռն իրենց ծնողներից վերցրել են իրենց վրա: Իսկ Վանաձորում այսօր 40 երեխա եռաչափ մոդելավորման գծով աշխատում է Շվեյցարիայից եկած պատվերի վրա, և աշխատելով օրական 4 ժամ՝ վաստակում են ամսական 75-80 հազար դրամ: Այսինքն, դեռ դպրոցը չավարտած, երեխաները կարող են գումար վաստակել և ստանալ ապագայի իրենց մասնագիտությունը: «Արմաթ»-ը ապագայի ալգորիթմն է, ձեր բարեկեցիկ կյանքն ապահովելու ծրագիրն է, բանակի հզորության, մեր պաշտպանունակության մեծացման գրավականն է»,- երաշխավորեց ծրագրի ղեկավարը:

Արցախում «Արմաթ»-ը արմատավորվել է 2013-2014 թթ: Արդյունքերն արդեն տեսանելի են: Ինչպես տեղեկացրեց Ս. Վարդանյանը, եռաչափ մոդելավորման, դիջիքոթ ծրագրավորման և ռոբոտաշինության մրցույթներում, որտեղ հանդես են եկել 40-50 թիմեր, Արցախի արմաթցիները զբաղեցրել են 2-րդ և 3-րդ տեղերը:

Եվս մի կարևոր տեղեկատվություն: ԱՏՁՄ-ի և ԿԳՍՆ-ի պայմանավորվածությամբ այս տարի Արցախի օդանավակայանում կանցկացվի անօդաչու թռչող սարքերի 3-րդ մրցույթը, որտեղ հանդես կգան և՛ պրոֆեսիոնալները, և՛ արմաթցիները:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԸՆԹԱՑՔ

ԱՐՑԱԽԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ 2020Թ. ԱՆԴՐԱՆԻԿ ՆԻՍՏԸ

Հունվարի 24-ին կայացավ Արցախի գիտական կենտրոնի գիտխորհրդի անդրանիկ նիստը, որին ներկա էին ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանը, Ազգային ժողովի կրթության, գիտության, մշակույթի, սպորտի, երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Արմեն Սարգսյանը, պատգամավորներ: Նիստը վարեց Արցախի գիտական կենտրոնի տնօրեն Ստեփան Դադայանը:

Ներկայացվեցին 2018-2019 թվականների գիտական, գիտատեխնիկական կիրառական արդյունքների ձեռքբերմանն ուղղված թեմաների մրցույթով հաղթած և պայմանագրային հիմունքներով կատարված աշխատանքների հեղինակները: Ամփոփիչ հաշվետվությանբ հանդես եկան վեց թեմաների հեղինակները: Թեմաները վերաբերում են Արցախում բանջարաբոստանային և կիրառական նշանակության բույսերի սնկային հիվանդությունների ուսումնասիրությանը, հանրապետության նախալեռնային գոտու անջրդի պայմաններում հողապաշտպան երկրագործության համակարգի օղակների արդյունավետությանը, Դաբաղյան հակամարտության առանցքային փաստաթղթերում և բանակցություններում առկա իրավաքաղաքական փաստարկներին՝ 1995-2003թթ., դրանց դերին հիմնախնդրի ընկալման գործընթացում, Արցախի Հանրապետության սահմանադրության մեկնաբանություններին, միջնակարգ մասնագիտական, բարձրագույն կրթության համակարգի ձևավորման ու զարգացման ուղղություններին ԼՂԻՄ-ում և Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետությունում (1923-2017թթ.), Ադրբեջանի աշխարհաքաղաքական պատմությանը:

Նիստին ի գիտություն ընդունվեցին 2018-2019 թվականներին իրականացված գիտական թեմաների կատարման արդյունքների մասին ամփոփ հաշվետվությունները: Նախարար Ն. Աղաբալյանը խոսեց Արցախում գիտության զարգացման արդյունավետ համակարգ ձևավորելու անհարժեշտության մասին՝ նշելով առկա թերացումներն ու առաջիկա անելիքները: Ն. Աղաբալյանն առկա խնդիրներից առանձնացրեց գիտական գործունեության համար անհրաժեշտ գիտական նեղուժի վերարտադրման, նյութատեխնիկական բազայի հարստացման, գիտական հետազոտությունների գերատեսչական առաջնահերթությունների սահմանման, կատարած գիտական թեմաների հաշվետվությունների ներկայացման ձևի փոփոխման ու արդիականացման, ներկայացվող գիտական հայտերի ֆինանսական նախահաշիվների փոփոխման և մի շարք այլ կարևոր հարցեր:

«Իհարկե, գիտական հետազոտություններն ուղղված են տնտեսության մեջ այս կամ այն խնդրի լուծմանը, սակայն պետք է կարողանանք հստակ ձևակերպել պետական պատվերը, որն ուղղված կլինի կոնկրետ ոլորտում առկա խնդիրների լուծմանը: Արցախի կազմավորումից հետո մեր հանրապետությունում սկսել են գործարկվել նոր ուղղություններ, սակայն այդ ընթացքում գիտական հետազոտությունները տնտեսության մի շարք ոլորտներում բացակայում են, ինչից էլ առաջանում են բազմաթիվ հարցեր: Անհրաժեշտ եմ համարում ընդգծել, որ պետք է ակտիվացնել համագործակցությունը Արցախի բոլոր գերատեսչությունների հետ՝ կոնկրետ ուղղություններում հստակ խնդիրներ ձևակերպելու և դրանց հիման վրա թեմայի հետազոտության մրցույթ հայտարարելու վերաբերյալ,- նշեց Ն. Աղաբալյանը:- Արցախյան պատերազմից հետո ձևավորվել ու զարգանում են տնտեսության տարբեր ճյուղեր, որոնք ունեն գիտական ուսումնասիրման խնդիրներ»: Նախարարն առանձնացրեց էներգետիկայի՝ որպես երիտասարդ գիտական ճյուղի զարգացումը և դրա հետ կապված խնդիրների ուսումնասիրման անհրաժեշտությունը, որը կկանխեր այսօր հէկերի կառուցման հետ կապված հարցադրումները:

Որպես գիտության ոլորտի 2020թ. գերակա խնդիրներ՝ նա խոսեց գիտության ոլորտի կայուն զարգացումն ապահովող համակարգի, գիտական հետազոտությունների պետական պատվերի ձևավորման, կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված թեմաների խրախուսման, գիտական արդյունքների ներդրման և առևտրայնացման համակարգի ձևավորման, գիտատեխնիկական համագործակցության ակտիվացման ու ընդլայնման մասին:

Գիտական գործունեության զարգացման գործընթացն այլևս պետք է տարվի այն հունով, որ Արցախի գիտնականների մեկուսացումը գոնե հասցվի նվազագույնի, քանի որ մեր գիտնականները չեն կարողանում մասնակցել միջազգային գիտական, գիտահետազոտական ծրագրերին: Խոսք եղավ նաև Գիտական կենտրոնի բազային ֆինանսավորման մասին, որին խոչընդոտում է Կենտրոնի ներկայիս կարգավիճակը: Գիտական հետազոտությունների վերջնարդյունքի առևտրայնացման հարցում նույնպես կան իրավական փաստաթղթերի անհամատեղելիություն և անհամապատասխանություններ, որոնք դարձյալ պայմանավորված են Կենտրոնի կարգավիճակով:

Կփոխվի գիտական թեմաների հաշվետվության ձևը, որը պատրաստվում է մշակել ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարությունը (այն չկա նաև ՀՀ-ում):

ԿԳՍ նախարարն առաջնահերթ խնդիրների շարքում առանձնացրեց նաև միասնական գիտատեղեկատվական բազա ունենալու հարցը և գիտական արդյունքի ներդրման ու առևտրայնացման համակարգի ստեղծումը, որը մինչ այսօր չի արվել:

Եվ այսպես, Արցախի գիտական կենտրոնի գիտխորհրդի անդրանիկ նիստում ի գիտություն են ընդունվել 2018-2019 թվականներին իրականացված գիտական թեմաների կատարման արդյունքների մասին ամփոփիչ հաշվետվությունները:

Կատարված աշխատանքների հաշվետվությունները տասնօրյա ժամկետում կուղարկվեն Արցախի կրթության, գիտության և սպորտի նախարարություն, որն էլ կուղարկի մասնագիտական փորձաքննության:

Սեփ. լրատվություն

«ԵՐՋԱՆԻԿ ԵՄ, ՈՐ ԻՄ ՀԵՏԵՎԻԺ ՍՊԻՏԱԿ ՀԵՏԱԳԻԾ ԵՄ ԹՈՂՆՈՒՄ»

Դժվար է հարմարվել այն իրողությանը, որ տարիների գումարի պարտադրանքով պետք է դադարեցնես աշխատանքային գործունեությունդ, այն էլ՝ մի կոլեկտիվում, որը քեզ համար դարձել է երկրորդ ընտանիք: Բոլորը չէ, որ հեշտությամբ են հաղթահարում հոգեբանական այդ սահմանագիծը: Եվ թերևս նրանց մոտ է դա փոքրիշատե անխռով ստացվում, ովքեր կոլեկտիվից հեռանում են ոչ աննկատ:

ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարությունում սրտառուչ և ջերմ հանդիպումը նախադպրոցական բաժնի վարիչ Աննա (Ժաննա) Այվազյանի առիթով էր, որն իր աշխատանքային գործունեությունը ավարտել է նախարարությունում, որտեղ նա պաշտոնավարել է 13 տարի:

Կենսագրական հակիրճ տվյալներն ասում են...

Ծնվել է 1954թ. Վրաստանի Ախալցխեի շրջանի Ծղալթբիլա գյուղում (նախկին՝ Նոր շեն): Տեղի միջնակարգն ավարտելուց հետո ընդունվել է Երևանի Ա. Բակունցի անվան մանկավարժական ուսումնարանը: Ամուսնացել է ղարաբաղցու հետ և ընտանիք ստեղծել Ստեփանակերտում: Աշխատել է սկզբում հ. 5 մանկապարտեզում՝ որպես ժամանակավոր դաստիարակ, այնուհետև հ. 1 մանկապարտեզում՝ մեթոդիստ: Երկու տարի աշխատելուց հետո՝ 1980-ին, երբ այդ մանկապարտեզները միավորեցին, նշանակվեց հ. 5 մսուր-մանկապարտեզի վարիչ: Ավարտել է նաև Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության բաժինը: 1993թ. նշանակվել է ԼՂՀ ժողստեղծագործության կենտրոնի տնօրեն: 1996-ին ծառայության է անցել բանակում: Պահեստազորի մայորի կոչումով 2006թ. հրավիրվել է աշխատելու ԼՂՀ կրթության և գիտության նախարարությունում՝ որպես նախադպրոցական և արտադպրոցական բաժնի վարիչ:

Աննա Այվազյանը Արցախյան շարժման առաջամարտիկներից է: «Լուսարարի» ուշադիր ընթերցողը, համադրելով նրա ստեղծագործությունները, կարող է պատկերացում կազմել Արցախյան շարժման և պատերազմի տարիների ու առհասարակ նրա հայրենասիրական ձեռնարկումների մասին: Մեծ է նրա ներդրումը նաև Արցախում ազգագրական երգի տարածման ու զարգացման գործում: Ստեղծել է «Մարալիկ» ազգագրական համույթը: Համամիութենական փառատոնի դափնեկիր է:

Նախարար Նարինե Աղաբալյանի գնահատմամբ՝ Աննա Այվազյանը կյանքի հետաքրքիր ճանապարհ է անցել, որի ըստ արժանվույն գնահատումը դեռ կլինի: Հենց միայն Արցախյան շարժման, մեր ազատագրական պայքարի մասին նրա հուշերը բավականին լույս են սփռում ու հարստացնում արցախյան տարեգրության էջերը: Իսկ առայժմ Արցախի նախադպրոցական կրթության զարգացման, մատաղ սերնդի հայեցի դաստիարակության գործում ունեցած զգալի ավանդի, կրթության համակարգի պատասխանատու պաշտոններում հմտավարժ աշխատանքի ու նվիրումով լեցուն բազմամյա վաստակի համար Ն. Աղաբալյանը Ա. Այվազյանին պարգևատրեց նախարարության պատվոգրով և արժեքավոր նվերով:

Գործընկերներն ընդգծեցին մարդկային հարաբերություններում Ա. Այվազյանի ունեցած անկեղծությունը: «Երբ մարդու հետ շփվելը հեշտ է լինում, ամեն ինչ խոսում է նրա մասին: Աննա Այվազյանի հետ շփվելը հեշտ է և հաճելի: Նա երբեք իր անձը չի ընդգծում»,- ասաց փոխնախարար Միքայել Համբարձումյանը:

- Անչափ զգացված եմ և հուզված ուրախությունից և ոչ թե տխրությունից: Թոշակի գնալը պարգև է և ո՛չ պատիժ: Կմաղթեի, որ բոլորը հասնեն այդ աստիճանին ու ա՛յս կերպ թոշակի գնան: Ես շնորհակալ եմ իմ կյանքից ու բախտից... Ինչ բնագավառում էլ որ աշխատել եմ, սիրվել ու հարգվել եմ: Իմ ապրած տարիներից դժգոհ չեմ: Ապրել եմ շատ բուռն կյանքով: Իմ տարիները շատ թեթև են իմ ուսերին, և նրանց ծանրությունը չեմ զգում: Բոլորիդ ցանկանում եմ արժանանալ այն հարգանքին ու սիրուն, որ ես եմ իմ կյանքի ընթացքում ստացել: Ես միշտ հաշտ եմ եղել և՛ Աստծո, և՛ բոլորի հետ: Երջանիկ եմ, որ իմ ետևից սպիտակ հետագիծ եմ թողնում»,- ասաց Ա. Այվազյանը:

Այդ հետագիծը համակարգին նվիրված, նվիրյալ աշխատանքով, գործընկերների հետ ազնիվ հարաբերություններով, մասնագիտական գիտելիքները փոխանցելու, արվեստի և գրչի իր շնորհներով ներկայանալու հանգամանքով չէ միայն պայմանավորված: Նա ունի հետնորդներ, որոնք փառք ու պատիվ կարող են բերել Արցախին, ինչն ընդգծեց նախարարը: Ա. Այվազյանի Աբել և Ալբերտ թոռները, որոնք այսօր սովորում են Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում, իրենց արվեստով հիացնում են բոլորին հայկական ժողովրդական, գուսանական երգերի կատարմամբ: Ն. Աղաբալյանը վստահ է, որ նրանց լավ ապագա է սպասվում, իսկ ինքը շարունակելու է նպաստել նրանց ստեղծագործական զարգացման ճանապարհի հարթմանը:

Հիրավի, մեծ երջանկություն է ոչ միայն լիարժեք, իմաստալից կյանքով ապրելը, այլև գեղեցիկ հետագիծ թողնելը:

Աննա Այվազյանն հրաժեշտ տվեց նախարարությունում իր գործունեությանը, բայց՝ ոչ ստեղծագործական աշխատանքին: Նրա գրվածքներին մեր ընթերցողները դեռ շատ առիթներ կունենան հանդիպելու «Լուսարարի» էջերում, և չենք կասկածում, որ մի օր դրանք հանրությանը կմատուցվեն ամբողջական գրքով:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՏԵՍԼԱԿԱՆ

«ՀԱՎԱՏՈՒՄ ԵՄ, ՈՐ ՄՈՒՏՔ ԵՆՔ ԳՈՐԾՈՒՄ ՎԵՐԱԾՆՆԴԻ ՆՈՐ ԴԱՐԱՇՐՋԱՆ»

Արմեն Սարգսյանի դասախոսությունը Հոլոնի համալսարանում

Աշխատանքային այցով Իսրայելի պետությունում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանը հունվարի 24-ին այցելել է Իսրայելի առաջատար ուսումնական հաստատություններից մեկը՝ Հոլոնի տեխնոլոգիական համալսարան:

Նախագահ Սարգսյանը հանդիպում է ունեցել համալսարանի ղեկավարության հետ, այնուհետև հանդես է եկել «Աշխարհաքաղաքական իրողությունները արհեստական բանականության դարաշրջանում» թեմայով դասախոսությամբ:

Համալսարանի նախագահ Էդուարդ Յակուբովը, նշելով, որ մեծ պատիվ է հյուրընկալել Հայաստանի Հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանին, մասնավորապես ասել է. «Պատմության շատ էջեր ողբերգական են հայ և հրեա ժողովուրդների համար: Մենք սգում և հիշում ենք բոլոր այն միլիոնավոր մարդկանց մահը, որոնք զրկվել են իրենց կյանքից Հոլոքոստի և Ցեղասպանության ժամանակ: Մենք միշտ կհիշենք պատմության այդ ողբերգական էջերը:

Մենք մեծապես գնահատում ենք Ձեր այցելությունն Իսրայել՝ աշխարհի այլ 41 երկրների ղեկավարների հետ նշանավորելու Աուշվիցի-Բիրկենաուի ազատագրման 75-ամյակը:

Հայաստանն ընտրել է մոդեռնիզմի և ժողովրդավարության ճանապարհը: Հայտնի է, որ կրթությունը, գիտությունը մեծ և վճռորոշ դեր ունեն երկիրն ավելի լավ ապագա տանելու համար: Այստեղ մենք արդեն 50 տարի կերտում ենք մեր ապագան՝ սերտ համագործակցելով արդյունաբերական հասարակության հետ, զարգացնելով մեր երկրի ակադեմիական կապերն աշխարհի շատ երկրների հետ:

Հավատացած եմ, որ սա կարևոր քայլ է՝ առաջ ընդլայնելու հարաբերությունները և համագործակցությունը մեր համալսարանի և Հայաստանի, ձեր գիտակրթական հաստատությունների հետ»:

Շնորհակալություն հայտնելով հրավերի համար՝ նախագահ Սարգսյանը նշել է. «Մեր ժողովուրդները շատ ընդհանրություններ ունեն: Երկուսս էլ շատ հին ժողովուրդ ենք, տարհանվել ենք մեր հայրենիքից, պայքարել ենք մեր երկիրը, մշակույթը և ինքնությունը պահպանելու համար: Մենք երկուսս էլ կորցրել ենք մեր պետականությունը հարյուրավոր տարիներ առաջ ու այն ձեռք բերել, մենք երկուսս էլ անցել ենք մարդկային մեծ ողբերգության միջով:

1915 թվականին տեղի ունեցած Հայոց ցեղասպանությունը խլել է 1,5 միլիոն հայի կյանք, ոչնչացրել հայ հասարակությունն Օսմանյան կայսրությունում: Ի հետևանք՝ մեծ Սփյուռք է ձևավորվել:

Իսրայել այցիս նպատակն էր իմ և իմ ժողովրդի կողմից հարգանքի տուրք մատուցել Հոլոքոստի զոհերի հիշատակին: Մեր երկու ժողովուրդներն ապացուցել են, որ կյանքն ավելի ուժեղ է, քան մահը: Այս աշխարհում չի կարող լինել այնպես, որ որևէ մեկը մեր մասին մտածելիս խոսի մահվան մասին: Նրանք պետք է մտածեն ապրելու, կյանքի մասին:

Այստեղ այցելելու իմ նպատակներից է նաև կամուրջ ստեղծելը Հայաստանի և Իսրայելի գիտնականների միջև: Այդ կապը շատ ուժեղ էր Խորհրդային Միության ժամանակահատվածում: Խորհրդային Միության տեսական ֆիզիկայի դպրոցն աշխարհի առաջատարն էր: Այդ փաստով մենք հպարտ ենք, քանի որ այն մեզ մեծ գիտնականներ տվեց: Խորհրդային Միության ժամանակ շատ հայ, ինչպես նաև հրեա գիտնականներ են աշխատել Մոսկվայում, Լենինգրադում, Հայաստանում: 1970-ականներին Խորհրդային Միությունում շատ խիստ էր. հրեական ծագում ունեցող ուսանողներին թույլ չէր տրվում ընդունվել համասարաններ, և նրանք գալիս էին Հայաստան: Մեր անկախությունից հետո ինչ-որ առումով կորցրինք այդ կապը, և հրեական ծագում ունեցողներից շատերը, որոնք Հայաստանում էին, եկան Իսրայել:

Ես այսօր այստեղ եմ՝ փորձելու նոր էջ, նոր սկիզբ ազդարարել մեր գիտական համայնքների համար: Բայց դա անելուց առաջ եկեք մտածենք, թե ապագայում ինչ հետազոտություններ կարող ենք անել: Ապագայի և դրանում մեր տեղի մասին մտածելու համար ճիշտ կլինի պատկերացնել, թե աշխարհն ինչպիսի տեսք կունենա 5, 10, 20 տարի հետո: Եթե նայենք մինչև 1950-ականները՝ այս մոլորակի բնակչությունը մոտ 2 կամ 2,5 միլիարդ էր և ամեն տարի մի քանի տոկոսով աճում էր: Բայց 1950-ականներից ի վեր այն ավելի արագ է աճել: Այսօր արդեն ապրում ենք աշխարհում, որտեղ 10 կամ ավելի միլիարդ մարդ ապրում է միասին: Երբ նայում ենք մաթեմատիկայի, ֆիզիկայի, գիտության, տեխնոլոգիաների ոլորտներին, ամեն ինչ լավ է թվում, բայց այնքան շատ անորոշություններ, հարցեր կան, թե ինչպես է աշխարհը զարգանալու, ինչպես են քաղաքական գործիչները ճիշտ որոշումներ կայացնելու, ինչ է լինելու Մերձավոր Արևելքի հետ, տարբեր ազգերի միջև առճակատումների հետ, ինչպես է տնտեսությունը աճելու և այլն: Ավելի շատ հարցեր կան, քան պատասխաններ, իսկ դասական պատասխաններն այլևս չեն աշխատում: Շփոթվածություն կա ամենուր: Բայց որտեղի՞ց է այս ամենը գալիս:

Եթե մենք 100, 150 տարի հետ գնանք, երբ աշխարհն առաջնորդվում էր դասական մեխանիկայով, ֆիզիկոսները, մարդիկ սկսեցին գտնել այնպիսի մի ֆենոմեն, որը չէին կարողանում բացատրել, և գրեթե նույն իրավիճակն էր: Շատ երևույթներ կային, որ գիտական հսկաները չէին կարողանում բացատրել, մեծ շփոթություն կար, թե ինչ է կատարվելու, թե ինչ է լինելու գիտական տեխնոլոգիաների հետ: Ի՞նչ պատահեց հետո: Հանճարներ ծնվեցին՝ Ալբերտ Այնշտայն, Վերներ, Հայզենբերգ:

Այս ֆենոմենը բացատրելու համար դու պետք է փոխես քո մոտեցումը, տրամաբանությունը, փիլիսոփայությունը: Այն պահին, երբ դա փոխեք, ամեն ինչ հնարավոր կլինի բացատրել: Բայց դա ամբողջովին տարբեր է, երբ դու գիտես քվանտային մեխանիկան, երբ ամեն ինչ աշխատում է հավանականության տրամաբանությամբ: Օրինակ, երբ ուզում ես շարժվել Ա կետից Բ կետ, այստեղ կան բանաձևեր, որոնք կարող են դա բացատրել, բայց քվանտային մեխանիկայում ամեն բան բացարձակապես տարբեր է: Քվանտային մեխանիկայում դու պետք է փոխես ինքդ քեզ, ամբողջապես, քո փիլիսոփայությունը, քո մտածողությունը, քո տրամաբանությունը, մաթեմատիկան, որ օգտագործում ես, քանի որ քվանտային մեխանիկան օգտագործում է ամբողջովին այլ մաթեմատիկա, քան դասականը: Այն պահին, երբ դու փոխես ինքդ քեզ և քո ընկալումները, ամեն ինչ հնարավոր է: Այն, ինչ մենք մոտ 100 տարի առաջ բացահայտել ենք, ֆենոմենալ էր: Դա ֆենոմենալ էր ոչ միայն գիտական ուսումնասիրությունների, այլև տեխնոլոգիաների համար: Այն ամենի համար, ինչ մենք այսօր ունենք և ինչ կունենանք 10, 20 տարի հետո, պարտական ենք քվանտային մեխանիկայի հսկաներին:

Թռիչքը տիեզերք, միջուկային էներգիայի բացահայտումը, հեռախոսները, որ մենք բոլորս ունենք, փոխել են մեր կյանքը: Ի՞նչ է հեռախոսը. հաղորդակցման միջոց: Պատկերացրեք մեր կյանքն առանց հեռախոսի: Ձեզնից շատերը նույնիսկ չեն էլ հիշի, որ կար ժամանակ, երբ կյանքն առանց հեռախոսի էր: Մեր երեխաները, թոռներն ապրելու են բացարձակապես ուրիշ աշխարհում և ասելու են մեզ՝ ինչպե՞ս եք գոյատևել, երբ չեք ունեցել հեռախոս: Մարդը չի կարող առանց հաղորդակցման: Աշխարհի հետ մեր առաջին կապը ձևավորվում է մեր մայրերի միջոցով, երբ նա մեզ կերակրում է, սովորեցնում է, մեզ համար հանդիսանում է կապի ու հաղորդակցման միջոց աշխարհի հետ: Իմ երկու տարեկան թոռնիկն ունի երկու կյանք՝ նորմալ նյութական կյանք և վիրտուալ կյանք: Հնարավոր է, որ նրանք վիրտուալ կյանքից ավելի շատ բան են սովորում: Այն բացարձակապես տարբեր է նյութական կյանքից, քանի որ հաղորդակցման արագությունը կյանքի արագությունն է դարձել: Մենք դառնում ենք անհատներ, ում հաղորդակցման արագությունը կյանքի արագությունն է: Հաղորդակցումը կամ կապը, այսպիսով, կարևորագույն գործոն են:

Այս նոր աշխարհը տարբեր է: Երբ ես այսօր նայում եմ մեզ՝ մարդկային էակներիս, մտածում եմ, որ մենք տարրական մասնիկների ենք նման, մենք քվանտային առարկաներ ենք դառնում: Այս աշխարհը վերածվում է մի վայրի, որտեղ մենք մեծ աշխարհի քվանտային մասնիկներն ենք և կարողանում ենք յուրահատուկ ձևով հաղորդակցվել: Եթե մենք ցանկանում ենք հասկանալ, թե ինչպիսին է նոր աշխարհը լինելու, թե ինչպիսի ապագա են ունենալու արդյունաբերությունը, տնտեսությունը, բիզնեսը, քաղաքականությունը, մենք պետք է սկսենք փոխել մեր մտածելակերպը, փիլիսոփայությունը, տրամաբանությունը, տեսակետները: 20, 50 տարի հետ գնացեք և որևէ մեկին պատմեք, որ երկու տղաներ, որոնք համալսարանում համապատասխան աստիճան չեն ստացել, իրենց պապիկի ավտոտնակում ինչ-որ բան են ստեղծել և դարձել են մուլտիմիլիոնատերեր: Մարդիկ չեն հավատա ձեզ: Սա է նոր աշխարհը: Մոսկվայում, Երևանում, Նյու Յորքում կամ այստեղ ապրող յուրաքանչյուր երիտասարդ մտածում է ստարտափ ստեղծելու մասին, քանի որ նրանք հավատում են գաղափարի ուժին, որ այս նոր աշխարհում նրանք կարող են հաջողության հասնել: Այս աշխարհը տարբեր է ամեն առումով:

Ինչպե՞ս է դասական քաղաքականությունը ղեկավարվում: Այն ղեկավարվում է հետևյալ ձևով. կան գաղափարներ, գաղափարախոսներ, աջեր, ձախեր, լիբերալներ, և մարդիկ ստեղծում են քաղաքական կուսակցություններ: Վերջիններս մասնակցում են ընտրությունների, ձևավորվում է կառավարությունը: Նախկինում հաշվետվությունը հասարակությանը տրվում էր ընտրություններից ընտրություն, կամ քաղաքական գործիչներն իրենց ուղերձները հղում էին ռադիոյի կամ հեռուստատեսության միջոցով: Սակայն այժմ կան Ֆեյսբուքը, Թվիթերը, որոնց միջոցով քաղաքական գործիչները կարող են հաղորդակցվել հանրության հետ ամեն օր: Տեղի ունեցող քաղաքական գործընթացները ևս ունեն քվանտային վարքագիծ: Ես կարող եմ բերել աշխարհում տեղի ունեցող բազմաթիվ օրինակներ, երբ փոքր իրադարձությունը շղթայական ռեակցիա է ստանում:

Տեսեք, թե զվարճանքն ու քաղաքականությունն ինչքան են միահյուսվել: Քաղաքականությունը միշտ էլ եղել էլ զվարճանքի մի մասը, և քաղաքական գործիչները դեռևս հին ժամանակներից սկսած՝ օգտագործում էին զվարճանքի միջոցներ. հիշենք գլադիատորներին: Սակայն այժմ իրադրությունը տարբեր է. քաղաքականությունը և զվարճանքը միախառնված են: Կան շատ երգիծաբաններ, որոնք դառնում են քաղաքական գործիչներ: Եվ կան նաև շատ քաղաքական գործիչներ, որոնք հանդես են գալիս որպես կատակերգուներ: Քանի որ այս գործընթացն ինտերակտիվ է, այն դառնում է ավելի ու ավելի շատ գրավիչ:

Մի բան է, երբ դու գալիս ես տուն և դիտում «Գահերի խաղը» և մեկ այլ բան, երբ դու սոցիալական ցանցում ուղիղ մեկնաբանություն ես գրում սերիալի պրոդյուսերին: Դու արդեն դառնում ես գործընկեր: Դու դրանից լավ ես զգում, և քո կարծիքը ինչ-որ նշանակություն է ունենում: Երբ մեծ թվով մարդիկ գրում են մեկնաբանություններ քաղաքական ինչ-որ իրադրության հետ կապված, դա արդեն իսկ մեծ ազդեցություն է ունենում քաղաքական գործիչների վրա: Եվ այստեղ մենք գործ ունենք ինտեգրացիայի հետ:

Այժմ անցնենք գիտությանը: Գնալով ավելի ու ավելի անհնար է դառնում ուսումնասիրել և զարգացնել «մաքուր գիտությունը», քանի որ արդյունաբերությունն ու գիտությունը շատ են մոտեցել: Արդյունաբերությունն է թելադրում, թե ինչ է պետք անել: Ինչ-որ առումով ես հավատում եմ, որ մենք մուտք ենք գործում Վերածննդի նոր դարաշրջան: Քանի որ անհատներն այսօր հզոր են, նրանք դարձել են քվանտային, ուստի ձեր գործողությունները միահյուսված են: Դուք կապակցում եք ձեր հետազոտությունը, ուսումնառության գործընթացը: Այդ հետազոտությունը շատ մոտ է արդյունաբերությանը: Օրվա վերջում դուք այս ամենը կապակցում եք ձեր կյանքի մյուս ոլորտներին՝ արվեստ, երաժշտություն: Դուք սկսում եք անհատապես ապրել այնպես, ինչպես Վերածննդի դարաշրջանի հռչակավոր մարդիկ: Օրինակ՝ Լեոնարդո դա Վինչին ոչ միայն նկարիչ էր, քանդակագործ, այլ նաև՝ մեծ գիտնական, ինժեներ: Ուստի ձեզ համար գալիս է Վերածննդի ժամանակաշրջանը: Հույս ունեմ՝ դուք բոլորդ հաճույք կստանաք ձեր կյանքից: Ես կցանկանայի 50 տարի անց վերադառնալ այստեղ և տեսնել, թե ինչ է կատարվում:

Այսօր աշխարհում շատ բաներ միանգամայն տարբեր են՝ ներառյալ ձեր կրթության ձևը: Այսօրվա սերունդը նախքան դպրոց հաճախելն արդեն իսկ կարողանում է հաղորդակցվել գաջեթներով՝ առանց իմանալու այբուբենը: Ինչպե՞ս պետք է այս սերնդին կրթել, պահել դպրոցում 10 կամ 12 տարի՝ նրանց ստիպելով 45 րոպե նստել յուրաքանչյուր դասաժամին, երբ այդքան շատ տեղեկատվություն կա: Նրանց ստացած տեղեկությունը բացառիկ է: Մենք պետք է նորից սկսենք մտածել՝ ինչպես կրթել մեր երեխաներին: Նրանք ապագայից եկած երեխաներ են: Նրանք գիտեն՝ դեպի ուր են վազում: Այժմ մենք խնդիր ունենք այսքան տեղեկություններ ստացած երեխաներին սովորեցնել՝ ինչպես գործի դնել այն, ինչպես լինել նորարար և օգտակար ինչ-որ բան ստանալ ունեցածից, այլ ոչ 10 կամ 12 տարի նրանց նստեցնել դասասենյակներում: Ես կարծում եմ՝ յուրաքանչյուր երեխա, երիտասարդ ինչ-որ տաղանդ ունի: Եվ կրթական համակարգի մեծագույն առաքելությունը պետք է լինի այդ տաղանդը բացահայտելը: Մեկը աթոռ ստեղծելու տաղանդ ունի, մյուսը՝ երաժշտություն: Եվ կրթական համակարգում պետք է յուրաքանչյուրին քվանտային տեսանկյունից օգնել գտնելու իրենց տաղանդը և աջակցել նրանց: Երբեք մի՛ արեք այնպիսի բաներ, որոնք ձեր սրտով չեն: Սիրուց, ընտանիքից, ծնողից բացի, այս կյանքում ամենաարժեքավոր բանը ժամանակն է: Դա բացարձակ արժեք է: Ուստի երբեք չվատնեք ձեր ժամանակը. գտեք ինքներդ ձեզ:

Ես այստեղ եմ նաև ձեզ հրավիրելու Հայաստան: Այն իսկապես գեղեցիկ երկիր է: Մենք նավթ չունենք, սակայն մենք հաջողակ ենք այն առումով, որ ունենք ջուր: Մենք 5-6 անգամ ավելի շատ ջուր ունենք, քան իրականում օգտագործում ենք: Մենք ձեզանից սովորելու բան ունենք, քանի որ դուք ձեր երկրի ջրային պաշարներն ավելի լավ եք կառավարում, քան մենք: Կան բաներ, որ մենք կարող ենք ձեզանից սովորել, և ինչ-որ բան էլ մենք կարող ենք ձեզ սովորեցնել: Եկեք բացահայտենք այդ ամենը: Եվ շատ լավ կլինի, եթե մենք կարողանանք բացահայտել միմյանց ոչ միայն վիրտուալ հարթակում՝ այցելելով Google և փնտրելով տեղեկություն Հայաստանի մասին:

Մենք ապրում ենք մի աշխարհում, որտեղ միլիոնավոր հարցեր չունեն պատասխաններ: Սա նոր աշխարհ է՝ տվյալների աշխարհ: Բոլորը խոսում են այն փոքր երկրների մասին, որոնք հաջողակ են, քանի որ ունեն նավահանգիստներ: Ապագայի կարևոր և հզոր օվկիանոսը լինելու է տվյալների օվկիանոսը: Եվ ես ցանկանում եմ Հայաստանը դարձնել միջազգային նավահանգիստ տվյալների, տեղեկության, գիտության և տեխնոլոգիաների օվկիանոսում: Սա իմ երազանքն է: Եվ դրան հասնելու համար ես այստեղ եմ՝ մի երկրում, որն ունի մեծաթիվ նավաստիներ, նավապետներ, հասարակ ծովային մասնագետներ այս օվկիանոսում՝ առաջարկելու աշխատել միասին, անել մի բան, որը կարող է օգտակար լինել ձեզ, մեզ և աշխարհի համար:

Ո՞րն է գաղափարի արժեքը: Արդյո՞ք այն ունի կոմերցիոն արժեք, կարելի՞ է կանոնակարգել «գաղափարների շուկան»: Կարևոր է նոր բան ստեղծելու կարողությունը: Ձեզանից յուրաքանչյուրը պետք է դառնա իր ոլորտի Ռիչարդ Ֆեյնմանը՝ բարդությունից հասնելով պարզության, որը գեղեցիկ է:

Նոր աշխարհում ամեն ինչ շատ արագ է փոխվելու: Նորարարությունը շատ արագ է կատարվում, և մենք պետք է մեզ հարմարեցնենք թե՛ հաջողություններին, թե՛ ձախողումներին: Շատ որակներ կան, որ պետք է ձեր մեջ կարողանաք մարզել՝ 21-րդ դարում հաջողության հասնելու համար: 21-րդ դարն արհեստական բանականության և քվանտային կյանքի դարաշրջանն է:

100 տարի առաջ մեծ մտածողները բացահայտեցին, որ բնությունը դասական չէ, այլ՝ քվանտային: Ես այստեղ եմ՝ ասելու, որ, որպես նրանց համեստ ուսանող, ես ոչ միայն համաձայն եմ նրանց հետ, այլև այն զգացողությունն ունեմ, որ մենք նույնպես՝ մարդկային հասարակությունը, որը բնության մի մասն է, կրկին դասական չէ, քվանտային է: Եվ դուք այս նոր քվանտային աշխարհի դարպասների մոտ եք: Հիանալի և գրավիչ է, որպեսզի դուք ձեր ուղին գտնեք և փորձեք հասկանալ այս քվանտային աշխարհը:

Հանդիպման ավարտին Հայաստանում տեխնոլոգիաների և գիտության զարգացմանն ուղղված ATOM (Advanced Tomorrow) նախագահական նախաձեռնության և Հոլոնի տեխնոլոգիական համալսարանի միջև ստորագրվել է ակադեմիական համագործակցության զարգացման մասին փոխըմբռնման հուշագիր:

ԴԻՄՈՐԴ - 2020

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ 2020 -2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«27» դեկտեմբերի 2019 թ. N 1174-Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«Կրթության մասին» օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը *որոշում է.*

1. Հաստատել Արցախի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների առկա և հեռակա ուսուցման 2020-2021 ուսումնական տարվա մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝ Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
«27» դեկտեմբերի 2019 թվականի
N 1174-Նորոշման

Ց Ա Ն Կ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ 2020-2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1.ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
1.1ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Մրցութային			Ոչ մրցութային
1	2	3	4	5	6
011301.00.6	**Ընդհանուր մանկավարժություն**				
	011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Հլգ(գ)	Մ(գ)** կամ Օտլ (գ)**		
011401.00.6	**Մասնագիտական մանկավարժություն**				
	✹ 011401.01.6 Կենսաբանություն	Կ(գ) կամ Քգ)	Քգ)** կամ Կ(գ)**		Հլգ(գ)*
	✹ 011401.02.6 Քիմիա	Քգ) կամ Կ (գ)	Կ (գ)** կամ Քգ)**		Հլգ(գ)*
	✹ 011401.03.6 Աշխարհագրություն	Ա(գ)	Մ(գ)**		Հլգ(գ)*
	✹ 011401.04.6 Ֆիզիկա	Ֆ(գ) կամ Մ(գ)	Մ(գ)** կամ Ֆ(գ)**		Հլգ(գ)*
	✹ 011401.05.6 Մաթեմատիկա	Մ(գ) կամ Ֆ(գ)	Ֆ(գ)** կամ Մ(գ)**		Հլգ(գ)*
	011401.09.6 Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ	Սան.	ԸՖՊ		Հլգ(գ)*
	011401.11.6 Կերպարվեստ	Գծն	Գն		Հլգ(գ)*
	011401.16.6 Նախնական զինվորական պատրաստություն	ՆԶՊ (բ)	ԸՖՊ		Հլգ(գ)*
	011401.18.6 Պատմություն	ՀԺՊ(գ)	ԸՊ(գ) կամ Հլգ(գ)		Օտլ (գ)*
	011401.19.6 Հայոց լեզու և գրականություն	Հլգ(գ)	ՀԺՊ(գ) **		Օտլ(գ)*
	011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն	Ռլ(գ)	Հլգ(գ)		ՀԺՊ(գ)*
	011401.21.6 Անգլերեն լեզու և գրականություն	Անգլ(գ)	Հլգ(գ)		ՀԺՊ(գ)*
023201.00.6	**Լեզվաբանություն**				
	023201.01.6 Թարգմանչական գործ (ըստ լեզուների)	Անգլ(գ)	Հլգ(գ)		ՀԺՊ(գ)*
031201.00.6	**Քաղաքագիտություն**				
	031201.01.6 Քաղաքագիտություն	ՀԺՊ(գ)	Հլգ(գ)	Օտլ (գ)	
031301.00.6	**Հոգեբանություն**				
	031301.01.6 Հոգեբանություն	Հլգ(գ)	Օտլ (գ)	Կ(գ)**	
032101.00.6	**Լրագրություն**				
	032101.01.6 Լրագրություն	ՍԱ(գ)	Հլգ(գ)		Օտլ(գ)*
041201.00.6	**Տնտեսագիտություն**				
	041201.01.6 Տնտեսագիտություն (ըստ ոլորտի)	Մ(գ)	Հլգ(գ)	Օտլ (գ)	
041301.00.6	**Կառավարում**				
	041301.01.6 Կառավարում (ըստ ոլորտի)	Մ(գ)	Հլգ(գ)	Օտլ (գ)	
042101.00.6	**Իրավագիտություն**				
	042101.01.6 Իրավագիտություն	Հլգ(գ)	ՀԺՊ(գ)	Օտլ (գ)	
061101.00.6	**Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)**				
	061101.02.6 Ինֆորմատիկա և և կիրառական մաթեմատիկա	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*
061105.00.6	**Տեղեկատվական տեխնոլոգիաներ**				
	061105.01.6 Տեղեկատվական տեխնոլոգիաներ	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*
101501.00.6	**Զբոսաշրջություն**				

✹ *- Նշված մասնագիտություններով ԱրՊՀ առկա ուսուցման համակարգի դիմորդներն անվճար ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին մասնակցելու համար մասնագիտությունների և քննությունների ցանկում երկու աստղանիշերով նշված առարկաների համար, որպես մրցութային գնահատական, կարող են ընդունելության դիմում-հայտում նախապես հայտագրել միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի՝ այդ առարկաների պետական ավարտական քննությունների գնահատականը, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը:*

Մրցութային երկու առարկաներից միասնական քննություն հանձնող դիմորդներն օգտվում են առաջնահերթ ընդունվելու արտոնությունից:

1.2 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Մրցութային			Ոչ մրցութային
1	2	3	4	5	6
011301.00.6	**Ընդհանուր մանկավարժություն**				
	011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Հլգ(գ)	Մ(գ)** կամ Օտլ (գ)**		
011401.00.6	**Մասնագիտական մանկավարժություն**				
	011401.01.6 Կենսաբանություն	Կ(գ) կամ Քգ)	Քգ)** կամ Կ(գ)**		Հլգ(գ)*
	011401.03.6 Աշխարհագրություն	Ա(գ)	Մ(գ)**		Հլգ(գ)*
	011401.04.6 Ֆիզիկա	Ֆ(գ) կամ Մ(գ)	Մ(գ)** կամ Ֆ(գ)**		Հլգ(գ)*
	011401.05.6 Մաթեմատիկա	Մ(գ) կամ Ֆ(գ)	Ֆ(գ)** կամ Մ(գ)**		Հլգ(գ)*
	011401.16.6 Նախնական զինվորական պատրաստություն	ՆԶՊ (բ)	ԸՖՊ		Հլգ(գ)*
	011401.18.6 Պատմություն	ՀԺՊ(գ)	ԸՊ(գ) կամ Հլգ(գ)		Օտլ (գ)*
	011401.19.6 Հայոց լեզու և գրականություն	Հլգ(գ)	ՀԺՊ(գ) **		Օտլ(գ)*
	011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն	Ռլ(գ)	Հլգ(գ)		ՀԺՊ(գ)*
041101.00.6	**Հաշվապահական հաշվառում և հարկում**				
	041101.01.6 Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/	Մ(գ)	Հլգ(գ)	Օտլ (գ)	
042101.00.6	**Իրավագիտություն**				
	042101.01.6 Իրավագիտություն	Հլգ(գ)	ՀԺՊ(գ)	Օտլ(գ)	
053101.00.6	**Քիմիա**				
	053101.02.6 Դեղագործական քիմիա	Կ(գ) կամ Քգ)	Քգ)** կամ Կ(գ)**		Հլգ(գ)*
061105.00.6	**Տեղեկատվական տեխնոլոգիաներ**				
	061105.01.6 Տեղեկատվական տեխնոլոգիաներ	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*

2. «ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
2.1 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Մրցութային			Ոչ մրցութային
1	2	3	4	5	6
041801.00.6	**Ագրոբիզնես**				
	041801.01.6 Ագրոբիզնես	Մ(գ)	Հլգ(գ)	Օտլ (գ)	
061105.00.6	**Տեղեկատվական տեխնոլոգիաներ**				
	061105.01.6 Տեղեկատվական տեխնոլոգիաներ	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*
071601.00.6	**Տրանսպորտային համակարգեր**				
	071601.03.6 Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում	Մ(գ) կամ Ֆ(գ)	Ֆ(գ)** կամ Մ(գ)**		Հլգ(գ)*
071602.00.6	**Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ**				
	✹ 071602.01.6 Գյուղատնտեսության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*
072101.00.6	**Պարենամթերքի տեխնոլոգիա**				
	✹ 072101.01.6 Պարենամթերքի տեխնոլոգիա	Մ(գ) կամ Ֆ(գ) կամ Քգ)	Ֆ(գ)** կամ Քգ)** կամ Մ(գ)**		
073101.00.6	**Ճարտարապետություն**				
	073101.01.6 Ճարտարապետություն	Նկ	Գծ	Մ(գ) **	Հլգ(գ)*

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

073101.00.6	**Ճարտարապետություն**				
	073101.01.6 Ճարտարապետություն	Նկ	Գծ	Մ(գ) **	Հլգ(գ)*
073201.00.6	**Շինարարություն**				
	073201.01.6 Արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն	Մ(գ) կամ Ֆ(գ)	Ֆ(գ)** կամ Մ(գ)**		Հլգ(գ)*
	073201.03.6 Ջրային համակարգերի շինարարություն և շահագործում	Մ(գ) կամ Ֆ(գ)	Ֆ(գ)** կամ Մ(գ)**		Հլգ(գ)*
081101.00.6	**Ագրոնոմիա**				
	✹ 081101.01.6 Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա	Մ(գ) կամ Կ(գ)	Կ(գ)** կամ Ք(գ)**		Հլգ(գ)*
084101.00.6	**Անասնաբուժություն**				
	✹ 084101.01.6 Անասնաբուժություն	Մ(գ) կամ Կ(գ)	Կ(գ)** կամ Ք(գ)**		Հլգ(գ)*

2.2 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Մրցութային			Ոչ մրցութային
1	2	3	4	5	6
041801.00.6	**Ագրոբիզնես**				
	041801.01.6 Ագրոբիզնես	Մ(գ)	Հլգ(գ)	Օտլ (գ)	
061105.00.6	**Տեղեկատվական տեխնոլոգիաներ**				
	061105.01.6 Տեղեկատվական տեխնոլոգիաներ	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*
071301.00.6	**Էներգետիկա**				
	071301.03.6 Էլեկտրաէներգետիկա	Մ(գ) կամ Ֆ(գ)	Ֆ(գ)** կամ Մ(գ)**		Հլգ(գ)*
071601.00.6	**Տրանսպորտային համակարգեր**				
	071601.03.6 Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում	Մ(գ) կամ Ֆ(գ)	Ֆ(գ)** կամ Մ(գ)**		Հլգ(գ)*
071602.00.6	**Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ**				
	071602.01.6 Գյուղատնտեսության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*
072101.00.6	**Պարենամթերքի տեխնոլոգիա**				
	072101.01.6 Պարենամթերքի տեխնոլոգիա	Մ(գ) կամ Ֆ(գ) կամ Ք(գ)	Ֆ(գ)** կամ Ք(գ)** կամ Մ(գ)**		
073101.00.6	**Ճարտարապետություն**				
	073101.01.6 Ճարտարապետություն	Նկ	Գծ	Մ(գ) **	Հլգ(գ)*
073201.00.6	**Շինարարություն**				
	073201.01.6 Արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն	Մ(գ) կամ Ֆ(գ)	Ֆ(գ)** կամ Մ(գ)**		Հլգ(գ)*
	073201.03.6 Ջրային համակարգերի շինարարություն և շահագործում	Մ(գ) կամ Ֆ(գ)	Ֆ(գ)** կամ Մ(գ)**		Հլգ(գ)*
081101.00.6	**Ագրոնոմիա**				
	081101.01.6 Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա	Մ(գ) կամ Կ(գ)	Կ(գ)** կամ Ք(գ)**		Հլգ(գ)*

«Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի դիմորդներն անվճար ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին մասնակցելու համար մասնագիտությունների և քննությունների ցանկում երկու աստղանիշերով նշված առարկաների համար, որպես մրցութային գնահատական, կարող են ընդունելության դիմում-հայտում նախապես հայտագրել միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի՝ այդ առարկաների պետական ավարտական քննությունների գնահատականը, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը:

✹ -Նշված մասնագիտություններով անվճար ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին մասնակցելու համար, որպես մրցութային առարկաների գնահատական, դիմորդը կարող է դիմում-հայտում նախապես հայտագրել միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի՝ այդ առարկաների պետական ավարտական քննությունների գնահատականը, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը:

Մրցութային առարկաներից միասնական քննություն հանձնող դիմորդներն օգտվում են առաջնահերթ ընդունվելու արտոնությունից:

2.3 ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը
0601	Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ (ըստ ճյուղերի) (հիմնական կրթությամբ)
2202	Տեղեկատվության մշակման և կառավարման ավտոմատացված համակարգեր (հիմնական կրթությամբ)
2401	Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում (ըստ տրանսպորտի տեսակների) (հիմնական կրթությամբ)
2916	Քաղաքաշինական կաղաստր (հիմնական կրթությամբ)
3102	Գյուղատնտեսագիտություն (հիմնական կրթությամբ)
3104	Անասնաբուժություն (հիմնական կրթությամբ)
3106	Գյուղատնտեսության մեքենայացում (հիմնական կրթությամբ)

3. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

3.1 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Մրցութային			Ոչ մրցութային
1	2	3	4	5	6
011301.00.6	**Ընդհանուր մանկավարժություն**				
	011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Հլգ(գ)	Մ(գ)** կամ Օտլ (գ)**		
011401.00.6	**Մասնագիտական մանկավարժություն**				
	011401.09.6 Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ	Մասն.	ԸՖՊ		Հլգ(գ)*
	011401.16.6 Նախնական զինվորական պատրաստություն	ՆԶՊ (բ)	ԸՖՊ		Հլգ(գ)*
	011401.18.6 Պատմություն	ՀԺՊ(գ)	ԸՊ(գ) կամ Հլգ(գ)		Օտլ (գ)*
	011401.19.6 Հայոց լեզու և գրականություն	Հլգ(գ)	ՀԺՊ(գ)**		Օտլ(գ)*
	011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն***	Ռլ(գ)	Հլգ(գ)		ՀԺՊ(գ)*
031101.00.6	**Տնտեսագիտություն**				
	031101.01.6 Տնտեսագիտություն	Մ(գ)	Հլգ(գ)	Օտլ (գ)	
042101.00.6	**Իրավագիտություն**				
	042101.01.6 Իրավագիտություն	Հլգ(գ)	ՀԺՊ(գ)	Օտլ (գ)	
061105.00.6	**Տեղեկատվական տեխնոլոգիաներ**				
	061105.01.6 Տեղեկատվական տեխնոլոգիաներ***	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*

3.2 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Մրցութային			Ոչ մրցութային
1	2	3	4	5	6
011301.00.6	**Ընդհանուր մանկավարժություն**				
	011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Հլգ(գ)	Մ(գ)** կամ Օտլ (գ)**		
011401.00.6	**Մասնագիտական մանկավարժություն**				
	011401.09.6 Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ	Մասն.	ԸՖՊ		Հլգ(գ)*
	011401.16.6 Նախնական զինվորական պատրաստություն	ՆԶՊ (բ)	ԸՖՊ		Հլգ(գ)*
	011401.18.6 Պատմություն	ՀԺՊ(գ)	ԸՊ(գ) կամ Հլգ(գ)		Օտլ (գ)*
	011401.19.6 Հայոց լեզու և գրականություն	Հլգ(գ)	ՀԺՊ(գ) **		Օտլ(գ)*
	011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն***	Ռլ(գ)	Հլգ(գ)		ՀԺՊ(գ)*
031101.00.6	**Տնտեսագիտություն**				
	031101.01.6 Տնտեսագիտություն	Մ(գ)	Հլգ(գ)	Օտլ (գ)	
042101.00.6	**Իրավագիտություն**				
	042101.01.6 Իրավագիտություն	Հլգ(գ)	ՀԺՊ(գ)	Օտլ (գ)	
061105.00.6	**Տեղեկատվական տեխնոլոգիաներ**				
	061105.01.6 Տեղեկատվական տեխնոլոգիաներ***	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*

3.3 ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը
0302	Հայոց լեզվի դասավանդում (հիմնական կրթությամբ)
0303	Ռուսաց լեզվի դասավանդում (հիմնական կրթությամբ)
0307	Ֆիզիկական կուլտուրա և սպորտ (հիմնական կրթությամբ)
0312	Դասավանդում տարրական դասարաններում (հիմնական կրթությամբ)
0313	Նախադպրոցական կրթություն (հիմնական կրթությամբ)
0416	Ատամնատեխնիկական գործ (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
0601	Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ (ըստ ճյուղերի) (հիմնական կրթությամբ)
0602	Մենեջմենթ (կառավարում) (ըստ ճյուղերի) (հիմնական կրթությամբ)
0603	Ֆինանսներ (ըստ ճյուղերի) (հիմնական կրթությամբ)
2203	Հաշվողական տեխնիկա յի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում (հիմնական կրթությամբ)
2401	Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում (ըստ տրանսպորտի տեսակների) (հիմնական և միջնակարգ կրթությամբ)

4. «ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

4.1 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Մրցութային			Ոչ մրցութային
1	2	3	4	5	6
011301.00.6	**Ընդհանուր մանկավարժություն**				
	011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Հլգ(գ)	Մ(գ)** կամ Օտլ (գ)**		
011401.00.6	**Մասնագիտական մանկավարժություն**				
	011401.18.6 Պատմություն	ՀԺՊ(գ)	ԸՊ(գ) կամ Հլգ(գ)		Օտլ (գ)*
	011401.19.6 Հայոց լեզու և գրականություն	Հլգ(գ)	ՀԺՊ(գ) **		Օտլ(գ)*
	011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն	Ռլ(գ)	Հլգ(գ)		ՀԺՊ(գ)*
	011401.21.6 Անգլերեն լեզու և գրականություն	Անգլ(գ)	Հլգ(գ)		ՀԺՊ(գ)*
022802.00.6	**Կովկասագիտություն**				
	022802.01.6 Կովկասագիտություն***	ՀԺՊ(գ)	Հլգ (գ)		Օտլ (գ)*
023201.00.6	**Լեզվաբանություն**				
	023201.01.6 Թարգմանչական գործ (անգլերեն և հայերեն լեզուներ)	Անգլ(գ)	Հլգ(գ)		ՀԺՊ(գ)*
031101.00.6	**Տնտեսագիտություն**				
	031101.01.6 Տնտեսագիտություն	Մ(գ)	Հլգ(գ)	Օտլ (գ)	
041301.00.6	**Կառավարում**				
	041301.01.6 Կառավարում (ըստ ոլորտի)	Մ(գ)	Հլգ(գ)	Օտլ (գ)	
042101.00.6	**Իրավագիտություն**				
	042101.01.6 Իրավագիտություն	Հլգ(գ)	ՀԺՊ(գ)	Օտլ (գ)	
061101.00.6	**Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)**				
	061101.01.6 Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)	Մ(գ)	Ֆ(գ) կամ Օտլ (գ)		Հլգ(գ)*
061104.00.6	**Տեղեկատվական համակարգեր**				
	061104.01.6 Տեղեկատվական համակարգեր	Մ(գ)	Ֆ(գ) **		Հլգ(գ)*

☞6

ԴԻՄՈՐԴ - 2020

5☜

4.2 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Մրցութային			Ոչ մրցութային
1	2	3	4	5	6
011301.00.6	**Ընդհանուր մանկավարժություն**				
	011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Հլգ(գ)	Մ(գ)** կամ Օտլ**		
011401.00.6	**Մասնագիտական մանկավարժություն**				
	011401.18.6 Պատմություն	ՀԺՊ(գ)	ԸՊ(գ) կամ Հլգ(գ)		Օտլ (գ)*
	011401.19.6 Հայոց լեզու և գրականություն	Հլգ(գ)	ՀԺՊ(գ) **		Օտլ(գ)*
	011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն	Ռլ(գ)	Հլգ(գ)		ՀԺՊ(գ)*
	011401.21.6 Անգլերեն լեզու և գրականություն	Անգլ(գ)	Հլգ(գ)		ՀԺՊ(գ)*
022802.00.6	**Կովկասագիտություն**				
	022802.01.6 Կովկասագիտություն ***	ՀԺՊ(գ)	Հլգ (գ)		Օտլ (գ)*
031101.0.6	**Տնտեսագիտություն**				
	031101.01.6 Տնտեսագիտություն				
041301.00.6	**Կառավարում**				
	041301.01.6 Կառավարում (ըստ ոլորտի)	Մ(գ)	Հլգ(գ)	Օտլ (գ)	
042101.00.6	**Իրավագիտություն**				
	042101.01.6 Իրավագիտություն	Հլգ(գ)	ՀԺՊ(գ)	Օտլ (գ)	
061101.00.6	**Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)**				
	061101.01.6 Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)	Մ(գ)	Ֆ(գ) կամ Օտլ (գ)		Հլգ(գ)*
061104.00.6	**Տեղեկատվական համակարգեր**				
	061104.01.6 Տեղեկատվական համակարգեր	Մ(գ)	Ֆ(գ) **		Հլգ(գ)*

5. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՅՈՒՐՋՅԱՆ» ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Մրցութային			Ոչ մրցութային
1	2	3	4	5	6
021201.00.6	Դիզայն				
	021201.01.6 Դիզայն	Կոմպ	Գծն	Գն	Հլգ(գ)*
	021201.03.6 Հագուստի մոդելավորում	Կոմպ	Գծն	Գն	Հլգ(գ)*

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

(բ)	բանավոր	Հլգ	Հայոց լեզու և գրականություն
(գ)	գրավոր	Մ	Մաթեմատիկա
Ա	Աշխարհագրություն	Մասն.	Մասնագիտական
Անգլ	Անգլերեն	ՆԶՊ	Նախնական զինվորական պատրաստություն
Գծ	Գծագրություն		
Նկ	Նկարչություն		
Գծն	Գծանկար	Ռլ	Ռուսաց լեզու
Գն	Գունանկար	ՍԱ	Ստեղծագործական աշխատանք
ԸՊ	Ընդհանուր պատմություն	Ք	Քիմիա
ԸՖՊ	Ընդհանուր ֆիզիկական պատրաստություն	Օտլ	Օտար լեզու****
		Ֆ	Ֆիզիկա
Կ	Կենսաբանություն		
Կոմպ	Կոմպոզիցիա		
ՀԺՊ	Հայ ժողովրդի պատմություն		

ՇԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Ոչ մրցութային քննության գնահատականը փոխանցվում է միջնակարգ կրթության ատեստատից կամ համապատասխան ավարտական փաստաթղթից:*

***Վճարովի ուսուցման համակարգում թափուր տեղեր առաջանալու դեպքում այդ տեղերի մրցույթին մասնակցելու համար դիմորդները մասնագիտությունների և քննությունների ցանկում երկու աստղանիշերով նշված առարկաների համար որպես մրցութային գնահատական կարող են ընդունելության դիմում-հայտում նախապես հայտագրել միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի՝ այդ առարկաների պետական ավարտական քննությունների գնահատականը, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը:*

**** Ոչ պետական բուհի չհավատարմագրված մասնագիտություն:*

***** Օտար լեզու (Ռուսաց լեզու, Անգլերեն, Գերմաներեն, Ֆրանսերեն):*

Օտար լեզու մրցութային կամ ոչ մրցութային քննություն կարող է ընտրվել նշված 4 առարկաներից մեկը՝ դիմորդի հայեցողությամբ:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ 2020-2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«27» դեկտեմբերի 2019 թ. N 1175-Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը *որոշում է.*

1. Հաստատել Արցախի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների առկա և հեռակա ուսուցման 2020-2021 ուսումնական տարվա մասնագիտությունների ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
«27» դեկտեմբերի 2019 թվականի
N 1175-Ն որոշման

Ց Ա Ն Կ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ 2020-2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ Թ. ՔԱՄԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը
0402	Մանկաբարձական գործ (հիմնական կրթությամբ)
0406	Քույրական գործ (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
0418	Բուժական գործ զինված ուժերում (հիմնական կրթությամբ)

2. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԱՆՎԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը
0501	Գործիքային կատարողական արվեստ (ըստ գործիքների տեսակների) (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
0502	Երգեցողություն (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
0503	Երգչախմբավարություն (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
0504	Երաժշտության տեսություն (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
0505	Էստրադային երաժշտարվեստ (հիմնական և միջնակարգ կրթությամբ)

3. ՇՈՒՇԻԻ ԱՐՍԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ
3.1 ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Դասիչը	Մասնագիտությունը
0514	Դիզայն ըստ ճյուղերի (հիմնական կրթությամբ)
0515	Զարդարային-կիրառական արվեստ և ժողովրդական արհեստներ (հիմնական կրթությամբ)
2014	Ռադիոէլեկտրոնային տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում (ըստ ճյուղերի) (հիմնական կրթությամբ)
2808	Հագուստի մոդելավորում և նախագծում (հիմնական կրթությամբ)

3.2 ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Դասիչը	Մասնագիտությունը
0517	Գրադարանային գործ (միջնակարգ կրթությամբ)
2302	Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում (միջնակարգ կրթությամբ)

4. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՊԱՐԱՐՎԵՍՏԻ ՔՈԼԵՋ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը
0319	Պարի ուսուցում (միջնակարգ կրթությամբ)
0506	Դասական պար (4-րդ դասարանն ավարտած)
	Ժողովրդական պար (8-րդ դասարանն ավարտած)

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը
2014	Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում (հիմնական կրթությամբ)
2304	Վարսավիրական արվեստ և զարդարային դիմահարդարում (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
2311	Հասարակական սնունդ (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
2401	Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում (ըստ տեսակների) (հիմնական կրթությամբ)
2603	Փայտամշակման արտադրությունների սարքավորումների շահագործում և տեխնոլոգիա (հիմնական կրթությամբ)
2809	Կարի արտադրության տեխնոլոգիա (հիմնական և միջնակարգ կրթությամբ)

6. ՄԱՐՏՈՒՆՈՒ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը
2304	Վարսավիրական արվեստ և զարդարային դիմահարդարում (հիմնական կրթությամբ)
2401	Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում (ըստ տեսակների) (հիմնական կրթությամբ)
2704	Գինեգործություն և հյութերի արտադրություն (հիմնական կրթությամբ)
2809	Կարի արտադրության տեխնոլոգիա (հիմնական կրթությամբ)
2905	Ճանապարհաշինարարական և բարելավման աշխատանքների տեխնիկական ապահովում (հիմնական կրթությամբ)

7. «ԵՋՆԻԿ ՄՈՂՅԱՆ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը
1002	Էլեկտրասարքավորումների տեխնիկական շահագործում (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
1006	Ջերմաէներգետիկ սարքավորումների և ջերմային ցանցերի տեխնիկական շահագործում (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
1210	Մետաղների մեխանիկական մշակում հաստոցների և գծերի վրա (հիմնական կրթությամբ)
2009	Կապի միջոցների շահագործում (հիմնական կրթությամբ)
2311	Հասարակական սնունդ (հիմնական կրթությամբ)
2902	Շինարարամոնտաժային և վերանորոգման աշխատանքների իրականացում(հիմնական և միջնակարգ կրթությամբ)
2907	Ատաղձագործական, մանրահատակագործական, ապակեգործական աշխատանքներ(հիմնական կրթությամբ)
2908	Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում (հիմնական կրթությամբ)

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ- ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅՏԱԳՐՈՒՄԸ ՍԿՍՎԱԾ Է

Արցախի Հանրապետության գնահատման և թեստավորման կենտրոնը սույն թվականի հունվարի 22-ից սկսում է միջնակարգ հանրակրթական ծրագիր իրականացնող հաստատությունների (անկախ կազմակերպաիրավական ձևից) շրջանավարտների «Հայոց լեզու և հայ գրականություն», «Մաթեմատիկա», «Հայոց պատմություն», «Համաշխարհային պատմություն», «Քիմիա», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Կենսաբանություն», «Օտար լեզու» (ռուսաց լեզու, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն), «Ստեղծագործական աշխատանք» (շարադրություն) առարկաներից միասնական և կենտրոնացված (2020թ. բուհերի ընդունելության), «Հայոց լեզու և հայ գրականություն», «Մաթեմատիկա», «Հայոց պատմություն» առարկաներից պետական ավարտական քննությունների կազմակերպման գործընթացը:

Միասնական և կենտրոնացված քննություններին մասնակցելու համար շրջանավարտը (դիմորդը) պետք է լրացնի դիմում-հայտ:

2019-2020 ուստարվա շրջանավարտները դիմում-հայտը լրացնում են իրենց ուսումնական հաստատություններում, նախորդ տարիների շրջանավարտները, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտները՝ ԱՀ գնահատման և թեստավորման կենտրոնում (հասցեն՝ ք. Ստեփանակերտ, Մարտունի 97):

Միասնական և կենտրոնացված քննություններին մասնակցելու համար անհրաժեշտ է՝

- 3x4 չափսի լուսանկար,
- անձը հաստատող փաստաթղթի պատճենը,
- ԱՀ ֆինանսների նախարարությունում Գնահատման և թեստավորման կենտրոնի 915013000145 հաշվի համարին յուրաքանչյուր քննությանը մասնակցելու համար փոխանցել 1500 (հազար հինգ հարյուր) դրամ և վճարի անդորրագիրը՝ կցել դիմում-հայտին:

Միասնական և կենտրոնացված քննությունների վճարից ազատվում են հետևյալ դիմորդները՝

- 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք և մինչև 18 տարեկան հաշմանդամ երեխաները,
- ՀՀ և ԱՀ պաշտպանության ժամանակ զոհված զինծառայողների երեխաները,
- առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող մինչև 23 տարեկան անձինք:

Վերոգրյալ խմբերին պատկանող անձինք դիմում-հայտին կցում են համապատասխան փաստաթղթի պատճենը:

12-րդ դասարանների աշակերտները պետական ավարտական քննություններին հայտագրվում են իրենց ուսումնական հաստատություններում:

Դիմում-հայտերի ընդունման և պետական ավարտական քննությունների հայտագրման **վերջին ժամկետը՝ 2020թ. փետրվարի 21-ն է:**

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել (047) 97- 40 -51 հեռախոսահամարով:

«Գնահատման և թեստավորման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԱԽԱՂԻ ՄԱՍՆԱԿԻՑ

Հունվարի 21-ին ԱրՊՀ-ում անցկացվեց, իսկ հաջորդ օրը ԼՂՀ գերագույն դատարանում շարունակվեց «Շրջակա միջավայրի պաշտպանության իրավունք» թեմայով միջազգային դատախաղ: ԱՄՆ Սթեթսոնի համալսարանի նախաձեռնությամբ ավելի քան մեկ տասնամյակ անցկացվող միջազգային այս խաղ-մրցույթին Արցախը մասնակցում է առաջին անգամ: Դատախաղն անցկացվում է երկու փուլով՝ տարածաշրջանային և միջազգային: Առաջին փուլը՝ տարբեր տարածաշրջաններում: Առաջին անգամ Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային փուլն Արցախում էր: Նախաձեռնությունն ԱրՊՀ-ինն է՝ «Ամերիկայի հայ իրավաբանների ասոցիացիա»-ի հովանավորությամբ: Դատախաղի այս փուլին մասնակցեցին ԱրՊՀ, Երևանի պետական և Հայ ռուսական (սլավոնական) համալսարանների թիմերը: Ինչպես տեղեկացրեց ԱրՊՀ իրավաբան Լուիզա Ներսիսյանը, դատախաղին պետք է մասնակցեր նաև Իրանից երկու թիմ, սակայն տարածաշրջանային սրացումների հետ կապված՝ նրանք չեն կարողացել ներկայանալ:

Յուրաքանչյուր թիմում ընդգրկված է իրավագիտության բաժնի երեք ուսանող: Դատախաղը տարվում է

անգլերենով: Դատավեճը վարեցին ԱՄՆ-ից հրավիրված մասնագետները:

Միջազգային դատախաղին բազմիցս մասնակցած՝ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայի ուսանողուհի Տաթևիկ Սողոյանի խոսքով՝ ուսանողների համար այս խաղ-մրցույթը միջազգային հարթակներում կայանալու, լեզվական կարողությունները զարգացնելու, այլ երկրների իրավաբանների մտածողությանը ծանոթանալու, ընդհանրապես միջազգային իրավունքի տրամաբանությունը, ինչպես նաև մեր իրավունքը՝ որպես համաշխարհային իրավունքի մաս լինելը հասկանալու գործնական հնարավորություն է:

Կոնկրետ այս դատախաղի թեման բնապահպանական է, մասնակիցներն ուսումնասիրել են միջազգային բնապահպանական իրավունքը: Առաջադրված խնդիրները վերաբերում են կենդանիների վերացող, տեղափոխվող տեսակներին, մասնավորապես՝ գորշ արջերին, այսինքն՝ այն կենդանիներին, որոնք գրանցված են հատուկ գրքում և ժամանակ առ ժամանակ կարող են մի պետությունից մյուս պետությունը ներթափանցել՝ այդ երկրների համար առաջացնելով որոշակի խնդիրներ:

Դատավեճի ընթացքում պետք է պարզեին, թե արդյո՞ք արջերի վերացման դեմ ձեռնարկված միջոցառումներում պետք է պահպանել երկրների տարածքային ամբողջականությունը, թե՞ կողմերը կարող են համաձայնության գալ:

Հաղթած և կազմակերպիչ ԱրՊՀ թիմերն ապրիլի 2-4-ը կմասնակցեն ԱՄՆ Ֆլորիդա նահանգում կայանալիք միջազգային մրցույթին:

Սեփ. լրատվություն

ՀՈԲԵԼՅԱՆ

ԲԱԶՄԱԲԵՂՈՒՆ ՄԱՆԿԱՎԱՐԺ-ԳԻՏՆԱԿԱՆՆ ՈՒ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Բանաստեղծ, թարգմանիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԱՀ գիտության վաստակավոր գործիչ Սոկրատ Խանյանը հունվարի 22-ին դարձավ 90 տարեկան: Կյանք, որը մարդու և ժամանակի փոխադարձաբար ճիշտ գնահատման ու պահպանման իսկական օրինակ է: Մարդ, որի ժամանակը լի է և՛ տարիների բազմաձալքերով, և՛ այդ ծալքերում ամբարված գիտական, մանկավարժական և արվեստական բազմաշերտ ժառանգությամբ:

Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատում Սոկրատ Խանյանի հոբելյանի առթիվ կազմակերպված միջոցառմանը ներկա էին Արցախի թեմի առաջնորդ Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, պետական այրեր, մտավորականներ, ուսանողներ:

Շնորհավորանքի առաջին ողջույնը ԱՀ իշխանությունների անունից Ազգային ժողովի նախագահ Աշոտ Ղուլյանինն էր, որն արժևորեց հոբելյարի բազմամյա գործունեությունը. նրա 90 տարիներից 70-ը եղել են գիտական, մանկավարժական և գրական-ստեղծագործական ակտիվ գործունեության տարիներ: Աժ խոսնակի գնահատմամբ՝ այս երևույթն ինքնին արժանի է գովեստի և մեծարման, մանավանդ որ այդ յոթ տասնամյա ակտիվ գործունեությունը տեղի է ունեցել իր ծննդավայրում՝ Արցախում: Ա. Ղուլյանի կարծիքով՝ հոբելյարին միշտ առույգ ու կենսասեր պահելու, երկարակեցության գաղտնիքն էլ այս և այն հանգամանքն է, որ նա միշտ լավատես է: Լավատեսությունը նրա բնավորության ամենաամենաակներև գիծն է: Իսկ այդ լավատեսության հիմքն այն է, որ նա ամեն օր հանդիպում է Արցախ աշխարհի երիտասարդներին, ուսանողներին: Ասել է թե՝ այդ լավատեսությունը նա ստանում է մեր երկրի երիտասարդներից և ամենակարևորը՝ կարողանում է նաև փոխանցել հաջորդներին:

ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարի շնորհավորանքի խոսքը ներկայացրեց Լեզվի տեսչության պետ, բանասիրական գիտությունների թեկնածու Արտակ Ղուլյանը:

Ս. Խանյանի կենսագրությունը միահյուսված է ԱրՊՀ անցած ճանապարհին և անվանը: Նա կեսդարյա կենսագրություն ունեցող մայր բուհի առաջին դասախոսներից է և բուհի անցած ճանապարհի շինարար, որ շարունակում է կառուցել նաև այսօր:

ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանն իր շնորհավորանքի խոսքում ասաց.

- Այսօր աննախադեպ տոն է Արցախի պետական համալսարանում: Աննախադեպ՝ մի քանի առումներով. աննախադեպ, քանի որ մենք նշում ենք հոբելյանը մի հոբելյարի, որը 90 տարեկանում նույն եռանդով շարունակում է իր աշխատանքն ու գործունեությունը, ինչ որ՝ տասնամյակներ առաջ: Նշում ենք հոբելյանը մի վառ անհատականության, որն Արցախի մայր բուհի ստեղծման առաջին օրից դասախոսում է համալսարանում, և նշում ենք հոբելյանը մի հոբելյարի, ով արդեն ունի 70 տարվա գիտամանկավարժական և ստեղծագործական աշխատանք:

Դժվար է գերագնահատել Սոկրատ Աղալարիի գործունեությունը և դժվար է հանպատրաստից թվարկել այն դասընթացները, որ նա վարել է ԱրՊՀ-ում. լեզվաբանություն, գրաքննադատություն, գրականագիտություն, 19-րդ դարի հայ գրականություն, նորագույն շրջանի հայ գրականություն, բանահյուսություն, հրապարակախոսություն: Դժվար է հանպատրաստից թվարկել նաև նրա աշխատությունները՝ 20-ից ավելի գիտական, նույնքան՝ ստեղծագործական աշխատանքներ, 200-ից ավելի հրապարակախոսական, գիտական, ուսումնամեթոդական և ուսումնագիտական հոդվածներ:

Այսօր ԱրՊՀ-ում Ս. Խանյանը դասավանդում է ուսանողների, որոնք ծոռներն են իր նախկին ուսանողների: Դժվար է թվարկել նաև Ս. Խանյանի՝ տասնամյակների ընթացքում ստացած պատվոգրերը, պետական պարգևները, մեդալները. խորհրդային տարիների տեղական կառույցների պատվոգրերից մինչև անկախ Արցախի Հանրապետության «Մեսրոպ Մաշտոց» շքանշան, ԼՂՀ գիտության վաստակավոր գործչի կոչում:

Ռեկտորը հայտարարեց, որ ԱրՊՀ գիտխորհրդի որոշմամբ Ս. Խանյանին շնորհվել է Արցախի պետական համալսարանի բարձրագույն՝ պատվավոր պրոֆեսորի կոչում: Ս. Խանյանը առաջին համալսարանականն է, որն արժանանում է այդ բարձր կոչմանը: Ա. Սարգսյանը նաև տեղեկացրեց, որ առաջիկայում համալսարանում կազմակերպվելու է հանրապետական գիտաժողով՝ նվիրված Ս. Խանյանի 90-ամյակին:

Արվեստասեր, արվեստաճանաչ, արվեստը գնահատող և մշակութային կյանքի ակտիվ մասնակից. այս տեսանկյունից գնահատեց հոբելյարի գործունեությունը ԱՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարար Լեռնիկ Հովհաննիսյանը: Ս.Խանյանն իր աշխատանքային գործունեությունն սկսել է մշակույթի ասպարեզից՝ լինելով իր հայրենի Աղբուլաղ (այժմ՝ Ակնաղբյուր) գյուղի ակումբի վարիչ. «Ամբողջ կյանքում Ս. Խանյանին ուղեկցել են մշակույթը, գիտությունը և սերը հայրենիքի նկատմամբ, և նրա ամբողջ ստեղծագործական աշխատանքը նվիրված է մշակույթին, գիտությանը և հայրենիքին»:

ԱրՊՀ գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի պրոֆեսոր, բանասիրական գիտությունների թեկնածու Անահիտ Աթայանի զեկուցումը և հղված ուղերձներն ամբողջացրին հոբելյարի կենսագործունեությունը:

«Ողջունելի է, որ բազմավաստակ գրողը, բանաստեղծն ու գիտնականը այսօր էլ երիտասարդական ավյունով ու եռանդով շարունակում է իր ստեղծագործական բեղմնավոր աշխատանքը՝ գրեթե ամեն տարի հանրությանը ընծայելով գիտական նոր ուսումնասիրություն կամ բանաստեղծությունների նոր ժողովածու: Ստեղծագործական գործունեության ընթացքում Ս. Խանյանը ընթերցողի սեղանին է դրել շուրջ երեք տասնյակ բանաստեղծական ժողովածուներ, 40-ից ավելի գրականագիտական ուսումնասիրություններ: Ուշագրավ աշխատությունների մեջ մասնավորապես առանձնանում են «Հրանտ Մաթևոսյանի գրական հայացքները», «Հայ գրականության գերաստղը. Սերգեյ Սարինյան». «Մաքսիմ Հովհաննիսյան. «Լեռնաղբյուրի վիպաշխարհը», «Միջնադարյան հայ առակագրություն. Մխիթար Գոշ, Վարդան Այգեկցի», «Թոնդրակյան շարժման շիրազյան մեկնաբանություն», «Հովհաննես Թումանյան. ժողովրդի կենսափիլիսոփայության ջահակիրը», «Վարդան Հակոբյանի ստեղծագործությունը», «Մարտնչող գրականություն» և այլ ուսումնասիրություններ: Շարունակելով հայ պոեզիայի լավագույն ավանդույթները՝ Ս.Խանյանը հարազատ է մնացել իր նախասիրություններին և արարել գեղարվեստական հետաքրքիր ստեղծագործություններ: Նրա պոեզիան բարձր են գնահատել Նաիրի Զարյանը, Սևակ Արզումանյանը, Հրաչյա Բեգլարյանը, Մաքսիմ Հովհաննիսյանը և ուրիշներ: Գրական, գիտամանկավարժական և հասարակական գործունեության համար Ս.Խանյանը պարգևատրվել է «Մեսրոպ Մաշտոց» շքանշանով, «Մարշալ Բաղրամյան» մեդալով, իսկ 2012թ. «Մարտնչող գրականություն» աշխատության համար նա արժանացել է ԼՂՀ գրողների միության մրցանակին: Պարգևատրվել է նաև ՀՀ գրողների միության «Գրական վաստակ» մեդալով: Ակնառու է Ս. Խանյանի գրական և գիտամանկավարժական վաստակը, առինքնող՝ նրա մարդկային կերպարը»,- ԱՀ և ՀՀ գրողների միությունների այս ուղերձները ներկայացնող՝ բանաստեղծ Ռոբերտ Եսայանը գրականության և գրականագիտության զարգացման գործում ունեցած նշանակալի վաստակի համար Ս. Խանյանին հանձնեց Արցախի գրողների միության և Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի պարգև՝ «Գրիգոր Նարեկացի» մեդալը:

Գորիսի պետական համալսարանի ռեկտոր Արտուշ Ղուկասյանի հղած ուղերձում, որը ներկայացրեց պրոռեկտոր Թեհմինա Մարությանը, մասնավորապես ասվում է.

«Դուք վաղուց հեղինակավոր ներկայություն եք մեզանում՝ իբրև գրականագետ, գրաքննադատ, բանաստեղծ, երկարամյա մանկավարժ, մշակութային, գրական ձեռնարկների փնտրված բեմախոս, իբրև զտարյուն մտավորական, որ իսկապես արժանի է սրտառուչ գնահատության: Կյանքի երկարամյա, իմաստալից ճանապարհ անցնելով՝ Դուք այսօր մեր կողքին եք գրական-ստեղծագործական լիության մեջ, երիտասարդական ավյունով, իրավ հայի, գիտնականի արժանապատիվ կեցվածքով, մշակութային բարձր գիտակցությամբ, հանրանվեր մարդու հավաքական մտահոգություններով ու հանձնառություններով:

Որպես հայ գրականության նվիրյալ, Արցախի հայրենապաշտ զավակ և պարզապես մարդկային բարձր նկարագրով օժտված անձնավորություն՝ Դուք ծանրակշիռ ներդրում ունեք հայրենական գիտության ու մշակույթի զարգացման գործում:

Ձեր գործունեության մեջ ցայտունորեն առանձնանում են երկու գլխավոր կոչումներ՝ գիտնական, գիտակրթական գործի հմուտ կազմակերպիչ: Սիրել, նվիրվել, գնահատել, լինել պատասխանատու ստանձնած առաքելության մեջ. այդպիսին է Ձեր տեսակը: Ձեր օրինակով տասնամյակներ շարունակ սովորեցրել եք նվիրվել հայրենիքին, հանրօգուտ աշխատանքին, պատվով ու մասնագիտական բարձր պատրաստվածությամբ ծառայել հանրությանը:

Ձեր խոսուն կենսագրությունն ու գիտական վաստակն արդեն ցուցանում են այն մեծագույն ջանքերը, որոնք դժվարին, օրհասական տարիներին անգամ ի սպաս եք դրել հայրենիքի կրթադաստիարակչական գործունեության կազմակերպման ու կայացման գործին»:

Արցախի մշակութային անցուդարձը Ս.Խանյանի հետաքրքրությունների տարածքում միշտ կա: Եվ պատահական չէ Ստեփանակերտի Վահրամ Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի կոլեկտիվի ջերմ ուղերձը հոբելյարին ԼՂՀ մշակույթի վաստակավոր գործիչ, թատրոնի գեղարվեստական մասի վարիչ Կարինե Ալավերդյանի ներկայացմամբ. «Թատերարվեստը Ձեր գրական, մանկավարժական և հասարակական բեղուն գործունեության անքակտելի մասն է: Դուք մեր թատրոնի լավագույն բարեկամներից եք, երկար տարիներ նրա գեղարվեստական խորհրդի անդամն եք եղել, որի նիստերին բախտ ենք ունեցել լսելու Ձեր՝ կյանքով իմաստնացած հեղինակավոր մարդու խոսքն ու խորհուրդները: Դուք սրտանց ուրախացել եք մեր հաջողություններով, ցավել թերացումների համար, իսկ եթե մեզ մոտ բեմադրությունները հաջողվել են, անպայման թատերախոսություններ եք հեղինակել և պատմությանը հանձնել բեմարվեստի հիշարժան գործեր: Դուք հեղինակ եք բազում թատերախոսությունների, դիմանկարների, մենագրությունների, բուկլետների, գրել եք նաև չափածո պիես՝ «Ամարասի կանթեղը»՝ նվիրված Հայոց գրերի գյուտի 1600-ամյակին: Այն բեմադրվել է մեր թատոնում 2005թ.: Ցուցադրվել է բացօթյա՝ Ամարասի պարիսպների տակ: Հազարավոր արցախցիներ են նայել այդ ներկայացումը, որը դարձել է մշակութային երևույթ մեր հանրապետության կյանքում:

Դուք մեզ համար լավատեսության, աշխատասիրության, կենսասիրության լավագույն օրինակ եք: Գիտեք գինը Աստծո տված յուրաքանչյուր օրվա և անիմաստ չեք վատնում ոչ մի օր, ժամ, րոպե անգամ: Գիտեք նաև ապրել ու ապրեցնել Ձեզ շրջապատող մարդկանց, նրանց մեջ տեսնել լավը և գնահատել ճիշտ ժամանակին, բարի խոսք ասել, ոգևորել, խրախուսել, ողջերթ մաղթել, միաժամանակ ընդունել նորը, առաջավորը: Ասել է թե՝ քայլել կյանքին համընթաց: Կարծում ենք, որ հենց դա է Ձեր երկարակեցության և երջանիկ լինելու բանաձևը: Մենք բոլորս Ձեզնից սովորելու շատ բան ունենք: Ուստի յուրաքանչյուր հանդիպում Ձեզ հետ փոքրիկ տոն է, քանզի վարակում եք մեզ Ձեր էներգիայով, դրական լիցքերով և կյանքի նկատմամբ ունեցած սիրով:

ՍՈԿՐԱՏ ԽԱՆՅԱՆ - 90

ԽՈՀԵՐԻՍ ԱՇԽԱՐՀՈՒՄ

ԲԱՆԱՍՏԵՂԾ ԸՆԿԵՐՈՋՍ

Ոչ առաջինն ենք ու ոչ վերջինը,
Մեր մեծերի պես մենք էլ կգնանք,
Խնդրենք Աստծուն՝ ապավինի մեզ,
Մեր մեծերի պես մենք էլ սուրբ մնանք:
Մեր մեծերի պես հասկանանք սերը,
Սիրո սերուցքով պահենք տեղ ու տուն,
Աստծո տվածը համարենք մերը,
Երկրի զինվորը դառնանք մշտարթուն:
Մեր համբույրներից սերենք որդիներ
Ու ծիածանվենք թոռ ու ծոռներով,
Թոռ ու ծոռան հետ երգենք ու պարենք
Ու հպարտանանք մեր սեգ լեռներով:
Հպարտանալը պետք է ու շոյող,
Երկրի տերերը թոռներն են դառնում,
Կյանքի մեծ դասը դարձնենք ականջօղ՝
Լեռներ ու թոռներ մեկտեղ են հառնում:
Ոչ առաջինն ենք ու ոչ վերջինը,
Երկրի տեր դարձնենք ծնվող նորերին,
Մենք էլ մեր աչքը դրսում չպահենք՝
Լեռներին կառչած, առանց թոռների:

ՀՈՐՍ

Անունս ընտրեցիր դու՝ ինքդ
Ու երգի փոխեցիր շուրթերիդ,
Անունս դարձրիր երկինքդ,
Հերոսը դարձրիր գրքերիդ:
Հեքիաթներ հյուսեցիր իմ անվամբ,
Իմ անվամբ բացեցիր նոր ճամփա,
Հեռացա, մնացիր դու մենակ,
Չդարձա կուռ վեմը մեր հին տան:
Առանց ինձ այգի գցեցիր
Ու ծառեր կոչեցիր իմ անվամբ,
Հույսերդ եղան ցիրուցան,
Երբ կորցրի կածանը մեր տան:
Օրերը դարձան քարավան,
Տունդարձի Նառը չդարձա,
Երկիրս շենշող հացավան,
Բայց ուղիս մուրալով անցա:
Ու հիմա ես էլ եմ ծերացել,
Ձմեռ եմ՝ քո ձմռան առջև,
Առանց քեզ ինչքան էլ զորանամ,
Լեռնային արծիվ եմ՝ առանց թև:
Խորհուրդդ հիմա եմ հասկանում,
Խորհուրդդ՝ իմասուն, աստղածիր.
«Ուզո՞ւմ ես ծածանվի անունդ,
Քո երկրում տանտերդ դարձիր»:

ԱՅՍՏԵՂ ՀԱՅԱՍՏԱՆՆ Է

Ակադեմիկոս կոմպոզիտոր
Ռոբերտ Ամիրխանյանի խոսքը

Այստեղ Հայաստանն է՝ Արցախ անունով,
Հայ են դարերն ու ողջ գերդաստանը,
Քայլում է Հայկյան Առանի հունով,
Այստեղ զգում եմ պապերիս տանը:

Այստեղ Հայաստանն է՝ Վաչագան Արքայի
Օրենսգիրքն ու գծած սահմանը,
Ապու Մուսեի թուրն է հաղթական,
Այստեղ զգում եմ դյուցազնատանը:

Այստեղ Հայաստանն է՝ Սուրբ հացը ափին,
Հացը մոռացար, բուրդ է քո բանը,
Թանկ հյուր ես անգամ թոնրատան ճամ-
փին,
Տատիս եմ տեսնում ես թոնրատանը:

Այստեղ Հայաստանն է՝ թխաչ խաղողի,
Կարմրաթուշ նռան ծով այգեստանը,
Գինին ըմպում են հաշտ ու սիրալիր,
Իմ երգն եմ լսում ես գինետանը:

Այստեղ Հայաստանն է, Սասնա թրով են
Պաշտպանում Հայոց անառ սահմանը,
Քաջեր են ննջում խաչքարերի տակ,
Այստեղ զգում եմ ինձ սրբատանը:

Այստեղ Հայաստանն է՝ հավերժ իր երթում,
Ձանգը չի լռում Ձանգատանը,
Այստեղ իմ հոգին, իմ սիրտն է երգում,
Այստեղ զգում եմ իմ երգատանը:

ԱՐՑԱԽ

Թե ցավիդ հասու չլինեմ,
Բալասան չդառնամ վերքիդ,
Ինչքան էլ անունդ հոլովեմ,
Չեմ դառնա կարոտը երգիդ:
Թե կանչիդ հասու չլինեմ,
Զինվորը չդառնամ արժանի,
Ասել է՝ մենակ եմ թողել քեզ,
Մենակ եմ թողել՝ սահմանիդ:
Թե ջանքիդ հասու չլինեմ,
Չդառնամ հնձվորը արտիդ,
Ինչքան էլ ցորենդ երգեմ,
Չեմ դառնա ցորենը փառքիդ:
Թե ձմռանդ հասու չլինեմ,
Ծխանիդ ծուխը չդառնամ,
Ոչ գարնան բուրմունքդ կլինեմ,
Ոչ շոգդ՝ բարեբեր ամռան:
Առանց ինձ աշունդ կծփա,
Մառանդ կլցվի առանց ինձ,
Պատմության էջերդ կլցվեն,
Անունդ կհնչի առանց ինձ…
Բայց հոգուս մի ցավ կչոքի,
Որ կյանքում չդարձա քո որդին:

ՆԱՀԱՏԱԿՆԵՐԸ

Նահատակները չեն մեռնում երբեք,
Նրանք ծուլվում են երկրի սարերին,
Նահատակները դառնում են օրհներգ՝
Շուրթերի վրա գալիք դարերի:
Ծլարձակում են ամեն մի գարնան,
Ամեն մի գարնան բերում նոր անուն,
Նահատակները քաջերն են դարի,
Ու նրանցով է կյանքը նորանում:
Ամեն մահատակ մի տան որդի է,
Մի տան ճրագ է, մի օջախի սյուն,
Բայց մարտի դաշտում սիրտը վառելով,
Ողջ ժողովրդի որդին է դառնում:
Դառնում է խորհուրդ, դպրոց ու մատյան,
Դառնում է ազգի դրոշ ու պատիվ,
Սասնա թրի պես չի մտնում պատյան,
Շառաչում է հար մարտերում անթիվ:
Նահատակները առասպելվում են
Ու ճամփա գնում ապրողների հետ,
Այո, առանց սուրբ նահատակների
Չեն ծիածանվում հաղթանակ ու երգ:
Նահատակները չեն մեռնում երբեք,
Նահատակները դառնում են օրհներգ:

ԱՍՏՎԱԾ ԲԱՐԻ Է

Թոռը նետվում է գիրկը պապիկի,
Չգիտեմ՝ Աստված պա՞պն է, թե՞ թոռը,
Տեսնես իր գահին առանց թոռների
Ինչպե՞ս է անցնում Աստծո օրը:

Մարդի՛կ, աղոթենք բարեսիրտ Աստծուն,
Թող օգնի՝ բազում թոռան տեր դառնանք,
Առանց թոռների չենք դառնա ածու,
Ինչքան էլ կյանքում առնենք մեծարանք:

Աստված բարի է՝ ինձ կհասկանա,
Ես քար չեմ նետում նրա սուրբ գահին,
Մեր հողը սնող ցորեն հասկ է նա,
Նա է վառ պահում հույսը աշխարհի:

Մարդիկ, աղոթենք բարեսիրտ Աստծուն,
Օջախ ունենանք թոռներով լիքը,
Առանց թոռների չի լինի ածու,
Չի լինի անգամ Աստվածը՝ ինքը:

Աստված բարի է, ինձ կհասկանա,
Թոռ չունեցողը չի աստվածանա:

ՑԱՎԻ ՃԻՉ

Կնոջս՝ 20-րդ դարի լավագույն մանկա-
վարժ Մարգո-Ահարոնյան-Խանյանի սուրբ
հիշատակին

Զրույցս հիմա պատկերիդ հետ է,
Հուշերիդ հետ է ու ժպիտներիդ,
Կարոտի փոխված այտերիդ հետ է,
Լույսերիդ հետ է ու շուրթերիդ:

Երազս հիմա ասք-առասպել է,
Առավոտներս՝ կարոտի կամար,
Ձերմ «բարի լույս»-ը իմ մոլորված է
Քո անվերադարձ կորստի համար:

Երդումս հիմա կարոտաբույր է,
Խոստումս, որ քեզ հիշեմ օրն ի բուն,
Սիրո տողերս հուշի համբույր են,
Առանց քո շնչի՝ պռատված մի քուն:

Երգերս հիմա արցունքոտված են,
Ճամփաս՝ դեպի քեզ արտասվող երակ,
Տարիներ փնջած սիրո հեքիաթ են,
Կարոտի փոխված անմարում կրակ:

Քեզ գտել էի իմ խոցված ճամփին,
Ու դարձել էիր իմ կյանքը աստղոտ,
Դու իմ կենսառաք, մայր մտած արփի,
Իմ ցավի փոխված անմարում կարոտ:

ԱՌԱՆՑ ՔԵԶ

Առանց քեզ էլի եռում է կյանքը,
Ու թևեր առած սրտերի հետ է,
Մի տեղ կամարվում, մի տեղ հևում է,
Մի տեղ էլ սառած սրտերի հետ է:

Մի տեղ սեղանին թառած ջերմ ժպիտ,
Արբունքի ծով է ու սիրտը բաց է,
Մի տեղ՝ սպեղանի դառած տաքուկ գիրկ,
Մի տեղ՝ տխրադեմ և աչքը թաց է:

Մի տեղ լուսայգ է և արևի շող,
Բարությամբ օծված թեժ «բարի լույս» է,
Մի տեղ խոցոտված սրտի սառը դող,
Արտասվող մոմ ու արցունքոտ հույս է:

Մի տեղ ճամփա է, երազ-թռիչք է,
Սարից սար ձգված սիրո ծիածան,
Մի տեղ ցավախեղդ դառը խմիչք է,
Մի տեղ՝ կորուսյալ, սիրո վառ կածան:

Մի տեղ բաց դուռ է ու շողոտ բակ է,
Բարեբեր գործ է, ընկերների կանչ,
Մի տեղ մրմուռ է, կարոտ-կրակ է,
Մի տեղ՝ հուշերի զույգափունջ կակաչ:

Ինչ արած, սա է օրենքն Աստծո,
Դրախտից դժոխք պարզված Աստծո ձեռք,
Պիտի գոհանանք Նրա տվածով
Ու չմոռանանք իրարու երբեք:

Մի ցանկություն ունենք միայն. որ այդ տոնը ինչքան հնարավոր է, երկար ու երկար տարիներ շարունակվի»:

Իրենց սրտի խոսքն ասացին Արցախի գիտական կենտրոնի տնօրեն Ստեփան Դադայանը, «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի ռեկտոր Դոնարա Գաբրիելյանը, բանաստեղծուհի Ծովինար Բաղդասարյանը: Վանաձորի պետական համալսարանի պրոֆեսոր, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վանո Եղիազարյանի ողջույնի խոսքը գեղարվեստական էր՝ լոռեցու հումորով:

Սոկրատ Խանյանի ամենամեծ ստեղծագործությունը նրա ընտանիքն է: Նա մեծ գերդաստանի հայր է: Ավագ որդին՝ Համլետ Խանյանը, Մոսկվայի ավիամոդելների կենտրոնական ինստիտուտի ավագ գիտաշխատող է, ֆիզիկոս: Սուրենը պատմաբան, բանաստեղծ, ազգագրագետ է: Կարենը Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի դոցենտ է, բանասիրական գիտությունների թեկնածու: Դուստրը՝ Կարինեն, մայրն է հայտնի դաշնակահար, միջազգային մրցույթների դափնեկիր Հայկ Մելիքյանի:

Երեկոյին որդիական ողջույն հղեց Համլետ Խանյանը, որը Ս. Խանյանին բնութագրեց որպես ծնող և հայր՝ բառի լայն իմաստով, որպես օրինակելի որդի, թոռ և նախաթոռ իր հոր ու պապի և տոհմի հիմնադիրներից: Բեմում իսկական արցախյան երկարակեցության պատկեր էր. 70-ամյա շեմին գտնվող սպիտակափառ որդին երջանիկ է՝ իրեն երեխա զգալով 90-ամյա հոր կողքին: «Բազմաթիվ կոչումների կողքին հայրս հիրավի վաստակել է «այր իմաստուն», «տոհմապետ», «լուսավորիչ» հնչեղ կոչումները»,- ասաց նա՝ վերջում ընթերցելով հոր մի բանաստեղծություն, հնչեցնելով դա որպես իր խոսքը՝ ուղղված հորը.

ԵՐԴՈՒՄ

Հա՛յր իմ, Աստծո ի՛մ բարի պարգև,
Հպարտ եմ, ուրախ, որ դու իմ հայրն ես,
Իմ հաղթ թևերը դու ես պարգևել,
Դու իմ Թարթառն ես, իմ Մռով սարն ես:
Երդվում եմ, հա՛յր իմ, ես այնպես ապրել,
Որ նաև ինձնո՛վ դու հպարտանաս:
Որ ինչպես ես եմ թև առնում քեզնով,
Դու էլ ինձանո՛վ երջանիկ դառնաս:
Որ հայր ու որդի քայլենք միշտ հպարտ,
Հենց դրանո՛վ է Արցախը անպարտ:

Հոբելյարի ստեղծագործություններից ասմունքեցին ԱՀ ժողովրդական արտիստ Քաջիկ Հարությունյանը, վաստակավոր արտիստ Սամվել Եվրիյանը, ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու Սիրուն Բաղդասարյանը՝ մի խումբ ուսանողների հետ:

Երեկոյի մշակութային զարդը հոբելյարի թոռն էր՝ միջազգային մրցույթների դափնեկիր, ՀՀ վաստակավոր արտիստ, դաշնակահար Հայկ Մելիքյանը: «Ինձ համար պապիկը միշտ եղել է ամուր, համառ, ուժեղ մարդ, հողին նվիրյալ կերպար: Ես նրանից շատ բան եմ սովորել, առաջին հերթին՝ համբերատարություն և սեր առ կյանք»,- ասաց նա և որպես երաժշտական ողջույն ներկայացրեց հայ կոմպոզիտորների ստեղծագործություններից մի փունջ. Կոմիտաս, Բաբաջանյան, Խաչատրյան:

Ս. Խանյանի բանաստեղծությունները երգային կատարումներով ներկայացրեց Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան երաժշտական ուսումնարանի դասախոս, երգահան Նունե Սիմոնյանը:

Ասվածը թերի կմնար առանց հոբելյարի խոսքի. «Մեր գրիչը, մեր տաղանդը, մեր շնորհքը անպայմանորեն պետք է ծառայեն պետության հզորությանը, մեր ժողովրդի միասնությանը, մեր ապագային:

90 տարեկան եմ և որոշել եմ ապացուցել, որ ղարաբաղցին իսկապես երկարակյաց է, ղարաբաղցու միտքը պայծառ է ամենուրեք և մինչև՝ 120 տարի: Էլի կհանդիպենք...»:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴՊՐՈՑ

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՏԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Բոլոր մարդիկ գործունեության այս կամ այն ոլորտում ունակ են գրանցելու ստեղծագործական նվաճումներ ճիշտ պայմանների, ինչպես նաև համապատասխան գիտելիքների և հմտությունների առկայության պարագայում:

Քեն Ռոբինսոն

Դպրոցն այն արվեստանոցն է, որտեղ պատրաստվում է ապագա հասարակության տեսլականը, այն հնոցն է, որտեղ թրծվում են հոգիներ, որոնք թռիչքներ պիտի պարգևեն ապագային: Եվ ուսուցիչն է այն վարպետը, որ պետք է ստեղծագործականությամբ և մտքի ազատությամբ ոգևորի ու երևակայության սլացք հաղորդի իր սաների էությանն ու գաղափարին:

Հասարակական կյանքի մերօրյա զարգացումները նոր խնդիրներ են առաջադրում դպրոցին ու մանկավարժությանը, և դասավանդման այն ուղիներն ու մեթոդները, որոնք բավական ընդունելի, դիտարկելի և կիրառելի էին ընդամենը մեկ-երկու տասնամյակ առաջ, հիմա ծայրահեղորեն հնացած են և փոփոխության ենթակա:

Տեխնոլոգիական հնարավորությունները նոր ասպարեզ են բացում մարդու՝ դեռևս փոքր տարիքից լայն շփումներ ունենալու, համաշխարհային մասշտաբով հետաքրքիր փորձարկումներին և ձեռքբերումներին տեղեկանալու, սեփական մտքի ու երևակայության արգասիքը իրականություն դարձնելու համար: Հատկապես նման պայմաններում, երբ տեղեկատվությունն ու իմացությունը ամենակարևոր ռեսուրսներն են, անհրաժեշտ են նոր մեթոդներ ու հնարներ ոչ միայն դասավանդման և ուսումնառության որակն ու արդյունավետությունը ապահովելու, այլև սովորողների անհատական ստեղծարարությունն ու ստեղծագործականությունը խթանելու համար: Կան երկրներ, որտեղ կրթության գերակա խնդիրը հենց ստեղծարարության խթանումն է: Այսպիսի երկրներում մշակվել են այնպիսի կրթակարգեր, որոնք հնարավորություն են ընձեռում դեռ վաղ մանկական տարիքից ի հայտ բերելու անհատի նախասիրություններն ու ստեղծարարության դրսևորումները և ասպարեզ տալու դրանց զարգացման համար: Այսինքն՝ եթե սովորողն ունենում է տվյալ հարցադրման համար ոչ ստանդարտ պատասխան, այլընտրանքային լուծում, ապա ոգևորում և ուշադրություն են դարձնում նրա անհատական մտածելակերպին, նաև հնարավորություն ստեղծում նոր զարգացումների ու դրսևորումների:

Ժամանակակից դպրոցի առաջնահերթ խնդիրներից պետք է լինի ստեղծագործ և ստեղծարար անհատի ձևավորումը: Մեր հասարակությունը կարիք ունի այնպիսի մարդկանց, ովքեր կյանքի ցանկացած ասպարեզում կարող են գտնել իրենց՝ հարմարվելով և յուրօրինակ լուծումներ տալով իրենց առջև ծառացած լուրջ խնդիրներին:

Ստեղծագործականություն և ստեղծարարություն. սրանք լուրջ ուսումնասիրություն պահանջող մանկավարժահոգեբանական կարգեր են, որոնք պետք է դառնան ժամանակակից դպրոցի հիմքն ու հանգանակը: Անհրաժեշտ է սահմանել մանկավարժական ասպարեզի այն շրջանակը և գործողությունների ծրագիրը, որ կօժանդակեն անհատի ստեղծագործականության և ստեղծարարության զարգացմանը: Նմանօրինակ դասավանդման համար, իմ կարծիքով, առաջին հերթին անհրաժեշտ են.

- ստեղծագործ ուսուցիչներ.
- դասավանդման ազատականություն:

Ներկայիս առաջատար մանկավարժական միտքը հանգում է այն գաղափարին, որ ճիշտ կազմակերպված ուսումնական գործունեությունը միայն կարող է խթան հանդիսանալ և ասպարեզ տրամադրել ստեղծագործականության զարգացման համար: Եվ ժամանակն է հաղթահարելու այս առումով հասարակության պահանջարկի և դպրոցական ավանդական գործելաոճի ու մեթոդների միջև առաջացած անջրպետը:

Ստեղծագործ լինելը առաջին հերթին հնարավորություն է տալիս տեղեկույթի յուրաքանչյուր հաջորդ օղակը կապելու նախորդին՝ անկախ նրանից, թե հատկապես որ ոլորտին է վերաբերում տեղեկույթը: Յուրաքանչյուր անհատ իր ստեղծագործական մոտեցումն է ցուցաբերում գիտելիքների անվերջանալի սանդուղքը կառուցելիս, և յուրաքանչյուրի կառույցը այս կամ այն օղակում ամուր կամ փխրուն է միայն իր համար: Իսկ ամրությունը դարձյալ կախված է նրանից, թե ինչքանով է սովորողը կարողացել դրսևորել իր ստեղծագործականությունը, և գործունեության ինչ հնարավորություններ են ընձեռվել աշխատելու, նաև ինքնադրսևորվելու համար:

Ստեղծարարությունը ամենից շատ կապվում է երևակայությանը և ինքնատիպությանը: Խելացի և տաղանդավոր լինել դեռ չի նշանակում լինել նաև ստեղծարար. այսպիսի կարծիք ունեն անգլիական մանկավարժ-հետազոտողները: Իրոք, եթե ծանոթանանք աշխարհի հայտնի հայտնագործությունների հեղինակների կենսագրությանը, կհամոզվենք. նրանցից ոչ մեկը դպրոցական տարիներին իր խելացիությամբ ու մանավանդ ուսման մեջ առաջադիմությամբ չի



փայլել:

Ստեղծարարությունը կապվում է մի շարք հոգեբանական հասկացությունների հետ: Դրանք են՝

- անհատական առանձնահատկություններ.
- զգայական գործընթացներ.
- ճանաչողական ունակություններ:

Ժամանակակից մեթոդամանկավարժական միտքը առաջ է մղում այն վարկածը, որ երեխան ծնվում է հետազոտողի նախասիրություններով: Ծնված օրվանից նա անհագ պահանջ ունի դիտելու, փորձելու, հետաքրքրվելու, ինքնուրույն ինչ-որ բան փնտրելու: Այսինքն՝ նա անընդհատ ինչ-որ տեղեկույթ է փնտրում աշխարհի մասին, և սա բնական է: Պարզապես պետք է թույլ տալ անհատին ճանաչել աշխարհը, ստեղծագործաբար մոտենալ առաջադրված խնդիրների լուծմանը՝ ուղղորդելով և ստեղծագործականության զարգացման համար նոր ասպարեզներ տրամադրելով:

Հակամետ եմ նման կարծիքին, որ բոլոր մարդիկ ստեղծարարության ինչ-ինչ սաղմեր ունենում են, որոնք ժամանակի ընթացքում մարում են՝ դրսևորվելու կամ զարգանալու ասպարեզ չգտնելով կամ էլ հատուկ ուղղվածություն ձեռք բերելով՝ դառնում նախաձեռնությունների և մտահղացումների աղբյուր:

Հասարակության կենսամակարդակը հաճախ ստեղծարարության հայտնաբերմանը կամ զարգացմանը խթանող կամ խոչընդոտող առաջնային գործոնն է: Չափազանց խիստ չենք լինի, եթե ասենք, որ ներկայումս մանկահասակ երեխաների համար ստեղծված հաստատությունները հիմնականում լուծում են սոցիալական խնդիրներ, և հաճախ չեն նկատվում նրանց երևակայության կամ յուրօրինակության դրսևորումները: Հետագայում հնարավոր է այլևս անհատը չդրսևորի իր ստեղծագործ մտածողությունը և ուսումնառության ընթացքում չունենա ստեղծարար «պոռթկումներ»: Գտնում եմ, որ անհատի նման հակումների ուսումնասիրությամբ առաջին հերթին պետք է հետաքրքրենք մանկապարտեզների դաստիարակներին և դպրոցների տարրական օղակի դասվարներին: Քանի որ մանկան մոտ ստեղծարարության առաջին հայտնաբերողները կամ անտեսողները հենց նրանք են:

Դեռահասների ստեղծագործական գործունեության զարգացման ուղիները հետազոտող Դ. Բոգոյավլենսկայան եկել է այն եզրակացության, որ ստեղծագործականության զարգացումն ունի երկու վճռորոշ շրջան: Այն առաջին անգամ դրսևորվում է 10 տարեկանում, իսկ երկրորդ շրջանը կապվում է պատանեկության տարիքի հետ: Քանի որ դասավանդում եմ ավագ դպրոցում, ինձ համար ավելի մեծ հետաքրքրություն է ներկայացնում վերջին շրջանը: Ինչո՞ւ հենց 14-15 տարեկանում է ի հայտ գալիս ստեղծագործականության դրսևորման ամենաուժեղ արտահայտությունը: Ըստ իս՝ այս տարիքում դեռահասը ձգտում է ինքնուրույն լուծել իր առջև ծագած պրոբլեմներն ու խնդիրները: Եվ դա անելու համար յուրահատուկ ուղիներ է փնտրում, այսինքն՝ այդ հարցին մոտենում է ստեղծագործաբար՝ հետ մղելով նորմատիվային ստանդարտները և այն բոլոր հնարավոր լուծումները, որոնց առնչվում է հասարակական կյանքի տարբեր ոլորտներում:

Այսպիսի դեպքերում կաղապարված դասավանդումն ու դաստիարակության ավանդական սկզբունքները ավելի շատ կարող են վնասել և ստեղծագործականության դրսևորման համար բոլորովին այլ՝ հասարակությանը ոչ օգտակար ասպարեզ բացել: Ուսուցչի աշխատանքն է նման իրավիճակներում սովորողի կարիքներին ուշադրությամբ վերաբերվելը, նրան ճիշտ կողմնորոշելը և ուղղորդելը: Ստացվում է, որ դեռահասության տարիքը բավական նուրբ մոտեցում է պահանջում ուսուցչի կողմից՝ կապված թե՛ դաստիարակության և թե՛ ուսուցման ոլորտներին: Իսկ եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ այդ տարիքում դեռահասը ավարտում է հիմնական դպրոցը և հայտնվում բոլորովին նոր միջավայրում, որտեղ պետք է կարողանա ինքնահաստատվել և ինքնադրսևորվել, կհամոզվենք, որ ավագ դպրոցի ուսուցչի աշխատանքը պահանջում է մեթոդների նրբություն և գործունեության հմտություն՝ յուրաքանչյուր սովորողի անհատական ստեղծագործականության ու ստեղծարարության համար անհրաժեշտ միջավայր ու դրսևորվելու պայմաններ ապահովելու համար: Ուսուցիչն ինքն էլ ինչ-որ չափով ստեղծարար ու նորարար պետք է լինի, որպեսզի կարողանա տեսնել և գնահատել ինքնատիպը, որպեսզի կարողանա կողմնորոշել սովորողի ստեղծարար հակումները:

Ստեղծագործ ուսուցիչները և ստեղծարար ուսուցումը առանցքային դեր ունեն աշակերտների ստեղծագործականությունը խթանելու գործում: Ուսուցիչները կարող են կազմակերպել ստեղծարար ուսուցում, եթե՝

- տան բաց հարցեր.
- խրախուսեն փորձեր կատարելը և նպատակասլացությունը.
- գովասանքի արժանացնեն ոչ ստանդարտ պատասխաններ տվող երեխաներին:

Սեփական փորձառությունից ելնելով՝ ստեղծագործականության զարգացման համար կարևորում եմ նման ռազմավարության մշակումը: Առաջադրելով որևէ խնդիր կամ հարցադրումներ կատարելով՝ պետք է հնարավորություն տալ սովորողին ինքնուրույն փնտրելու պատասխանը և իր ձևով լուծում տալու: Անհրաժեշտ է տիրապետել ժամանակ տրամադրելու հմտությանը, որովհետև հաճախ հենց մտածելու համար հատկացված ժամանակից է կախված լինում լիարժեք ու սպառիչ պատասխան ստանալու հավանականությունը: Սա առաջին պայմանն է: Մյուս կարևոր հանգամանքը լսելու և մեկնաբանելու միջավայր ստեղծելն է: Միջավայր, որտեղ փոխադարձ վստահության ու հարգանքի դրսևորումը պարտադիր պայման է և՛ ուսուցչի, և՛ սովորողների համար:

Ուրեմն սովորողի ուսումնառությամբ մտահոգված ուսուցիչը պարտավոր է.

- ճանաչել և գնահատել նրա հետաքրքրությունները.
- ուսումնառությունը դարձնել հետաքրքիր և առինքնող.
- դասավանդումը դարձնել ազատ ու անկաշկանդ գործընթաց.
- ստեղծել փոխադարձ վստահության վրա հիմնված միջավայր.
- խրախուսել սովորողի ինքնուրույնությունն ու նախաձեռնողականությունը.
- հաշվի առնել յուրաքանչյուրի տեսակետը հասկացությունների և ձևակերպումների վերաբերյալ.
- վերափոխել դասապրոցեսը սովորողի մտածողությանը և երևակայությանը համապատասխան.
- ուղղորդել և զարգացնել սովորողի ստեղծարար և ստեղծագործ գործունեությունը.
- հետևել հասարակության առաջընթացին և դասավանդումը համապատասխանեցնել նրա զարգացման մակարդակին:

Ներկայումս երեխաների մոտ ստեղծարար ունակությունների հայտնաբերման և զարգացման համար հեռանկարներ է բացում «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը, որտեղ հաճախում և հաջողություններ են ունենում հատկապես այն երեխաները, ում հետաքրքրում են ժամանակակից տեխնոլոգիական հնարավորություններն ու զարգացումները, և ովքեր այս ասպարեզում դրսևորում են երևակայություն ու նախաձեռնողականություն:

Մանուշ ԲԱԼԱՅԱՆ
Ստեփանակերտի Վ. Ջհանգիրյանի անվան հ. 11 ավագ դպրոցի հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի

էսսե

ՀԱՅԱՑՔ՝ ԱՐՑՈՒՆՔԻ ՄԻՋԻՑ ԴԵՊԻ ԵՐԱՁԱՆՔ

Ընծա հորս՝ Արցախյան գոյամարտի ու Ապրիլյան պատերազմի մասնակից Գարիկ Մարտիրոսյանին

Ես հայ եմ… Ամեն անգամ այս գիտակցությունն աշխարհն իմն է դարձնում, և ուզում եմ արար-աշխարհին ավետել իմ հայկյան ծագումը: Քունքերս խփում են հոգուս խառնարանի անզուսպ ժայթքումներից և հուզավարար զգացումներից, որոնք մի փոքր անգամ կապված են հայ լինելուս փաստի և իմ՝ երբեք չբեկվող, երբեք չնսեմացող ազգային հպարտության հետ, որը չգիտես ինչպես բնորոշել: Այդ ի՞նչ աստվածային լեզու պետք է հնարես, որ բառեր հայտնագործես այդ անօրինակ զգացման համար…

Հայ, հայրենիք, հայրենասիրություն… Հարազատ են, չէ՞, այս կաթոգին բառերը մեզ՝ հայերիս համար: Հարցրո՛ւ հայրենասեր հային, և նա վստահորեն ու առանց վարանելու կպնդի, որ աչքը Երևանին հառած Արարատից, երկնի անմեկնելի խորհուրդն ու մով արբեցումը իր՝ արցունքի պես ջինջ հայելու մեջ արտացոլող Սևանից, հայրենի արնաշաղախ հողից, այն բոլոր տարրերից ու մասունքներից, որ հայրենական կարող են կոչվել, ավելի թանկ ու անաղարտ սրբություններ չկան: Հայրենիքից միայն կարող է առատորեն սրբություն ու լույս հորդել՝ անխառն ու արեգական: Հայրենիք, որի անգին ու անկաշառ սիրո համար հազարամյակներ առաջ Հայկի նետերն են անշեղորեն սուրացել, մեր արև արքայի՝ Տիգրանի փառքն է հրդեհի անզուսպ լեզվակներով բոցկլտացել դարերի ու Արամի երկրի արժանի զավակների համար, հերոս Վարդանի սուրն է Հայքի ոսկյա արևի պայծառ շիկացումի տակ շողացել՝ ընդդեմ մեր վանքերը, մեր հավատն ու ինքնությունը, հոգին ու հայրենիքը գողանալ կամեցող արյունռուշտ հորդաների ու ելուզակների:

Եկան ու մի օր երազի պես չքացան Խաթթին ու Ասորեստանը, Բաբելոնն ու Բյուզանդիան, իսկ իմ Հայրենիքն ապրեց, քանզի գիտեր ապրելու բանաձևն ու արվեստը: Մեր անպարտ ոգին, հողն ու սրբությունները հայոց օտարներն ուզեցին իրենց աշխարհանվաճ ձիերի սմբակների տակ տրորել, վիշապների պես իջան մեզ վրա և ուզեցին հրի մատնել, մոխրացնել ամենը, թունոտ օձի նման գալարվեցին մեր վզին և ուզեցին սեղմել մեր կոկորդն ու մահացու խայթել: Չկար պղնձե օձն այն մովսեսական, որին նայես ու բժշկվես մեկեն… Հազար անգամ սպանեցին մեր մարմինն ու ապշանքից քարացան. մի՞թե սպանված մարմինը շնչել կարող է… Եվ հասկանալ չկարողացան, որ թրով ոգի չե՛ս սպանի: Մտածեցին՝ հայն էլ պիտ բաբելոնվի ուր որ է, և մահախինդ քրքջացին մեզ վրա… Քրքջացին և ուրվականի պես անցան, իսկ մենք, թիկն արած մեր Մասիս սարին, ապրեցինք՝ թեկուզ դանթեաբար դժոխքների միջով անցնելով:

Մի սարսափելի գեհեն համբերատար դեռ սպասում էր, պարզվեց: Անմարդկային ու վայրագ, վայրենի գեհեն, որի կողքին Դանթեի դժոխքը միայն երանելի դրախտավայր պիտի թվար: Անասելի հարվածով մեր թիկունքին իջավ թուրքի յաթաղանը՝ արյան ծարավի… Այն թուրքի, որ ուր ոտքը դրեց, ավերակ դարձան բուրող ծաղկաստանները, հոսող արյուն դարձան կարկաչուն առվակները: Եկան հեռու տափաստաններից ու հրեշի նման Եփրատի կապուտակ ջրերը հայ մարդու արյան կարմիրով ներկեցին, Դեր Զորի անապատները շիրմաքար դարձրին հայ խղճուկ գաղթականի համար: Ո՞ւր էիք, ո՞ւր էիք այն ժամանակ, խո՛ւլ ու հա՛մր աստվածներ: Ամպերով ծածկել էիք ձեր ականջներն ու աչքերը, որ չտեսնեիք, չլսեիք ու չզգայիք, որ գազան մարդու հանցանքներից գեթ ինքներդ չցնորվեիք: Ինչո՞ւ, ինչո՞ւ պիտի մեր շուրթից հորդող ուրախ տաղը մի արյունարբու գիշեր «Դլե յամա՜ն» դառնար… Ա՜խ, ո՞ւր էր քարերով ջարդոտված այն հանճարեղ պոետը՝ Սիամանթոն, որ ևս մեկ անգամ թքեր նման արդարության ճակատին… Ու գուշակվեցին հայի ոգու վերջին մարմրումները, մինչդեռ հայն ապրեց՝ թեկուզ աշխարհով մեկ սփռվելով: Պատա՜ռ-պատառ, նշխա՜ր-նշխար այրվեց կրակների մեջ

ՄՐՑՈՒՅԹ - ՖԻԶԻԿԱ

ՈՒՍԱՆԵԼԻ, ՆՊԱՏԱԿԱՅԻՆ...

Սովորողների մոտ ֆիզիկա առարկայի հանդեպ սերն ու հետաքրքրությունն ավելի ամրապնդելու, ֆիզիկական գիտելիքների իմացությունը կարևորելու, նրա կիրառելիության սահմանները խորապես ճանաչելու ու գիտակցելու, հիմնական դպրոցում երեք տարվա ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքների մակարդակը պարզելու համար օրերս Ստեփանակերտի հ.12 հիմնական դպրոցում տողերիս հեղինակի, որը նաև դպրոցի ֆիզիկայի ուսուցչուհին է, անմիջական նախաձեռնությամբ 7-9-րդ դասարանների աշակերտներից կազմված «Պրոտոն» և «Էլեկտրոն» թիմերի միջև կազմակերպվեց մրցույթ «Ֆիզիկան և մենք» խորագրով: Բեմագիրն ընտրված էր ֆիզիկայի ուսուցչուհու «Ֆիզիկան դասերին և դասերից դուրս» մեթոդական ձեռնարկից, որում, ի դեպ, արտադասարանական աշխատանքների նպատակային կազմակերպման ուղղությամբ բավականին նյութ ժողովվելուց բացի բավարար անդրադարձ է արված ֆիզիկայի և դպրոցական մյուս դասընթացների միջառարկայական կապերի իրականացման խնդիրներին, դասն ստեղծագործաբար կառուցելուն, սովորողներին ուսումնական գործընթացին ակտիվորեն ներգրավելու մեթոդներին, գործնական աշխատանքների ժամանակ սովորողների հետազոտական ունակությունների զարգացմանը:

Միջոցառումը կազմակերպված և բարձր մակարդակով անցկացնելու համար թիմերը նախօրոք բավականին աշխատանք էին տարել. հելիումի և ջրածնի ատոմի մոդելներով պատրաստել էին տարբերանշաններ, ընտրել նշանաբան, ողջույնի խոսքեր, պատրաստել փորձեր, կահավորել թիմերի անվանումներին համապատասխան անկյուններ: Իսկ ֆիզիկայի խմբակի անդամներն ուսուցչուհու հետ միասին ֆիզիկային նվիրված աքրոստիկոսով ձևավորեցին հրավիրատոմս ու հայտարարություն և փակցրին աչքի ընկնող տեղում:

Վերջիններիս բովանդակությունը հուշում էր, որ միջոցառումը հետաքրքիր ու խոստումնալից է լինելու...

Ահա եկավ սպասված օրը: Դպրոցի ֆիզիկայի ուսուցչուհին, որը հանդես էր գալիս մրցավարի դերում, ներկաներին ծանոթացրեց միջոցառման նպատակը՝ նշելով, որ «Էլեկտրոն» և «Պրոտոն» թիմերի պատանի ֆիզիկոսները կցուցադրեն հետաքրքիր փորձեր ու կմեկնաբանեն դրանց էությունը, միմյանց կառաջադրեն հարցեր ու խնդիրներ, մի խոսքով, ցույց կտան ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքները:

Ահա «Կոկորդիլոս Գենա» մուլտֆիլմի հայտնի «Ծննդյան օր» երգի քացրահնչյուն երաժշտության տակ բեմ են բարձրանում «Էլեկտրոն» թիմի անդամները՝ հելիումի ատոմի տարբերանշանով՝ ուսուցիչ-աշակերտներին ողջունելով և ցանկանալով բարի ժամանց, առողջություն, հաջողություն, փոխարենը նրանցից ակնկալում մաղթել թիմին հաղթանակ:

Ապա համեմատություն են անում.

Էլեկտրոն են մեզ կոչում,
Փոքրիկ մասնիկ են ասում,
Պտտվում ենք շուրջ միջուկի,
Միջուկը ուսուցիչն է,
Իսկ էլեկտրոնները՝ մենք,
Որ ծգվում ենք դպրոցի կողմից:

«Թող լինի միշտ արևը» երգի երաժշտության տակ ջրածնի ատոմի մոդելի տարբերանշանով «Պրոտոն» թիմի անդամների ողջույնը կոչ էր ամբողջ աշխարհին՝ ատոմը միայն խաղաղ նպատակով տրոհելու մասին.

Թող լինի միշտ պրոտոնը,
Թող լինի էլեկտրոնը,
Ու թե ճեղքվի ատոմը՝
Խաղաղ նպատակով...

Թիմերի ողջույնի խոսքին հետևում է ստեղծագործաբար կառուցված մոնտաժը՝ նվիրված ֆիզիկային ատոմի մասնիկների հայտնագործումից մինչև նրա խաղաղ և պատերազմական նպատակներով տրոհումը: Գաղափարը մեկն էր՝ ֆիզիկական գիտելիքներ ստանալուց զատ կոչ անել մարդկությանը ատոմի ճեղքումից անջատված հսկայական էներգիան օգտագործել զուտ խաղաղ նպատակներով.

Բա՛վ է, ասենք, մարդի՛կ, հզոր տերություններ՛,
Պատերազմներ էլ չենք ուզում, թողե՛ք ապրենք,
Պատերազմը մահ է, ավեր, արյուն, արցունք,
Երկրագնդին պետք է միայն խաղաղություն...

Մրցավարի խոսքն ընդհանրացնող է. այո՛, մենք բոլորս՝ աշխարհի խաղաղասեր մարդիկ, չպետք է թույլ տանք, որ սանձազերծվի միջուկային պատերազմ, ատոմի ուժը պետք է ծառայի միայն խաղաղությանը: Կորչի՛ պատերազմը. սա՛ է մեր բոլորի իղձն ու ցանկությունը:

Սկսվում են մրցույթի հերթական փուլերը. աշակերտները կռահում են ֆիզիկական հանելուկների պատասխանները, նշում, թե ֆիզիկական ինչ սարքեր կամ երևույթներ, օբյեկտի որ հատկություններն են արտացոլված դրանցում: Ապա մրցող թիմերին տրվում են ֆիզիկական սարքեր. անհրաժեշտ է նշել, թե ինչ սարքեր են և ինչի համար են նախատեսված: Սովորողների պատասխանները հստակ են, համոզիչ ու գոհացնող. սա ժյուրիի անդամների կարծիքն էր:

Թիմերին տրվում է առաջադրանք՝ նշել մեր խոսակցական լեզվում օգտագործվող розетка, шнур, вилка, плоскогубцы, петля, ручка, электрическая плита, кипятильник, патрон, выключатель, кусачка, амортизатор և այլ բառերի հայերեն անվանումները: Մինչ թիմերը կլարեն իրենց մտքերը ֆիզիկայի դասերին ուսուցչուհու պատմածը վերհիշելու համար, մրցավարն զբաղեցնում է դահլիճին՝ հետաքրքիր փորձեր կատարելով ու դրանց պարզաբանումը հանդիսատեսի կողմից չտրվելու դեպքում բացատրում էր, փորձի էությունը հասցնում յուրաքանչյուրի գիտակցությանը:

Հետաքրքիր էր «Գտիր կապը» առաջադրանքը:

Աշակերտներից բացի հանդիսատեսը ևս իմացավ, որ առաջին ջերմաչափը ստեղծել է Գալիլեյը, Յաբլոչկովը հայտնագործել է մոմը, Լոդիգինը՝ շիկացման լամպը, իսկ որ Նյուտոնն իր հայտնի օրենքը հայտնագործել է խնձորի անկումը տեսնելով՝ շատ-շատերին էր հայտնի:

«Ով ավելի շատ կթվարկի» առաջադրանքը, որը թիմերից պահանջում էր հերթականությամբ ֆիզիկական մեծության, հասկացության, երևույթի կամ օրենքի, գիտնականի ու ֆիզիկոսի անուն թվարկել, այնքան գոհացրեց և՛ մրցավարին, և՛ հանդիսատեսին, որ թվում էր, թե սովորողների գիտելիքներն այդ առումով անվերջանալի են ու անսպառ...

Ակադեմիկոս Կապիցան նշել է, որ երեխան ֆիզիկայի փորձը հասկանում է այն դեպքում, երբ ինքն է կատարում այն և առավել լավ է հասկանում, երբ ինքն է պատրաստում փորձի համար անհրաժեշտը: Դասապրոցեսին ինքնուրույն փորձեր կատարելու և դրանց բացատրության մեջ ինքնուրույն համոզվելու դրդումն էր հենց, որ օգնեց թիմերի ավագներին ցուցադրելու «Կարտոֆիլը աղաջրում» և «Բոցավառվող թաշկինակ» հետաքրքիր փորձերը:

Իսկ դրանց ճիշտ բացատրությունը հակառակ թիմերի կողմից գոհունակություն պարգևեց բոլորին:

- «Ֆիզիկա» կոչվող մեր գիտության մեջ
Ամեն մեծություն միավոր ունի,
«Մարդկություն» կոչվող մեր բազմության մեջ
Գործն է միավոր մարդ մեծությանը:
Փոխվել է դարը, փոխվել է մարդը,
Բայց մեծությունը նույնն է մնացել:
Գործն է միավոր մարդ մեծությանը:
Որպես ապացույց բերված պնդմանը՝
«Նյուտոնն» է միավոր ուժ մեծությանը,
«Ջոուլն»՝ աշխատանքի, «Պասկալը»՝ ճնշման,
«Կուլոնը»՝ լիցքի, իսկ «Վոլտը»՝ լարման:
Ո՛ր մեկը թվենք... Որպես վերջաբան՝
Հայտնագործողի անվամբ է կոչվում
Օրենք, երևույթ և այլ ուրիշ բան...

Սա աշակերտի համեմատական բնութագիրն է ֆիզիկա-գիտություն-միավոր և մարդկություն-բազմություն-գործ հասկացությունների միջև, որին հետևում է մրցավարի հաստատումը, որ գործն է միավոր մարդ մեծությանը: Այո՛, յուրաքանչյուր մարդ գնահատվում է իր կատարած գործերով: Ապա պատգամ է հղվում աշակերտներին՝ կյանքում միշտ լինեն լավ գործերի նախաձեռնողներ, լավ գործեր կատարողներ: Իսկ դրա համար անհրաժեշտ է ինչ-որ բան, որը թևեր է տալիս մարդուն՝ սավառնելու գիտության անհուն բարձունքներում, հասնելու մեծ հաջողությունների: Իսկ թե ինչի մասին է խոսքը, սովորողները իմացան՝ վերծանելով ռեբուսը: Այն է՝ գիտելիքը ուժ է:

Ամփոփելով խոսքը՝ մրցավարը դիմեց աշակերտներին. «Այո՛, գիտելիքը ուժ է: Զինվեք գիտելիքներով, թափանցեք ֆիզիկայի զարմանահրաշ աշխարհը, սովորեք մեր ոսկեղենիկ լեզուն, եղեք անկաշկանդ ու հավատացած եղեք, որ կհասնեք ձեր նպատակին: Միայն շատ սովորեք և ամեն օր սովորեք»:

Մրցույթի ավարտին ժյուրին ամփոփեց արդյունքները, և մրցանակներ հանձնվեցին թիմերին ու ակտիվ մասնակիցներին:

Միջոցառման ավարտը ևս խորհրդանշական էր.

Մեր հարգարժան, մեր լավ ժյուրին
Տեսեք ինչքան արդար դատեց,
Մրցության մեջ պարտվող չկա
Ընկերությունն է հաղթում...

Թող լինի էլեկտրոնը,
Թող լինի միշտ պրոտոնը
Ու թե ճեղքվի ատոմը՝
Խաղաղ նպատակով:

Միջոցառումը նպատակային էր, ուսանելի, շարունակական լինելը՝ պարտադիր...

ԷԼՄԻՐԱ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ստեփ. հ.12 հիմն. դպրոցի Ֆիզիկայի ուսուցչուհի, դպրոցի տնօրեն

ու թաղվեց մոխիրներում, բայց փյունիկի պես նորեն հառնեց հանգած մոխրակույտից:

Քարերի քարավան ի՛մ Հայաստան, ապրի՛ր՝ դեմ հանդիման քարսիրտ աշխարհի, որի դեմ Դու դեռ պիտի մռնչաս խոցված առյուծի նման: Քո Արարատի ձյուների նման ադամանդվի՛ր լեռներիդ գրկում և Քո շենշող ու շլացնող փայլով կուրացրո՛ւ քեզ վրա սևեռված բոլոր աչքերը: Հավատա՛, Քեզ անգթորեն խաչ հանածն ինքը ցից կհանվե մի օր: Հավատա, որ երբեք չպիտի խավարե կենարար արևդ, ու դեռ նոր արշալույսներ պիտի գան հաղթանակազօծ: Հավատա, որ Անիից մինչ Տիգրանակերտ, Նեմրութից մինչ Սիփան հյուլե առ հյուլե կշաղկապես նորից, թե որ չէ՝ ես էլ եմ թքել արդարության ու լիրբ աստվածների ճակատին...

Խավարի միջից դեպի Լույս ծգվեց ճամփադ, արցունքի միջից դեպի Երազանք ուղղվեց հայացքդ...

Գիտե՞ք՝ ես ծնվել եմ մայիսի քսանվեցին, Ավարայրից ուղիղ և ուղիղ 1550 տարի անց: Ասեք, որ խորհուրդ չկա այս ամենի մեջ, և ես կհակառակվեմ ձեզ: Այո՛, ես Ավարայրի ժառանգն եմ, Վարդանի հպարտ զավակը: Հայրենապաշտության և հայրենապաշտպանության գաղափարներն են արեգակում մտածումս, խոհերս, սիրտս, հոգիս... Ուզում եմ ականջալուր լինել վսեմ ավարայրականչին, որ, դարերի խորությունը ճեղքելով, գալիս ու հասնում է իմ տանջահար, բայց փառապանծ ազգին ու նրա ականջին որոտում **Միասնության, Բռունցքվելու և Հայրենանվիրումի** լուսե պատգամները:

Արդ, թող անէանան իմ դեմ դարերն ու հազարամյակները, թող ի դերև ելնեն տարիներն, ու մի ակնթարթ լռեն այսօրվա կյանքի անշեղ ընթացքի հար ղողանջները, թող ժամանակը սլանա ետ ու կանգ առնի հստակահոս ջրերով օծուն Տղմուտի ափին՝ Ավարայրի եղեմում, ուր իշխան ու ռամիկ, հայր ու մայր, որդի ու զավակ մեկ ընտանիքի պես ելել էին Քրիստոսանվեր հավատն ու հայրենի հողը ոտնահարելու և ճզմելու պատրաստ խառնամբոխի ու սարսափազդու Մատյան գնդի դեմ: Ինչ է, կարծում էիք՝ հսկա փղերի ոտքերի տակ մի ամբողջ ազգ, մի ամբողջ պատմություն ու մշակույթ պիտի տրորեի՞ք, օ՜, ո՛չ, քավ լիցի... Այն, ինչը մերն է ճակատագրով, բախտի քմահաճույքով ձերը չպետք է դառնար, երբե՛ք և ո՛չ մի դեպքում...

Ուզում եմ նայել հետ և նահանջել դարերի խորքը՝ դառնալու մեկն այն ռազմիկներից Ավարայրո, որ թուրը ձեռքիս Տղմուտի գարնանաբույր ջրերի խուլ աղմուկի տակ լսեմ ու ոգեշնչվեմ Վարդանի՝ սիրտ արիացնող ու հպարտություն ներշնչող կոչով: Ուզում եմ լսել այդ կենարար խոսքը՝ ի խորոց սրտի, որ արիանամ, խիզախեմ: Չէ՞ որ իսկապես վախը միմիայն թերահավատության նշան է: Ու արիաբար մարտնչեմ ու ընկնեմ կրծքիս վերքից՝ աչքս հառած երկնի անամպ կապույտին, Հայքի շողակաթ արևին ու Չարչարյալին, որ մատնվեց Հուդայի կողմից: Փակեմ աչքերս, բայց իմանամ, որ իմ աճյունից ցորենի հասկեր են ծլելու, որ մեր անընստգյուտ վանքերը՝ խաչով պսակված, վեր են խոյանալու ու բյուրեղանալու երկնի անսահմանության մեջ...

Հայրենի՛ք, թող որ Քո անհագ սիրուց հասցնեմ Քեզ մինչ աստղերն ու աստղերից էլ դեն, ուր ասում են՝ հատվում ու վերջանում է տիեզերքը: Անգամ տիեզերքին հատում կա, իսկ Քո դարավոր երակին հատում չկա՛: Ես էլ, ինչպես նախնիս՝ Արշակունյաց հզոր արքան, ըմբոստանում եմ իմ հողի վրա, բազկատարած խնդրում, որ Տերը պահապան լինի իմ բազմաչարչար ազգին... Հայրենի հող ու ջրից եմ ես ուժ առնում՝ որպես հայ Անթեյ: Հայոց հողն է իմ սիրասուն մայրը, իմ սիրասուն Գեան...

Երկար ու ձիգ դարերի հոլովույթներում մենք հաճախ խարխափեցինք մութ բավիղներում, մեզ համար ճրագ վառող չեղավ: Եվ, թեկուզ աչքի լույսից զրկված, մենք քայլեցինք առաջ և գտանք ելքը բավիղից՝ ցրելով խավարը: Մեր առաջ բացվեց արևի հրացոլքից կարմրած հորիզոնը, բացվեց մի նոր կյանքի կարոտաբաղձ արևագալ: Անգամ հայրենաստեղծ ու հայրենակործան, գարնանաբեր ու եղեռնաբեր, խնկահամ ու արնածորան, ահե՜ղ ժամանակը անհույս տապալվեց մեր ոտքերի առաջ ու Ներոնի պես մեզ համար մեռնելուց առաջ թշվառորեն, մի վերջին շնչով շշնջաց՝ Qualis artifex pereo (Ինչպիսի՜ մեծագույն դերասան է մեռնում)... Անզոր են մեր գալիքնափայլ երթի դեմ անգամ Աստվածներն ու ժամանակը, էլ ո՜ւր մնաց թե՝ թշնամյաց բռունցքը չարանենգ ու ոխակալ...

Ու ես՝ զավակը քո ուրարտածին, աղոթքի նման մրմնջում եմ այս խոսքերը՝ եղիցի լո՜ւյս, եղիցի լո՛ւյս դարերն ի վեր ճամփեքիդ, իմ Հայաստա՛ն: **Ավեր ու կրակ տեսար, մահ ու եղեռն տեսար, բայց արցունքի միջից հայացքդ դեպի Երազանք ու Ապագա ուղղեցիր, Խավարից դեպի Լույս ուղղեցիր քայլերդ...** Ու թե հանկարծ ուզես քուն մտնել անգամ, ես՝ անհայտ որդիդ՝ Կարեն անունով, ու բոլոր որդիքդ վեհ Մեսիայի պես կկռանանք ու մեր Հայաստան-յարի ականջին կշշնջանք՝ «Տալիթա՛, կումի՛» («Աջի՛կ, վե՛ր կաց»), ու Դու կրկին ոտքի կելնես, կապրես դարձյալ...

Սխալվելու իրավունք չունենք այլևս, անմիաբան լինելու իրավունք չկա այլևս: Սպասե՛ք մեզ, մեր արարատամագնի՜ս իղձեր, սպասի՛ր մեզ, Հավիտենության՝ երազանքով ու լույսով շաղախվա՜ծ եզերք...

ԿԱՐԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ԱրՊՀ ուսանող,Սզնեքի միջն. դպրոցի շրջանավարտ

ԲԱՑ ԴԱՍ

«ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ» ԲԱԶՄԱԿՈՂՄ ԱՌԱՐԿԱ Է



Ստեփանակերտի Հայկ Բալասանյանի անվան հ. 5 դպրոցում «Տեխնոլոգիա» առարկայից անցկացված համաքաղաքային բաց դասը մի հարկի տակ էր հավաքել առարկայի՝ մայրաքաղաքի դպրոցների ուսուցիչներին, կրթության բաժնի մասնագետներին: Նման միջոցառումները նաև լավ առիթ են մասնագիտական հարցերի քննարկման, միմյանց փորձով կիսվելու: Շատերի համար էր դասը վարող Գառուն Իվանյանը «հայտնություն»՝ որպես «Տեխնոլոգիա» դասավանդող: Նրան ամենից առաջ ճանաչում են որպես «Կերպարվեստի» լավագույն ուսուցիչ: «Լուսարարի» համար դասն այս ամենով հանդերձ մասնագիտական բառերը հայեցի անվանումներով ներկայացնելու և սովորելու հիանալի հնարավորություն էր:

Ինչպես հայտնի է, «Տեխնոլոգիա»-ի ժամին դասարանը կիսվում է՝ տղաներ և աղջիկներ: Դասալսողները նախքան կմտնեին տղաների արհեստանոց, միջանցքում՝ նրա մուտքի մոտ, դասամիջոցին վայելեցին նույն դասարանի աղջիկների ազգագրական պարը: Աղջիկներն այդպես դիմավորեցին հյուրերին ու դրանով նաև բարձրացրին տղաների «մարտական» ոգին: Միջանցքի պատին աչք էր շոյում ուսուցչի ձեռքով ստեղծված «Պատանի տեխնոլոգ» պատի թերթը՝ «Սովորենք ապագայի համար» նշանաբանով:

Դասի թեման էր՝ «Բութակ, միացումների պատրաստման տեխնոլոգիան». դասաժամ, որ հետաքրքիր էր ոչ միայն բովանդակությամբ, այլև ոչ մասնագետի ականջին անծանոթ, բայց 45 րոպեի ընթացքում նրա լեզվական պաշարի սեփականություն դարձած բառերով:

Տանը հանձնարարված աշխատանքերն ստուգելուց հետո Գ.Իվանյանն անցավ աշակերտների ուղեղների մարզմանը՝ բանավոր հարցերի միջոցով նրանց գիտելիքների ստուգմանը: Հասկացվեց, որ տղաները գիտեն սղոցանյութի ստացման եղանակները (ժապավենասղոց, սկավառակային և այլն), թվարկեցին սղոցանյութերը, բացատրեցին՝ ինչ հատկանիշներ ունեն սղոցանյութերը, ինչի համար են չորացնում դրանք, կառուցվածքային ինչ տարրեր ունեն դետալները (բնիկ, բույթ, բլթանցք), դետալի միացման ինչ եղանակներ կան (մեխով, պտուտակով, սոսնձով), ինչպես են կատարում փայտանյութի թործումը՝ տաշումը (միջանցիկ և խուլ), ինչ աշխատանքներ են կատարում դուրով և իզմիրով, ըստ ձևերի ինչպիսի բութակներ և բութակային միացումների տեսակներ կան (ա. ուղիղ, կլոր, ծիծեռնակի պոչ, բ. անկյունային, միջանկյալ և արկղային):

Աշխատանքի մասին թևավոր արտահայտությունների աշակերտների իմացությունը հույս ներշնչեց, որ նրանք ականջի օղ կդարձնեն դրանք և դրանցով կառաջնորդվեն կյանքում. «Աշխատանքը գեղեցկացնում է մարդուն», «Աշխատանքը հարստացման աղբյուր է», «Արհեստը ոսկե բիլազուկ է», «Արհեստավորը մինչև կեսօր է սոված մնում», «Գործը վախենում է վարպետից», «Աշխատել կարողանալը ոսկուց թանկ է», «Աշխատասիրությունը բոլոր առաքինությունների մայրն է, ինչպես ծուլությունը ծնող է ամենայն մոլության», «Կա համբերություն՝ կլինի և ունակություն», «Աղքատը նա չէ, ով չունի, այլ նա, ով չի աշխատում», «Ժամանակը չէ մտածել այն բոլորի մասին, որոնք չունես, ավելի լավ է մտածիր, թե ինչ կարող ես անել ձեռքիդ տակ եղածով» և այլն:

Դրան հետևեց ուսուցչի մեկնաբանումը. աշխատանքը շատ կարևոր է մարդու կյանքում, կերակրում է, պահում է ընտանիքը, դպրոցը, գյուղը, քաղաքը, ընդհանրապես՝ ամբողջ երկիրը:

Դասարան-արհեստանոցում աչքի էին զարնում պաստառները՝ ստեղծված Գ. Իվանյանի կողմից: Նրանցում գերիշխում էր գծագիրը: Ուսուցիչը բացատրեց, որ գծագիր կարդալը շատ կարևոր ունակություն է: Մարդկության պատմությունը կապված է առաջընթացի՝ տեխնոլոգիաների զարգացման, նոր բացահայտումների ու հայտնագործությունների հետ: Որոշ տեխնոլոգիաներ հնանալով կորցրել են իրենց արժեքը՝ դառնալով պատմություն, մյուսները շարունակում են ծառայել մարդկությանը մինչև այսօր, ինչպես օրինակ՝ այնպիսի պարզագույն միջոցներ, ինչպիսին են անիվը, հատակ լվանալու փայտը, արկղը և այլն:

Դասի մի մասն անցկացվեց «Դե, կռահիր» պաստառի վրա աշխատելով: Գծագրում երևում են բութակային միացման մի քանի ձևեր՝ անկյունային, ծիծեռնակի պոչ, պարզ, ուղիղ: Աշակերտները տեղեկացան, որ Ճապոնայում եղել են 2000-ից ավելի միացումների ձևեր, ամեն գյուղ ունեցել է բութակային միացման իր ձևը և գաղտնի է պահել: Ուսուցիչը ցուցադրեց, թե անկյունակով ինչպես են չափում և բացատրեց, որ փայտի վրա աշխատելիս պետք է կարողանալ ճիշտ օգտագործել անկյունակը տախտակի վրա չափելու ժամանակ: Նախքան գծելը պետք է չափել քանոնով, այնուհետև անկյունակը դնելով այդ նիշի վրա՝ մատիտով գծել եզրագիծը:

Գործը հեշտացնում է թակը: Այստեղ պետք են մաթեմատիկական գիտելիքներ և համբերություն:

Ուսուցիչն անդրադարձավ տեխնոլոգիական քարտին: Բացատրեց, որ գծագիրը հատուկ լեզու է, որը հնարավորություն է տալիս տեսնելու, կարդալու և պատրաստելու իրը:

Գ. Իվանյանը օրինակներ բերեց համաշխարհային փորձից: Ամբողջ աշխարհն արագ զարգանում է գծագրի շնորհիվ: 18-19-րդ դդ. ֆրանսիական ինժեներ, գիտնական Գասպար Մոնժը տարածական երկրաչափության հիմնադիրն է: Նրա ստեղծած պրոյեկտման մեթոդը խիստ գաղտնի է պահվել որպես ռազմական մեծ նշանակություն ունեցող գյուտ: Ուսուցիչը աշակերտներին բացատրեց, որ եթե նրանք տիրապետեն տեխնոլոգիական քարտի լեզվին, աշխատելը հեշտ կլինի, կկարողանան ամեն բան պատրաստել իրենց ձեռքով (օրինակ՝ տան ջարդված կահույքը): Տեղին էր նրա մեջբերումը Պուշկինից, որում փառաբանվում են նորարարությունը, վարպետությունը, փորձը.

О сколько нам открытий чудных
Готовят просвещенья дух
И опыт, сын ошибок трудных,
И гений, парадоксов друг,
И случай, бог изобретатель.

Ուսուցիչն ապա օրինակը ցույց տվեց հաստոցի վրա քանոնի և անկյունակի օգնությամբ: Աշակերտներից յուրաքանչյուրն ընտրեց իր նախընտրած շինվածքը և կազմեց նրա էսքիզը, գծագիրը, տեխնիկական քարտը:

Հաջորդ դասին պետք է կատարեն աշխատանքի վերջնամշակում, հավաքում և սոսնձում:

Վերջում ուսուցիչը հանձնարարեց հավաքել դազգահները, գործիքները, դասավորել իրենց տեղերում:

Դասի քննարկման ժամանակ ուսուցիչներն ընդգծեցին աշխատանքային դաստիարակության կարևորությունը, որը Գ. Իվանյանի մոտ շատ լավ է ստացվում: Նրանք նկատեցին, որ արհեստանոցում ահռելի աշխատանք է կատարված ուսուցչի կողմից. բոլոր գործիքները խնամքով դասավորված են հատուկ վահանակների վրա կամ արկղերում, որ ուսուցիչն է ստեղծել: Դպրոցի տնօրեն Վ. Ղազարյանը նշեց, որ կրթօջախում գործում են տեխնոլոգիայի և կերպարվեստի խմբակներ, որոնք վարում է Գ.Իվանյանը, և շատ աշակերտներ են հաճախում: Առանց ասելու էլ ամեն ինչ պարզ էր: Դասերից հետո ականատես եղանք խմբակային պարապմունքի եկած տարբեր տարիքի երեխաների: Պարզվեց, որ առաջին չորս այցելուները Ազգային հերոս Յուրի Պողոսյանի թոռներն են, որոնցից կրտսերը՝ Յուրին, առաջին դասարանում է սովորում: Բոլորի ձեռքին կային փայտե իրեր, որոնք իրենք էին պատրաստել և պետք է շարունակեին խմբակի պարապմունքի ժամանակ:

Գ. Իվանյանը հավաստեց, որ ընդհանրապես տղա երեխաները հաճույքով են խմբակ հաճախում, այս տարի նրանց թիվը բավականին մեծացել է: Դպրոցը 5-օրյա է, բայց երեխաները նաև շաբաթ օրն են կրթօջախ գալիս՝ տեխնոլոգիայի և կերպարվեստի պարապմունքների: Սիրում են իրենց ձեռքով իրեր պատրաստել և ոչ միայն փայտե: Սովորում են նաև փայտի վրա փորագրել, դրվագազարդել, մետաղամշակման պարզագույն աշխատանքներ կատարել: Գիտակցում են, որ շատ անհրաժեշտ է այդ հմտություններն ունենալ: Դրանք նրանց կօգնեն բանակում ծառայելու ժամանակ:

Աշխարհահռչակ գյուտարար Թոմաս Էդիսոնն ասում էր. «Ինձ պետք չեն ոչ ձիեր, ոչ շքեղ նավեր, այդ ամենի համար ես ժամանակ չունեմ, ինձ պետք է արհեստանոց»:

Գ. Իվանյանը բացատրում է, որ «Տեխնոլոգիան» բազմակողմ անի առարկա է, տարբեր մասնագիտությունների, արհեստների, հմտությունների համադրություն: Ապագան պարզ չէ, երեխան երբ ավարտի, աշխատանքի տեղ կլինի՞, թե՞ չի լինի: Բայց արհեստը հավերժական է, մնայուն: Տանը պետք է գալիս, դրսում պետք է գալիս: Դրա համար պետք է սովորեն: Ափսոսում է, որ դպրոցական ծրագրում առարկան մինչև 7-րդ դասարանն է, բայց նախկինում անցնում էին մինչև 10-րդ դասարանը: Ռուսաստանում հիմա էլ այդպես է:

Զարմանալի չէր լսել, որ նրա աշակերտների մի մասը արհեստն են ընտրել, անգամ նրանք, որոնք բարձրագույն կրթություն են ստացել այլ մասնագիտություններով. կամ հետագայում փոխել են, կամ էլ այն համատեղում են արհեստների հետ, ինչպես ինքը՝ մանկավարժ Գառուն Իվանյանն է անում:

Արհեստանոցում կողք կողքի են արվեստն ու արհեստը: Եվ դժվար է ասել՝ որտեղ է ավարտվում արվեստը և սկսվում արհեստը: Շատ արհեստներ առավելագույնս մոտենում են արվեստներին:

Գ. Իվանյանը երազող՝ հոգևորով ապրող մարդ է, բայց հողից կտրված անհույս ռոմանտիկ չէ, հոռետես չէ, դժվարություններից կոտրվող չէ: Նույնն էլ սովորեցնում է իր աշակերտներին: Գեղեցիկի և աշխատանքային դաստիարակություն է սերմանում նրանց մեջ, որպեսզի վաղը նրանք կարողանան լինել ինքնուրույն մարդ:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

30 ՏԱՐԻ ԱՌԱՋ

Իմ օրագրից

1990Թ. ՀՈՒՆՎԱՐԸ

2020-ի առաջին օրը ինչպես ազատ ու անկախ Արցախի բոլոր (համարյա բոլոր) ընտանիքները, այնպես էլ իմ բազմանդամ ընտանիքը մեծ շուքով դիմավորեց: Նախօրեին թոռներս ու ծոռներս թռվռալով ճոխ տոնածառ էին զարդարել: Տասներկու ծոռներիցս երկուսը Երևանում են, չորսը՝ Տաշքենդում, իսկ վեցը, որոնք ավագ աղջկաս թոռներն են, Նոր տարվա տոնածառի շուրջը շրջան կազմած՝ իրենց երգ ու պարով և ասմունքով (իհարկե, թոթովախոս) մեծ հաճույք պատճառեցին բոլորիս, հունվարի 1-ի երեկոյան էլ դրան գումարվեցին Ստեփանակերտից ժամանած դուստրերիս ընտանիքները, և ինչպես սկզբում նշեցի, մեծ շուքով նշեցինք Ամանորը: Հունվարի 6-ի առավոտյան եկավ 12 թոռներիցս Մամիկոնը՝ իր շքեղ մեքենայով, և գնացինք Շուշի՝ Սուրբ Ծնունդը նշելու, որից հետո եկանք Կրկժան ու Մարգարիտայիս բնակարանում բոլոր հարազատներով նստեցինք փեսայիս՝ Սարգիս Գալստյանի կողմից պատրաստված տոնական սեղանի շուրջը և... Գիշերը մնացի մայրաքաղաքում գտնվող բնակարանումս, որը հրապարակի մոտ է:

Քունս չի տանում: Կանգնել եմ պատշգամբում ու նայում եմ էլեկտրական լույսով պարուրված տանս դիմաց նորակառույց պուրակին, նախկին Լենինի հրապարակին, որտեղ իշխում է հսկա տոնածառը: Նայում, դիտում եմ՝ որքան տեսադաշտումս է տեղավորվում և չեմ կշտանում, հրճվում-ուրախանում եմ մեր սիրուն քաղաքով, որը հեքիաթային տեսք ունի և՛ գեղեցկությամբ, և՛ առատությամբ, և՛ բովանդակությամբ: Ինչքա՜ն լավ է, որքա՜ն է փոխվել, և կրկին սկսում եմ վերհիշել անցյալը, մտնում եմ սենյակ, բացում օրագրիս համապատասխան էջը՝ 30 տարի առաջ ու ամեն ինչ մոռացած՝ ընթերցում:

1.01.1990թ.: Նոր տարի է, սակայն նոր տարվա հոտ չեմ զգում: Ո՛չ Երևանից և ո՛չ էլ Մոսկվայից Նոր տարվա շնորհավորական խոսք չլսեցի: Բոլորի ուշադրությունը Ադրբեջանում կատարվող վայրագությունների վրա է: Ինչեր ասես, որ նրանք չեն կատարում Նախիջևանում: 1990-ը մեզ համար հույս ու հավատով չսկսվեց, մենք լարված վիճակում ենք:

2.01.1990թ.: Օրը ցերեկով վեց ավտոմեքենա (5 ավտոբուս և 1 ԶԻԼ), թուրքերով լցված, Աղդամից եկել մտել են Ստեփանակերտ և լկտի հռհռոցով, աղմուկ-աղաղակով շարժվում են դեպի Շուշի և առաջացրել են բոլորիս զայրույթը: Փաստորեն Նոր տարում նոր պրովոկացիա է ադրբեջանցիների կողմից: Լուր է տարածվում, որ այդ ավտոշարասյան կողմից տրված կրակոցներից սպանվել է հայտնի քանդակագործ Արմեն Հակոբյանը, այն Արմենը, որը մեր Շարժման առաջամարտիկներից էր, և նրա առաջարկությամբ մեր կազմակերպությունը «Կռունկ» կոչվեց:

4.01.1990թ.: Հաղթանակի հրապարակում դարձյալ տասնյակ հազարավոր ստեփանակերտցիներ են հավաքվել: «Այսօր լացն ու սուգը նորից մեր տուն են մտել, մեր փողոցը, օրը ցերեկով, բայց՝ դավադիր: Արցախն այսօր Մայր Հայաստանի հետ է: Մենք կրկին միասին ենք»,- սգո միտինգը բացելով՝ ասում է Սերժ Սարգսյանը: Ժողովուրդը եկել է հրաժեշտ տալու հունվարի 2-ին ողբերգաբար սպանված Արմեն Հակոբյանին... Ելույթ ունեցողների թվում են վիրաբույժ Էդ.Ղուկասյանը, նկարիչ Սամվել Գաբրիելյանը, կոմպոզիտոր Էդուարդ Ղազարյանը և շատ-շատ ուրիշներ: Ամբողջ քաղաքը սգում է: Ժամը 12-ին սգո թափորն ուղղություն է վերցնում դեպի քաղաքային գերեզմանատուն:

5-6.01.1990թ.: Հիմա էլ Շահումյանի շրջանի մասին ենք մտահոգված, որը ծանր վիճակում է: Մի քանի ամիս է՝ այն գտնվում է խոր շրջապատման մեջ, նույնիսկ գյուղերի միջև կապ չկա: Գետաշենը և մի քանի հայկական գյուղեր մշտական կրակոցների տակ են: 1989թ. դեկտեմբերի 31-ից մինչև 1990թ. հունվարի 5-ը Նախիջևանի տարածքում խորհրդահիրանական սահմանը ազերիների կողմից ոչնչացվել, ավերվել են ինժեներատեխնիկական շինությունները, կազմակերպվել է քննչական խումբ: Բաքվում են գտնվում ԽՄԿԿ ԿԿ-ի քարտուղար Ա.Ն. Գիրենկոն և ԽՍՀՄ ԳԽ Ազգությունների խորհրդի նախագահ Ռ.Ն. Նիշանովը, ԽՄԿԿ ԿԿ և ԳԽ-ի իրավական մարմինների մի խումբ պատասխանատու անձինք:

8.01.1990թ.: Ստեփանակերտի կուսքաղկոմի երկրորդ քարտուղար Հրանտ Մելքումյանից իմացանք, որ Հատուկ կառավարման կոմիտեի նախագահ Ա. Վոլսկին կուսակցության քաղկոմի և շրջկոմների առաջին քարտուղարներին իրազեկ է դարձրել, որ վաղը՝ հունվարի 9-ին, մարզկենտրոն են ժամանում Գիրենկոն և Նիշանովը Ադրբեջանի մի քանի ղեկավար աշխատողների հետ: Նպատակը 1989թ. նոյեմբերի 28-ի որոշման իրականացումն է:

9.01.1990թ.: Վաղ առավոտվանից Լենինի հրապարակից Ստեփանակերտի օդանավակայան տանող ճանապարհը վերահսկողության տակ են առել զինվորականները: Տեղեկանալով այդ ամենին՝ քաղաքի բնակիչները, ի նշան բողոքի, լքել են իրենց աշխատանքի տեղերը և փողոց դուրս եկել՝ փորձելով խանգարել Ադրբեջանի պատվիրակության ժամանումը: Կուսակցության քաղկոմում հրավիրված ակտիվի ժողովում էի: Ակտիվի ժողովը որոշում է հանդիպում չկազմակերպել Գիրենկոյի, Նիշանովի և նրանց հետ Բաքվից եկածների հետ: Վոլսկին այդ ժամերին գտնվում էր օդանավակայանում: Ստեփքաղկոմի առաջին քարտուղարը խոսում է նրա հետ, որ թույլ չտա այդ մարդկանց մուտքը Ստեփանակերտ, քանի որ քաղաքի բնակչության մթնոլորտը քանի գնում՝ ավելի է շիկանում. չէ՞ որ հունվարի 9-ը Արմեն Հակոբյանի զոհվելու 7-րդ օրն է: Չնայած դրան, զինծառայողները դարձյալ հրազեն են օգտագործում, ինչի հետևանքով վիրավորվում է 3 մարդ՝ Իշխան Խաչիկյանը, Լյովա Մուքանյանը և Սամվել Միրզոյանը, որոնցից վերջինին եմ ճանաչում, քանի որ այդպիսի անուն-ազգանունով աշակերտ եմ ունեցել: Այդ երեք վիրավորներն էլ գտնվում են մարզային հիվանդանոցում:

10.01.1990թ.: Ցավալի է, որ ԽՍՀՄ ԳԽ նախագահությունը բեկանեց ՀԽՍՀ ԳԽ և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի 1989թ. դեկտեմբերի 1-ի համատեղ ընդունած որոշումը: Ահա Մոսկվայից Բաքու ժամանած բարձր աստիճանավորների գործունեության արդյունքը: «Խորհրդային Ղարաբաղ» թերթից իմացա, որ կուսակցության ԿԿ-ն (հայկական) որոշում է ընդունել կազմել հատուկ հանձնաժողով, որը պետք է նախապատրաստի նշել Օսմանյան Թուրքիայում հայերի ցեղասպանության 75-ամյա տարելիցը («ԽՂ», 11.01.1990թ.):

12.01.1990թ.: Գիշերը կրակոցներ են հնչել ադրբեջանական գյուղերից հայկական գյուղերի ուղղությամբ:

13.01.1990թ.: Հին նոր տարվա օրն է: Մարգարիտայիս ծնված օրն է: Ես Տաշքենդից տագնապալի լուր ստանալով՝ թռել եմ այնտեղ: Սիլվայիս ամուսինը դանակահարված պառկած է հիվանդանոցում: Ինձ ասացին, որ երկու օր առաջ աշխատանքից տուն վերադառնալիս երկու աղջիկ մի տղայի հետ կանգնեցրել են փեսայիս ավտոմեքենան և խնդրել իրենց հասցնել Տաշքենդի մոտակա գյուղերից մեկը՝ ծանր հիվանդի տեսնելու: Ճանապարհին այդ տղան բնական պահանջ կատարելու նպատակով խնդրել է կանգնեցնել և վերջացնելով՝ մոտեցել է Արմենիս ու ասել. «Խնդրում եմ ասեք ժամը»: Երբ Արմենը նայում էր ձեռքի ժամացույցին, այդ տղան դանակով խփում է նրա որովայնին և աղջիկների հետ նստում մեքենան ու ծլկում: Արմենը արյունաշաղախ ընկնում է փողոցում: Աստծո օգնությամբ այդտեղ է հասնում ուզբեկ միլիցիոները մոտոցիկլով և նրան հասցնում հիվանդանոց, միևնույն ժամանակ հայտնում ճանապարհային ավտոտեսչությանն ու միլիցիայի մյուս աշխատողներին, և արդյունքում այդ երեքն էլ ավտոմեքենայի հետ ձերբակալվում են: Պարզվում է, որ երեքն էլ ուկրաինացիներ են և առաջին անգամ չէ, որ այդպիսի «որս» են կատարում: Երեկոյան «ВРЕМЯ»-ն ահավոր լուր է հայտնում Բաքվում սկսված հայկական ջարդերի մասին, որ Լենինի հրապարակում 100 հազարանոց միտինգում որոշվում է, ինչպես հետո իմացա, քաղաքի՝ ծրագավորված, պլանավորված հայաթափումը: Հիշեցի 1905թ. ջարդերը, 1918թ. սեպտեմբերի 15-ի ջարդերը (պատմությունից) և համոզվեցի որ պատմությունը կրկնվում է, այն էլ ավելի այլանդակ ձևով, որ Թուրքիայի վիժվածք Ադրբեջանը ավելի կատարելագործված կերպով է իրականացնում իրենց «հայրերի» գիշատիչ ձեռագիրը: Բժիշկներից իմանալով, որ փեսայիս կյանքին վտանգ չի սպառնում, հաջորդ օրը հետ եմ վերադառնում: Չէ՞ որ Բաքվում տասնյակ բարեկամներ ունեմ, որոնց թվում՝ եղբայրս՝ Կառլենը, որն աշխատում է Շմիդտի գործարանում:

15.01.1990թ.: Գազանությունները շարունակվում են Բաքվում: Բայց ԽՍՀՄ ԳԽ նախագահությունը որշում է ընդունում ԼՂԻՄ և մի քանի այլ շրջաններում արտակարգ դրություն մտցնելու մասին: Չնայած դրան, Ադրբեջանն ավելի է սանձարձակ դառնում: Շրջափակմանը ավելացնում է ռադիոհեռուստահաղորդումների արգելումը: Թերթում ընթերցում եմ Զ.Բալայանի բաց նամակը Մ.Գորբաչովին, որով ջանում է նրա գիտակցությանը հասցնել, թե ինչ են իրենցից ներկայացնում Նարիման Նարիմանովը և ընդհանրապես թուրքը, որոնց մոտ սուտն է իշխում և թշնամանքը հայերի նկատմամբ:

16.01.1990թ.: Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը կոչով հանդես է գալիս ժողովրդի առաջ, որ պրովոկացիայի չենթարկվի: Կեսգիշերին Շահումյանի շրջան է մտնում հատուկ նշանակության բրիգադ: Հունվարի 13-16-ը Ադրբեջանից Հայաստան է եկել 2000-ից ավելի փախստական, իսկ Մոսկվա է հասել շուրջ 600 փախստական:

17.01.1990թ.: Մարզի դատավորների կոնֆերանսը դիմել է Մոսկվա՝ խնդրելով մարզի դատական մարմիններն անհապաղ դուրս բերել ԱդրԽՍՀ արդարադատության մարմնի համակարգից:

18.01.1990թ.: Շրջափակումը շարունակվում է: Երեկոյան Բաքվի հեռուստատեսությամբ զայրույթով դիտեցի Դաշտամիրով-Միքայլովի հարցազրույցը, որը փաստորեն կրակի վրա նավթ է թափում:

19.01.1990թ.: Լրատվամիջոցներից իմացա, որ հունվարի 11-ից մինչև այսօր կարմիր լույս է վառված Աղդամից Ստեփանակերտ եկող մարզի միակ երկաթգծին: Այսօր Բաքվում արտակարգ դրություն մտցվեց: Չնայած դրան՝ շարունակվում են գազանությունները: Ազգային ճակատը ձգտում է հասնել իշխանության, կոմունիստներից պահանջում է ժողովրդի առաջ վառել կուսակցության տոմսերը: Վերջապես Մոսկվան տեսնելով, որ խորհրդային կարգը Բաքվում վտանգված է, զորք մտցրեց:

20.01.1990թ.: Երեկ և այսօր Բաքվի ցուցարարների վրա կրակ են բացել խորհրդային բանակի զորամասերը: Պարզ դարձավ, որ զորք մտցնելը հայերին պաշտպանելու նպատակով չէ, այլ խորհրդային իշխանությունը պահելն էր: Հունվարի 13-ից մինչև 20-ը Բաքվի 108 հազար հայերից մի հայ անգամ չէր մնացել, որ զորքը պաշտպաներ:

21.01.1990թ.: «Իրադրությունը ԼՂԻՄ-ում հունվարի 21-ին մնացել է լարված»,- հաղորդում է զինվորական պարետ՝ գեներալ մայոր Սաֆոնովը,- շարունակվում է ճանապարհների շրջափակումը, չի գործում երկաթուղային տրանսպորտը: Հունվարի 20-ին ժամը 11 անց 30 րոպեին Շուշի քաղաքում տեղի է ունեցել երկու հազարանոց չարտոնված միտինգ, որում առաջ են քաշվել մի շարք ուլտիմատիվ պահանջներ. 24 ժամվա ընթացքում ազատել Շուշվա շրջգործկոմի բաժնի ներքին գործերի բաժնի չորս աշխատողներին, որոնք մի քանի օր առաջ պատանդ են վերցվել Շուշի քաղաքից, դուրս բերել ԽՍՀՄ ՆԳՄ բոլոր գործուղված աշխատակիցներին, դադարեցնել մթերքների մատակարարումը քաղաքում տեղաբաշխված զինծառայողներին: Հավաքվածները սպառնացին, որ եթե պահանջները չկատարվեն, կսկսվեն զանգվածային անկարգություններ: Միտինգի ժամանակ 20 մարդ ցուցադրաբար վառեց կուստոմսերը: Կրկժանում զինվորական կարգախմբի կողմից բռնվել և ստուգվել է մի մեքենա, որում հայտնաբերվել է հրազեն, դիտորդների տվյալներով հունվարի 20-ին Շուշվա շրջանի Մալիբեկլու գյուղի շրջանում վայրէջք է կատարել 15 ուղղաթիռ: Գիշերը Շուշի քաղաքում և Մալիբեկլու գյուղում լսվել են ավտոմատային կրակոցներ: Գիշերվա ժամը 1-ին Կրկժան ավանից մի քանի րոպե հայկական փողոցների ուղղությամբ կրակ է բացվել ավտոմատ զենքից: Եվ այսպես հանգիստ հաղորդում է պարետությունը և նույնիսկ տպագրում թերթում:

22.01.1990թ.: Լարվածությունը շարունակվում է: Շուշիի հեռուստակենտրոնը պարբերաբար ընդհատում է կենտրոնական հեռուստատեսության հեռարձակումը և բոլոր ալիքներով ադրբեջաներեն լեզվով տալիս հակահայկական, հակախորհրդային, հակառուսական բովանդակությամբ ծրագրեր: Դարձյալ զարմանում եմ, որ պարետը հանգիստ սրտով այսքանը հաղորդում է, նույնիսկ հայտնում է, որ Աղդամ քաղաքում տեղի է ունեցել չարտոնված միտինգ, որտեղ ցուցադրաբար վառել են կուստոմսերը: Նշաններ չունեցող ուղղաթիռներով գրոհայիններ են փոխադրում Շուշի, Աղդամ, Խոջալու, Մալիբեկլու, Մարտակերտի շրջանի Քերեվենդ: Աղդամի գործարաններում պատրաստում են զենքեր, ռռնակներ և այլն:

23.01.1990թ.: «Խորհրդային Ղարաբաղ» թերթում տպագրվել է «Բաց նամակ Ադրբեջանական կոմկուսի ԿԿ բաժնի վարիչ Աֆրանդ Ֆրիդունօղլի Դաշդամիրովին», որում Եղիշե Սարգսյանը (կուսմարզկոմի նախկին քարտուղար) իր զայրույթն է հայտնում Միխայլովի հետ հարցազրույցի առթիվ (նամակը կցված է օրագրիս):

26.01.1990թ.: Վերջապես իմացանք, որ սկսել է գործել Ստեփանակերտի երկաթուղակայարանը:

27.01.1990թ.: Մինչև կեսօր կայարան մտավ 64 վագոններից բաղկացած մեկ շարասյուն: Օրագրիս կցված է նաև «Խորհրդային Ղարաբաղ»-ում տպված «Ինֆորմացիոն բաժնի թշնամություն սերմանող խոսափող» տեղեկանքը. «Հունվարի 20-ից Շուշվա ապօրինի հեռուստաստուդիան, որն ըստ էության այս օրերին փոխարինում է Ադրբեջանի հեռուստատեսությանը, հայտնեց, որ Շուշիում, Կուբաթլուում, Լաչինում տեղի են ունեցել միտինգներ: Հանդես գալով միտինգներում՝ Ադրբեջանի ժողճակատի ազգայնամոլները, տեղական ծայրահեղականները հակահայկական հիստերիա բորբոքելուց բացի լուտանքներ թափեցին ԽՄԿԿ ԿԿ քաղբյուրոյի, Մ. Գորբաչովի, Խորհրդային Միության, ռուս ժողովրդի և խորհրդային բանակի հասցեին... Նրանք կոչ են անում զենքի ուժով պայքարել խորհրդային պետության, խորհրդային բանակի դեմ, հայ ազգաբնակչության դեմ՝ հանուն իսլամական միասնության»: Ահա մեր հարևան կոչեցյալների իսկական դեմքը:

26.01.1990թ.: Այսօր Ստեփանակերտ եկան ԽՍՀՄ ԶՈՒ մինիստր Յազովը և ՆԳ մինիստր Բոգատինը:

27.01.1990թ.: Ինչպես մի առիթով գրել էի, գաղտագողի Ստեփանակերտ մտան նաև Բաքվից կազմկոմիտեի 4 անդամներ: Մարզկոմի աշխատողները, որպես բողոքի նշան, լքեցին կուսմարզկոմի շենքը, իսկ գեներալ-մայոր Սաֆոնովը քաղաքով մեկ թռուցիկներ տարածեց՝ հորդորելով, որ կազմկոմիտեն Ադրկոմկուսի ԿԿ երկրորդ քարտուղար Պոլյանիչկոյի գլխավորությամբ խաղաղություն է բերել, պետք է ամեն ինչով օգնել, որպեսզի նա իրագործի իր միսիան: Դրան ի պատասխան՝ քաղաքի աշխատավոր բնակչությունը, բոլոր ձեռնարկությունների աշխատողները և կուլտհիմնարկներն ու դպրոցները գործադուլ հայտարարեցին հունվարի 29-ից:

Ահա այսպիսին էր 1990-ի հունվարը:

Մաղլեն ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ
Թոշակառու ուսուցիչ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ

ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈ՞ՒՆ, ԹԵ՞...

Դարերից եկող ավանդույթ է հայերիս համար, որ ընտանիքի կերակրողը տան տղամարդն է, և այս հանգամանքով էլ պայմանավորված էր հայ տղամարդու արժանապատվությունը, հեղինակությունը ընտանիքում: Նա ընտանիքի համար հենարան է ու նեցուկ առաջին հերթին, նոր միայն՝ կերակրող: Թե ընտանիքն ինչքանով է ամուր, ինչքանով են արդարացվում ընտանիքի անդամների հույսերն ու երազանքները, կախված է մի տղամարդուց, որն առաջնորդվում է հայ ընտանիքի դարավոր ավանդույթներով, իրեն պատասխանատու է զգում երեխաների դաստիարակության համար, բարձր է պահում ընտանիքի պատիվը: Նման հայր ունենալու փափագ գրեթե բոլոր երեխաներն ունեն, որովհետև նրանք պաշտպանված են զգում իրենց, գիտեն, որ ամուր թիկունք ունեն: Տղամարդկային արժանապատվություն՝ բոլոր առումներով. սա թերևս բոլոր կանանց ամենակարևոր երազանքն է, որի առկայության դեպքում նրանք իրենց շատ երջանիկ ու ապահով են զգում: Իհարկե, բոլորին չի տրված այսպիսի երջանկություն, բոլոր կանայք չէ, որ գոհ են իրենց ընտանեկան պայմաններից, առավել ևս նրանք, որոնց ամուսինները գրեթե իրենց զերծ են պահում ընտանեկան պատասխանատվությունից, չեն մասնակցում երեխաների դաստիարակության գործին: Նրանք ավելի շատ անձնական հաճույքներով են զբաղված: Ավելին, երբ շատ են ընկղմվում կյանքի տիղմի մեջ (նրանց համար առաջնայինը դառնում է խմիչքը, ծխախոտը…), այնքան ավելի են հեռանում ընտանիքից: Չեն հետաքրքրվում տան հոգսերով, երեխաներով, հարազատներով: Դառնում են խորթ ու օտար սեփական ընտանիքում: Այս ամենից հոգնած ու վիրավորված՝ հայ կինն իր ուսերին է առնում ընտանիքի, երեխաների կրկնակի ծանր բեռը ու փորձում հոգալ գոնե կենցաղային կարիքները: Մի կողմ թողնելով կանացի երջանկությունն ու իր հիմնական առաքելությունը՝ նա չի խուսափում ամենածանր աշխատանքից անգամ, միայն թե ապահովված լինեն երեխաները: Այդպիսի ծանր աշխատանքից հետո էլ նա իր մեջ ուժ չի գտնում ըստ ամենայնի զբաղվելու երեխաների կրթության ու դաստիարակության հարցերով: Նման ընտանիքներում տղամարդիկ իսպառ կորցնում են իրենց արժանապատվությունը՝ ինչ-որ տեղ էլ դառնալով ավելորդ բեռ: Մեր շրջապատում, ցավոք, ստվարանում է այդպիսի ընտանիքների շարքը: Այստեղ հաճախակի են դառնում ընտանեկան վեճերն ու կռիվները, անախորժ դեպքերն ու փոխադարձ վիրավորանքները, որոնք ի վերջո հանգեցնում են ապահարզանի: Երեխաները դառնում են այս ամենի ականատեսը, և վտանգվում է նրանց ապագան, խեղվում են նրանց մանկությունն ու պատանեկությունը: Տան տղամարդն ընկնում է հարազատների աչքից, քանի որ մտածում է միայն իր ես-ի, հաճույքների մասին և առիթն էլ բաց չի թողնում դիմացինին վիրավորելու, մեղադրելու համար, մանավանդ այն դեպքերում, երբ կինը մերժում է նրան ծխախոտի կամ խմիչքի փող տրամադրել (չմեղադրենք նման կանանց): Սա՞ է, արդյոք, տղամարդկային արժանապատվություն կոչվածը:

Շատ անգամ եմ ականատես եղել այդ հողի վրա ծագած վեճերի, որոնց ընթացքում փոխադարձ հայհոյանքներ ու անեծքներ են հնչում, ինչն էլ շատ տհաճ է լսողի համար: Ավանդական հայ ընտանիքներում էլ կարող են վեճեր ծագել, բայց նրանք այդ վիճաբանությունը թողնում են իրենց պատերի ներսում. ոչ ոք չի էլ իմանում այդ մասին: Իսկ ահա ինքնասիրությունը կորցրած տղամարդու և չափն անցած կնոջ համար արդեն միևնույն է, թե ով կլսի իրենց վեճը, ինչ կասեն իրենց մասին…

Հենց այս հանգամանքն է, որ պիտի խիստ անհանգստացնի այսօր մեր հասարակությանը, քանի որ անբարենպաստ պայմաններում հասակ առնող երեխաները վաղը դառնալու են մեր հայրենիքի պաշտպանները, մեր ապագան: Արդյո՞ք այդ երեխաները կդառնան լիարժեք քաղաքացիներ, հայրենիքի վստահելի պաշտպաններ ու կարդարացնեն մեր հույսերը: Նրանք ավելի շատ պատուհաս են դառնալու մեր հասարակության համար: Ասեմ ավելին, գնալով ավելանում է նման՝ ընտանեկան ոչ նորմալ դաստիարակություն ստացող, ջերմության պակաս ունեցող երեխաների թիվը:

Շատ ծնողներ, մանավանդ երիտասարդները, իրենց երեխաներին չեն ընդգրկում տնային գործերում, խնայում են նրանց՝ վարժեցնելով փափուկ ու հեշտ կյանքի, չմտածելով, որ դրանով ավելի են վնասում նրանց: Անժխտելի փաստ է, որ այն ընտանիքներում, որտեղ երեխաներն ընդգրկված են ծնողների աշխատանքների մեջ, ավելի դաստիարակված են, խելոք ու կարգապահ, քան իրենց երեխաներին խնայող ծնողների երեխաները, որոնք եսասեր են ու քմահաճ, չեն գնահատում իրենց ծնողների աշխատանքը ու միայն պահանջող են:

Նախկինում գործում էին հանձնաժողովներ՝ հիմնականում հեղինակավոր մանկավարժներից բաղկացած, որոնց հիմնական առաքելությունը անառողջ ընտանիքների անչափահաս երեխաների դաստիարակության խնդիրներով զբաղվելն էր ու ինչ-որ տեղ էլ ընտանիքը փրկելը (իհարկե, դա միշտ չէր հաջողվում, բայց շատ էին դրական ազդեցությունները): Գործում էին ծնողական համալսարաններ, որտեղ քննարկվում էին մանկավարժահոգեբանական թեմաներ:

Այսօր այդ երեխաների հարցերով զբաղվում է ոստիկանության՝ անչափահասների գործով հանձնակատարը, որի այցելությունները դպրոցներ միշտ չէ, որ ցանկալի արդյունք են ապահովում: Նման կարգազանց երեխաները չեն պակասում, երբեմն էլ թարմացվում է շարքը: Անհրաժեշտ է ոչ միայն զրուցել այդ երեխաների հետ, որը լավագույն արդյունքի երաշխիք չէ, այլև հանդիպել նրանց ծնողներին, պարզել հիմնախնդիրը և պատասխանատվության ենթարկել հենց այն ծնողներին, որոնց մեղքով են այդ երեխաները դարձել կարգազանց:

Ընդունված խոսք է՝ վատ օրինակը վարակիչ է: Այդ իսկ պատճառով պետք է կանխել վատ օրինակները՝ ոչ թե պատժելով այդ երեխաներին, այլ համոզելով, մտերմիկ զրույցների ու հետաքրքիր ժամանցների միջոցով:

Հենց այսպիսի կործանված ընտանիքների երեխաներն են, որ վաղ հասակից «ընկերանում են» խմիչքի ու ծխախոտի հետ: Մի՞թե սա չէ հենց նորմալ դաստիարակության պակասի պատճառը: Շատ հաճախ էլ պարզվում է, որ այդ երեխաների ծնողները տեղյակ են իրենց երեխաների կարգազանցությանը, հակվածությանը այս կամ այն վատ սովորույթին, սակայն անկարող են, անուժ են որևէ բան անել: Դպրոցում էլ այդպիսի երեխաները իրենց լավ չեն դրսևորում, խախտում են դպրոցի ներքին կարգուկանոնը, դասերին իրենց դրսևորում են որպես ամենաթողներ ու արտոնյալներ, որի հետևանքով դասը վերածվում է ժխորի՝ խախտելով սովորող աշակերտների և ուսուցչի հոգեկան անդորրը:

Նոր ժամանակներին, նոր գործընթացներին համապատասխան միջոցներ են պետք, որ կանխվեն անախորժ դեպքերը, և մեր անչափահասները հասակ առնեն ընտանեկան ու հասարակական նորմալ պայմաններում: Շատ ջանքեր են անհրաժեշտ, բազմակողմանի մոտեցումներ, որ օգնենք թե՛ այդ ընտանիքներին, թե՛ ուղիղ ճանապարհից շեղված երեխաներին:

Կանխենք այն բոլոր դեպքերը, երբ ամենաթեթև ցնցումից խարխլվում են ընտանիքները, և արդյունքում երեխաները դառնում են անկառավարելի՝ հասարակության համար դառնալով ոչ պիտանի ու երերուն քաղաքացիներ:

Լույս է տեսել

ԳԻՐՔ - ՇՏԵՄԱՐԱՆ



Գիրքը հավերժության գիրկն անցած մտածողներին նվիրված հուշարձան է:

Դևենանտ

Գիտական մի շարք հոդվածների և երկու գրքի («Տմբլաչի Խաչանի «Զուռնա-տմբլայի» լեզվական արվեստը», 2007, «Հայոց լեզու. գործնական աշխատանքների ձեռնարկ», 2007) հեղինակ, 2013 թվականից ԱՀ ԿԳՍ նախարարության կրթության պետտեսչության պետական տեսուչ, բանասիրական գիտությունների թեկնածու Ելիզավետա Միրզոյանը ընթերցողների սեղանին է դրել իր երրորդ՝ «Գիտելիքների խաչմերուկում» գիրքը:

Մանկավարժական գործունեության բազմամյա փորձառություն ունեցող հեղինակը տարիների ընթացքում գրի է առել ուսուցիչներին, դպրոցականներին, ուսանողներին, ընդհանրապես կրթության ու դաստիարակության խնդիրներով մտահոգ մասնագետներին հետաքրքրող նյութերի ցանկը ու տարիներ անց նրանց իսկ դատին հանձնել մի գիրք, որը կօգնի ընթերցող լայն հասարակությանը լրացուցիչ գիտելիքների ձեռքբերման ճանապարհին: Հեղինակը փորձ է արել մեկտեղել բազմաբովանդակ նյութեր՝ օգնելու դրանցով շահագրգիռ ընթերցողներին:

«Գիտելիքների խաչմերուկում» գիրքն ունի հետաքրքիր կառուցվածք:

Առաջին բաժնում խոսվում է մայրենի լեզվի գեղեցկության ու կարևորության մասին: Այստեղ կգտնեք հայոց մեծերի, այլազգի լեզվաբանների գնահատականները մեր լեզվի հարստության վերաբերյալ, առածներ ու ասացվածքներ, խոսքի վթարների օրինակներ, որ իշխում են մեր առօրյա կյանքում՝ հեռուստահաղորդումներում, ԱԺ-ում, կառավարության նիստերի ժամանակ, նույնիսկ գիտության մշակների խոսքում: Բաժինն ընդգրկում է տարաբնույթ հարցեր՝ օտար բառերի հայերեն համարժեքներ, հայերենի ուղղագրության պատմություն (4 փուլերը), Ղարաբաղի բարբառի հմայքն ու նրանից խելացի օգտվելու խորհուրդներ, բարբառային որոշ արտահայտությունների բացատրություններ, հայտնի լեզվաբանների, նրանց գիտական աշխատությունների, ազգանունների ծագման պատմություն, կարևոր ներդրումներ և այլն:

«Գրողների դիմանկարներ» բաժնում կկայանա աշակերտի և գրողի հանդիպումը ուսուցչի միջոցով: Որքան զինված է ուսուցիչը գիտելիքներով, բոլոր հարցերի պատասխաններով, նույնքան կմեծանա սովորողների հետաքրքրությունների շրջանակը: Սրան էլ կհաջորդի աշակերտի կողմից ուսումնասիրման փուլը, ինչը ուսուցչի համար ամենացանկալի նպատակներից մեկն է:

Այնուհետև մեծերի մասին գնահատանքի խոսքերն են: Այսպես, Նարեկացուն արժանիորեն գնահատելու ու հասկանալու համար մի՞թե չենք դիմի Թումանյանին («Նարեկացու մատյանը հայի կրակված սիրտն է, որ այրվում է երկիրը բռնած, տանջված հոգին է, որ մռնչում է մինչև երկինք»), Հովհաննես Շիրազին («…Բավ է իր մի Նարեկացին, որ ողջ ազգը սրբանա…), Վիլյամ Սարոյանին, («Իմ կարծիքով ամբողջ աշխարհը պետք է շատ թե քիչ Նարեկացի իմանա»): Արդյո՞ք սրանից ավելի բարձր գնահատականներ կարող են լինել:

Ձեր առջև կհառնի մեր գրականության երախտավորների ողջ աստղաբույլը՝ Սայաթ-Նովա, Խ. Աբովյան, Ռաֆֆի, Պ. Դուրյան, Ղ.Աղայան, Դ. Վարուժան, Մ. Մեծարենց, Ավ.Իսահակյան, Հովհ. Թումանյան, Վ. Տերյան, Սիամանթո, Վ. Սարոյան, Ակ. Բակունց, Ե.Չարենց, Գ. Մահարի, Հովհ. Շիրազ, Մ. Գալշոյան, Պ. Սևակ, Հ. Սահյան, Հր. Մաթևոսյան, Ս. Կապուտիկյան, Վ. Դավթյան՝ մեր մեծերի ու օտարազգի արվեստագետների մեծարանքի խոսքերով:

Հետո ընթերցողը կհանդիպի հայ գրողների կողմից իրենց իսկ արվեստի գիտակցումը բացահայտող տողերի, որոնք, իրոք, արտացոլում են նրանց արվեստի հավերժական գոյության փաստը: Օրինակ՝ «…Այս մատյանի հարակայությամբ կմնամ անմահ» (Գր. Նարեկացի), «Հուր եմ դառել, լույս տվել, լույս տալով եմ սպառվել» (Հովհ. Թումանյան), «Իմ թախիծը լուսավոր է…» (Վ. Տերյան), «Թե ուզում ես երգդ լսեն, ժամանակիդ շունչը դարձիր» (Ե. Չարենց), «Թեև գրում եմ անգլերեն… ինձ համարում եմ հայ գրող… և պատկանում եմ հայ գրողների ընտանիքին» (Վ.Սարոյան), «Ու գալու է մի ժամանակ, Երբ որ մարդիկ պիտի նաև մերպեսներին երկրպագեն Ոչ կուռքի պես, Ոչ էլ աստծո, Այլ… հերոսի…» (Պ. Սևակ):

Այս բաժինը ներառում է նաև գրողների ասույթներ, նրանց անունների, կեղծանունների և շրջասության վերածված անվանումներ, ինչ ծագում ունեն դրանք, ովքեր են մկրտել նրանց այդ անուններով: Իսկ թե գրողների արտաքին նկարագրությունը ինչպիսին է եղել ժամանակակիցների հուշերում, բերենք ընդամենը երկու օրինակ. Արշակ Չոպանյանը՝ Ղևոնդ Ալիշանի մասին. «Որքան մեծ եղավ զարմանքս, երբ պարթև, թիկնեղ, վեհաշուք մի ծերունի տեսնելու փոխարեն ես հանդիպեցի փոքրիկ, թեթև մի էակի, որը գետնի վրա սահում էր, քան քայլում, իր թռչնակի վզին կրում էր երկրպագելի գլուխ: Կարծես թե նա ծերացած հրեշտակ էր…», կամ՝ Վարդգես Բաբայանը՝ Պարույր Սևակի մասին. «Պ.Սևակը նման էր եթովպացու. նիհար, գանգրահեր, մեծ այտոսկրերով, աչքերում՝ սև բոց, քիթը՝ լայն, ատամնաշարի ճերմակը մատնող շողշողուն ժպիտով… Ամեն անգամ, երբ լսում եմ Պարույրի խորիմաստ ու սրամիտ խոսքը, կարդում նրա բանաստեղծությունները, տեսնում նրա կիրթ ու վայելուչ շարժումները, մոռանում եմ հաստ շրթունքները, փլված քիթը և նախանձով մտածում՝ ինչ գեղեցիկ մարդ է Պ. Սևակը»:

Գրական նախատիպերը այլ ժողովուրդների բանաստեղծները (Ֆիրդուսի, Պեյո Յավորով), Խոջիվանքի պանթեոնում հանգչող հայոց մեծերի աստղաբույլը, գրքի հեղինակ Ելիզավետա Միրզոյանի խոհերն Արցախյան պատերազմի հերոսների վերաբերյալ, մտորումները վերջին զանգի առթիվ, գրականագիտական որոշ հասկացություններ՝ բնաբան, առաջաբան, լեգենդ, բալլադ, քառյակ, կբավարարեն ընթերցողների, առավելապես՝ մասնագետների հետաքրքրությունները:

☞ 16

ՄԱՐԶԱԿԱՆ

ԻՄ ՁԵՆՔԸ ՄԻՇՏ ԻՆՁ ՀԵՏ Է. ԱՐՄԻՆԵ ԱՂԱԲԵԿՅԱՆ

Գաղտնիք չէ, որ հայ աղջիկներն ու կանայք միշտ էլ առանձնացել են ոչ միայն պարկեշտությամբ, այլեւ ամրությամբ, կամքի ուժով ու մարտականությամբ: Մեր օրերում այս հատկությունները ցայտուն արտահայտվում են սպորտում եւ մարտարվեստներում կոփվող մեր աղջիկների մոտ, որոնք Արցախը ներկայացնում են նաեւ միջազգային մրցահարթակներում:

Արտաքինից նուրբ, կանացի, բայց համարձակ, ուժեղ ոգով ու մարտական. սա արցախյան մարզաշխարհը ներկայացնող՝ մեր հերթական զրուցակից Արմինե ԱՂԱԲԵԿՅԱՆԻ կերպարն է: Ծնվել է 1994թ. ապրիլի 15-ին: Ստեփանակերտում ավարտելով 11-րդ ավագ դպրոցը՝ ընդունվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիա: Չորսամյա կրթություն ստանալուց եւ ավարտելուց հետո ծառայության է մտել Ստեփանակերտի ՔՀԲ՝ որպես օպերլիազոր լեյտենանտ: Շուրջ երեք տարի ծառայելուց հետո հեռացել է աշխատանքից: Ներկա պահին չի աշխատում: Կարատե մարտարվեստով սկսել է պարապել ութ տարեկանից: Լինելով առաջադեմ մարզիկ՝ Արմինե Աղաբեկյանը մասնակցել է Արցախում եւ ՀՀ-ում կազմակերպված շոտոկան ավանդական կարատե դո մրցաշարերի եւ արծանագրել բազմաթիվ մրցանակային տեղեր տասը տարվա ընթացքում: 18 տարեկանում ստիպված էր պարապմունքներում դադար տալ՝ կապված ուսումնառության եւ հետագա ծառայության հետ: Բայց ահա յոթ տարվա դադարից հետո Արմինեն վերադարձավ իր սիրելի մարտարվեստի աշխարհ եւ, կարճ ժամանակում վերականգնելով մարզական կեցվածքը, մասնակցեց ՀՀ առաջնությունների: ՀՀ-ում երկու անգամ չեմպիոն դառնալուց հետո մասնակցել է 2019թ. հոկտեմբերի 7-14-ը ՌԴ Օդինցովո քաղաքում կայացած ավանդական կարատե դո մարզաձեւի Եվրոպայի 34-րդ առաջնությանը եւ գրավեց երկրորդ մրցանակային տեղ՝ արժանանալով արծաթե մեդալի: Արմինե Աղաբեկյանը պարգեւատրվել է ԱՀ նախագահի կողմից:

- Արմինե, ինչո՞ւ այդքան նուրբ աղջիկն իրեն գտավ կարատեի մեջ:

- Շատ եմ սիրում մարզված մարդկանց, նշանակություն չունի՝ տղա թե աղջիկ: Իմ արյան մեջ կա մարտական լինելը: Միշտ ձգտում եմ լինել կոփված, առողջ, տիրապետել ինքնապաշտպանության: Կանացի տվյալներ ունենալը չի խանգարում հասնել նպատակիդ: Ես ողջ կյանքովս ու էությամբս նվիրվել եմ մարտարվեստին: Պատահել է, որ պարապմունքների գնալու համար ստիպված եմ եղել կտրվել ընկերական շրջապատից, ավելի քիչ շփվել բարեկամների ու հարազատների հետ, բայց փոխարենը կարողացել եմ լավ պարապել ու արդյունքի հասնել: Մարտարվեստն օգնում է, որ դառնամ այնպիսին, ինչպիսին ուզում եմ:

- Ուրեմն, բացի պարապմունքների ծանրությունից, արդյունքի հասնելու համար նաեւ այլ զոհաբերությունների եք գնում՝ զրկելով Ձեզ տարբեր հաճույքներից: Ինչպե՞ս է դա անդրադառնում Ձեր կյանքի մյուս բնագավառների վրա, օրինակ, անձնական կյանքի:

- Ժամանակի ընթացքում հարմարվում ես գրաֆիկին, ռեժիմին: Շրջապատը նույնպես հասկանալով է մոտենում՝ գիտակցելով, որ կարատեն ինձ համար կենսակերպ է դարձել, որը փոխել չեմ ցանկանում: Անձնական կյանքով դեռ չեմ զբաղվում, բայց ոչ թե պարապմունքներն են խանգարում դրան, այլ որ ժամանակը չէ: Աշխատանքային կամ շփման բնագավառում մարտարվեստից ու իմ մարզիչներից ստացած գիտելիքներն ավելի շատ օգնում են ինձ: Եղել են պահեր, երբ ստիպված եմ եղել դիմակայել որեւէ բարդ իրադրության կամ որեւէ մարդու: Ներկա պահին ցանկանում եմ վերականգնել աշխատանքս ոստիկանությունում՝ համոզված լինելով, որ հմտություններս ինձ պետք կգան:

- Պատմեք Ձեր մարզչի մասին:

- Իմ մարզիչը 31-ամյա Անդրեյ Պետրոսյանն է, որը ՀՀ, Եվրոպայի եւ աշխարհի առաջնությունների մրցանակակիր է, սպորտային կարատեի կումիտե մրցածեւի մարզիչ: Նա փոխանցում է կարատեի հնարները, սկզբունքները, իսկ մրցումների նախապատրաստվելիս ավելի շատ ենք պարապում, ինտենսիվ աշխատում տարբեր մրցահարթակներում պատշաճ հանդես գալու համար: Պարապում ենք ինչպես ավանդական կարատեի, այնպես էլ սպորտային կարատեի առաջնություններին մասնակցելու համար: Ուզում եմ շնորհակալություն հայտնել իմ բոլոր մարզիչներին: Նրանց կատարած տքնաջան աշխատանքը մեր հաջողությունների մեծագույն մասն է:

- Եվրոպայի առաջնության ժամանակ Դուք հանդես եկաք կատա եւ էմբու կումիտե մրցածեւերում: Կարո՞ղ եք մեկնաբանել՝ ինչով են տարբերվում կատա եւ կումիտե մրցածեւերը:

- Կատայի եւ կումիտեի հիմնական տարբերությունն այն է, որ կումիտեում միշտ կա ֆիզիկական մրցակից, մինչդեռ կատան կատարվում է մենակ: Բայց կատայի դեպքում եւս կա մրցակից մարզիկի մտքում: Դա երեւակայական մրցակիցն է. ինչպես ընդունված է ասել, մարզիկը կատարում է մարտ ստվերի հետ: Երկուսն էլ հեշտ չեն կատարման տեսակետից: Չնայած որոշ մարզիկներ նախընտրում են միայն կատայով հանդես գալ, բայց, կարծում եմ, որ իրեն ավելի լավ դրսեւորող մարզիկը պետք է նաեւ կումիտեում լավ արդյունք ցույց տա:

- Լավ կարատեիստ դառնալու համար ի՞նչ հատկություններ են պետք: Կարո՞ղ եք թվարկել ամենակարեւորներից երեքը:

- Կամքի ուժ, ձգտում, սեր եւ նվիրվածություն: Եվ, իհարկե, աշխատանք ինքդ քեզ վրա:

- Իսկ ֆիզիկական ուժը կարեւո՞ր չէ:

- Կարեւոր է, բայց պարապելու համար դիմում են տարբեր կառուցվածքի եւ ֆիզիկական տվյալների մարդիկ: Եթե վերոնշյալ հատկություններն առկա են, ցանկացած ֆիզիկական տվյալներով մարդ կարող է իր մարմինը կոփել ու հասցնել իրեն անհրաժեշտ ֆիզիկական մակարդակի: Իզուր չէ ասված, որ կարատեն միայն ֆիզիկական պայքար չէ, դա ճանապարհ է, որն անցնում են կարատեիստները՝ զարգացնելով եւ կատարելագործելով իրենց:

- Առաջիկայում ի՞նչ ծրագրեր կան, պատրաստվո՞ւմ եք մրցաշարերի:

- Գարնանն սպասվում է ՀՀ առաջնություն, որին պատրաստվում եմ մասնակցել: Եթե հաջողվի հաղթել այդ մրցաշարում, հնարավորություն կունենամ մեկնել Բրազիլիա եւ մասնակցել ավանդական կարատե դո աշխարհի առաջնությանը:

- Հավանաբար արցախցի բոլոր աղջիկներին խորհուրդ եք տալիս պարապել մարտարվեստներով:

- Իհարկե, կոչ եմ անում բոլոր աղջիկներին պարապել սպորտով: Իսկ մարտարվեստներն առավել եւս նպաստում են, որ աղջիկներն իրենց ֆիզիկապես պաշտպանված զգան: Պետք է նվիրվել սպորտին, դա առողջություն է առաջին հերթին: Դա ինքնապաշտպանություն է, ինքնավստահություն սեփական ուժերի հանդեպ: Մենք ապրում ենք այնպիսի միջավայրում, երբ ինքնապաշտպանությանը տիրապետելն ու ֆիզիկական լավ վիճակն անհրաժեշտություն են: Հնարավոր է այնպես լինի, որ արցախցի աղջիկն ամուսնանա ու տեղափոխվի այլ երկիր, որտեղ կրիմինալ միջավայր է: Նա պետք է վստահ լինի, որ կկարողանա պաշտպանվել վտանգի դեպքում: Իմ կյանքում ինձ շատ է պետք եկել ֆիզիկական ուժ գործադրել կամ պաշտպանվել: Կարատեն իմ զենքն է, որը միշտ ինձ հետ է:

ՀԱՂԹԱԿԱՆ ՈԳԻՆ

Բոլոր հարվածային մենամարտերից մուայ թայն առանձնանում է մոտիկ մարտում օգտագործվող՝ իր կոպիտ եւ ջախջախիչ տեխնիկական համակարգով: «Արմունկը հաղթում է բռունցքին, իսկ ծունկը հաղթում է ոտքին». սա մուայ թայի սկզբունքներից մեկն է: Թայլանդական այս բռնցքամարտի մասին ասում են, որ դա զենք է, որը միշտ քեզ հետ է: Արմունկով հարվածն ամենաուժեղ եւ ամենավտանգավոր հարվածներից մեկն է, հատկապես երբ այն կատարվում է մեծ արագությամբ մոտիկ հեռավորության վրա: Այն համեմատվում է սրի հարվածի հետ եւ որպես կանոն՝ հանգեցնում է հոնքի, ականջի կամ դեմքի այլ մասի խոցվելուն: Մուայ թայում տեխնիկական նոկաուտի ենթարկելը նույնպես պատվաբեր է, ինչպես որ նոկաուտով հաղթելը: Դա խոսում է մարզիկի լավ պատրաստության, ճկունության եւ հզորության մասին: Այդպիսի մարզիկ է հաղթանակ կերտող մեր հերթական զրուցակիցը, որին ճանաչում են ոչ միայն Արցախում, այլեւ ամբողջ աշխարհում:

Դավիթ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ ծնվել է 1998թ. հունիսին Մարտունիում: Ավարտել է Ստեփանակերտի 11-րդ դպրոցը: Սովորում է «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի իրավաբանական բաժնի 2-րդ կուրսում: 2016-2018 թթ. ծառայել է ԱՀ ՊԲ-ում: Սպորտով սկսել է պարապել 2010 թվականից: Սկզբնական շրջանում մուայ թայը գրավել է նրան, ինչպես եւ իր հասակակիցներից շատերին, արտասահմանյան ֆիլմերի մեջ ցուցադրվող հզոր տեխնիկայով եւ հայտնի չեմպիոնների ու բռնցքամարտիկների օրինակով: Ընդգրկվելով Արցախում գործող մարտարվեստների ասոցիացիա, պարապելով մարզիչներ Գարեգին եւ Ալեքսան Աղաբալյանների մոտ՝ Դավիթը ցուցաբերել է լավ արդյունք: Սպորտը դարձել է նրա համար ապրելակերպ: Նա հասել է բարձրագույն հաղթանակների: 2014թ. K1 մարզաձեւում Եվրոպայի հաղթող է ճանաչվել: 2015թ. մուայ թայի աշխարհի չեմպիոն է հռչակվել: 2015թ. K1-ի աշխարհի առաջնության արծաթե մեդալակիր է: Միջազգային առաջնությունների բազմակի հաղթող է: Ընդ որում, մարզաձեւին տիրապետելու նրա բարձր աստիճանը եւ նոկաուտներով հաղթանակները տպավորում են ոչ միայն իր երկրպագուներին, այլեւ մրցավարներին: Դավիթ Հայրապետյանի հետ մեր հետաքրքիր հարցազրույցն սկսեցինք՝ հիշելով նրա առաջին մարտը:

- Դավիթ, կպատմե՞ք Ձեր առաջին մարտի մասին:

- Առաջին մարտս 2010 թվականին էր: Մոտավորապես չորս ամսվա պարապող էի: Ստեփանակերտի «Դինամո» մարզադահլիճում սանդա ուշուի մրցույթ էր կազմակերպվել, որին մասնակցեցի նաեւ ես: Հաղթելով մրցակիցներիս՝ մրցույթի չեմպիոն դարձա: Ոգեւորված էի, որ քիչ ժամանակ պարապելով՝ արդեն մրցույթի էի մասնակցում: Ուրախ էի, որ կարողացա չեմպիոն դառնալ, եւ որ առաջին մարտս ավարտվեց իմ հաղթանակով:

- Իսկ ընդհանրապես Ձեր ունեցած մարտերից ո՞րն է ամենատպավորիչը Ձեզ համար:

- Ամենատպավորիչ մարտս, թերեւս, 2014թ. Եվրոպայի առաջնության ժամանակ էր: Եզրափակչում հանդիպեցի ինձանից ավելի բարձր հասակ ունեցող մարզիկի հետ: Նախքան մարտը շրջապատում ինձ թերագնահատում էին, թե չեմ կարող հաղթել: Բայց դա ինձ հաջողվեց: Նոկաուտով հաղթեցի մրցակցիս, դարձա Եվրոպայի չեմպիոն: Մարտից հետո մրցավարն էլ արտահայտվեց, որ զարմացած է իմ տվյալներով, նա էլ չէր սպասում, որ կհաղթեմ:

- Հետեւելով Ձեր մարզաձեւով ընթացող մարտերին՝ անձամբ ես այն տպավորությունն ունեմ, թե դրա հնարներն ատամ ջարդելու համար են: Արտաքինից մուայ թայը կարծես թե ավելի ցավոտ են լինում: Մուայ թայը սովորեցնում է գործել միայն մի տարբերակով, այն է՝ հաղթանակ: Երբ լավ ես պատրաստվում մարտին, կոպտությունն ու դաժանությունը վախենալու չեն:

- Իսկ ինչպե՞ս են վերաբերվում մարզաձեւի Ձեր ընտրությանը ընտանիքում:

- Սկզբնական շրջանում ողջունում էին սպորտով զբաղվելու ցանկությունս: Արդեն երկու տարի պարապելուց հետո, երբ պետք է նիհարեի կամ ինտենսիվ պարապեի, մայրս խղճում էր ինձ եւ ասում, որ դա ինձ պետք չէ: Իսկ հայրս, ինչպես հայկական ավանդական ընտանիքներից շատերում, լռեցնում էր մորս եւ ասում՝ թող պարապի: Ճիշտ է, մտահոգվում են ինձ համար, բայց երբ հաղթում եմ ու չեմպիոն հռչակվում, հպարտանում են իրենց տղայով, իսկ անհանգստությունը հետին կողմ է գնում:

- Պատահե՞լ է, որ սպորտում կիրառվող հնարները պետք գան կյանքում:

- Պատահել է, երբ ստիպված եմ եղել ինքնապաշտպանության նպատակով օգտագործել դրանք: Ցավոք, մեր շրջապատից բացառված չեն նման դեպքերը, երբ առաջարկում են ուժերը փորձել, կամ, օրինակ, որեւէ հարցի լուծում տալու համար ոչ բոլորն են բանակցությունների պատրաստ լինում: Երբեմն ստիպված եմ լինում ֆիզիկական ուժի դիմել: Սպորտով պարապել՝ չի նշանակում միայն ֆիզիկական տվյալները զարգացնել: Մարտում, ինչպես եւ կյանքում, շատ կարեւոր են մարզիկի մտավոր կարողությունները եւ նրա պատրաստությունը ամենատարբեր իրավիճակների: Սպորտով պարապելը միանշանակ օգնում է ինձ ինչպես ռինգում, այնպես էլ կյանքում:

- Հայտնի բռնցքամարտիկներից Ձեզ մոտ հիացմունք առաջացնողներ կա՞ն:

- Հիմնականում՝ հայազգի բռնցքամարտիկները: Իտալիան ներկայացնող Ջիորջիո Պետրոսյանը, որին երկրպագում եմ, բռնցքամարտի «համար մեկ» մարզիկ է, որին ութ սերունդ ոչ ոք չի կարողանում հաղթել: Նա խելացի եւ ուժեղ մարզիկ է, որի կերպարն օրինակ է ինձ համար: Ընդհանրապես, ամենախելացի մարդիկ շատ ուժեղ մարզիկներ են:

- Լսել ենք փետրվարին սպասվող թեժ մարտերի մասին: Ինչպե՞ս եք տրամադրված:

- Փետրվարի 22-ին Երեւանում տեղի կունենա «ՀՀ մարզիկներն ընդդեմ Չինաստանի մարզիկների» մրցաշարը, որը կազմակերպում է Mix Fight կազմակերպությունը: Չինաստանի լավագույն մարզիկները WLF կազմակերպության շրջանակներում կմասնակցեն այդ մրցաշարին: Նախապատրաստվում եմ մենամարտել այդ մրցաշարում եւ մարտական եմ տրամադրված:

- Ի՞նչ խորհուրդ կտաք սկսնակ մարզիկներին, որոնք ուզում են չեմպիոն դառնալ:

- Ինչպես սկսնակ, այնպես էլ բոլոր մարզիկներին, որոնք ուզում են չեմպիոն դառնալ, խորհուրդ եմ տալիս լիարժեք նվիրվել մարզումներին եւ հոգեբանորեն լավ տրամադրվել: Պարտությունները նույնպես պետք են: Սպորտում այդպես է. պարտվում ես, որ հաղթես: Կարեւոր է լավ պատրաստվել, հաղթահարել խոչընդոտները եւ անշեղ գնալ դեպի նպատակ, դեպի հաղթանակ:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԹՈՒՄՈՆ «ԱՐՏԱՀԱՆԿՈՒՄ» Է ԳԵՐՄԱՆԻԱ

Ինչպես տեղեկանում ենք «Ազգ» թերթում (հ. 3, 24-01-2020)՝ Գերմանիայում նրա թղթակից Անահիտ Հովսեփյանի հոդվածից, հունվարի 21-ին Բեռլինում՝ KfW բանկի կենտրոնակայանում, Երեւանի հետ տեսակամուրջի միջոցով, հանդիսավոր արարողությամբ ստորագրվեց Բեռլինի Վիլմերսդորֆ փողոցում Թումո կենտրոնի հիմնադրման վերաբերյալ պայմանագիրը: Հեղինակը նշում է, որ գերմանական մամուլը լայնորեն արձանագանքել է այդ երևույթին: Մասնավորապես «Թագեսշպիգելն» այսպես է գրել. «Թվայնացված կրթություն. Գերմանիան սովորում է Հայաստանից»: Նա հավելում է, որ սույն գնահատականն ընդգծվել է նաեւ տեղական ֆինանսական առցանց լրատվականում, «անշուշտ շոյելով մեր գովեստի կարոտ ներքին ունկը, որի մեջ գերմանական մամուլում շրջանառվող, նաեւ վերոհիշյալ հոդվածում առկա խցանված, չփոխվող կաղապար կա՝ «տնտեսապես աղքատ Հայաստան»: Այս վերջին մտքի առնչությամբ հեղինակն իր մեկնաբանումն է անում. «Ե՞րբ կջնջվի այս թիվ ու նյութ բովանդակող բառը, երբ հարստությունը՝ մեր միտքն ու գաղափարը, բարձր գին ունի դրսում, բայց ներսում՝ դեռեւս ամենօրյա աշխատանքի կարոտ ու նպատակազուրկ, դժվար է կանխատեսել»: Նույն աղբյուրից տեղեկանում ենք, որ ԳԴՀ մայրաքաղաքում Թումոն սկսելու է գործել 2020-ի հոկտեմբերից՝ KfW բանկի ֆինանսական օժանդակությամբ՝ ապահովելով 1200 աշակերտի շաբաթական անվճար կրթությունը: «Թագեսշպիգելն» իրազեկում է, որ կենտրոնի անունը հայ բանաստեղծ Թումանյանի անվան կրճատ՝ Թումո ձեւից է: 2011-ին ամերիկահայ գործարար զույգի՝ Սեմ եւ Սիլվա Սիմոնյանների հղացած գաղափարը բարեգործական նախագիծ է եւ Երեւանից բացի գործում է նաեւ Դիլիջանում, Գյումրիում, Ստեփանակերտում, Փարիզում ու Բեյրութում:

Իր հոդվածում Ա. Հովսեփյանը ներկայացնում է նաև «Թագեսշպիգելի» մեկ այլ արձագանք. «Հայաստանը, որ խորհրդային ժամանակներից արդեն լավ ծրագրավորողներ պատրաստող երկրի համբավ ուներ, այսօր փորձում է դրան միավորել նաեւ շախմատի մեջ իր հաջողությունները եւ Սիլիկոնյան հովիտ կերտել, Հարավային Կովկասում ներկայանալ որպես Շախմատային հովիտ» և ծանուցում, որ ըստ Ֆրիդոմ հաուսի, ինտերնետն ազատ է Հայաստանում այնքան, որքան Ֆրանսիայում: Գերմանական թերթն ընդգծում է, որ վարչապետ Փաշինյանն իր ղեկավարած երկրի ժողովրդի հետ հաղորդակցվում է ինտերնետով՝ հիշատակելով նաեւ այն իրողությունը, թե թավշյա հեղափոխությունն էլ կայացավ ինտերնետի, սոցցանցերում տարածվող ուղիղ եթերի հրապարակայնության միջոցով: Այն օգնեց կանխել բիրտ ուժի, բռնության կիրառումը:

«Գերմանական լրատվամիջոցներում Թումո կենտրոնի մասին ռեպորտաժներ ու հիացական գնահատականներ հայտնվեցին 2018-ից, երբ թավշյա հեղափոխությունը Հայաստանին բևեռեց լրագրողների հիացական հայացքը, և առավելաբար շռայլ գովեստներ գրանցեց, երբ ԳԴՀ կանցլեր Անգելա Մերկելն այցելեց կենտրոն»,- կարդում ենք Ա.Հովսեփյանի հոդվածում:

Մեր կողմից միայն ավելացնենք, որ Ստեփանակերտի Թումո կենտրոն ներկայումս նույնքան աշակերտ է հաճախում, որքան նախատեսվում է Բեռլինի Թումոյում: Ասել ու շարունակում ենք հաստատել այն միտքը, որ տեղեկատվական տեխնոլոգիաները վերացնում են բոլոր սահմանները: Այսօր Արցախի կրթական քաղաքականությունն ուղղված է այն բանին, որ նորագույն տեխնոլոգիաները մուտք գործեն մեր հարապետության բոլոր դպրոցները, որ աշակերտներն ու մանկավարժները լավագույնս տիրապետեն և օգտվեն նրա հնարավորություններից, ինչի շնորհիվ որակյալ կրթությունը հասանելի կլինի անգամ ամենահեռավոր գյուղի երեխային, և նա, մեծանալով, ստիպված չի լինի աշխատանք գտնելու հույսը փայփայել իր բնակավայրից, երկրից դուրս: Առաջադեմ այդ փոփոխությունները կլինեն, եթե դրանք նախ և առաջ տեղի ունենան մեր ուղեղներում, և ինքներս փոխվենք, երբ կարծրացած մտածողությանը փոխարինելու գա ստեղծագործականը:

Հավատում ենք, որ հենց այդպես էլ կլինի. չէ՞ որ արցախցին միշտ աչքի է ընկել դրանով: Եվ հավատում ենք, որ արցախցու գենի վերածնունդը շատ չի ուշանա:

Սեփ լրատվություն

ԱՆՄՈՌԱՆԱԼԻ, ՎԱՌ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

Հայաստանում գործում է «Մարզերի երեխաները՝ մարզերում» սոցիալական ծրագիր, որի շրջանակներում մարզաբնակ երեխաները հնարավորություն են ստանում ծանոթանալ և ընկերանալ այլ մարզերի երեխաների հետ: Փոխադարձ այցելությունների արդյունքում երեխաների մոտ բացահայտվում են նոր հետաքրքրություններ ու ունակություններ, հնարավորություն է ընձեռվում ինքնադրսևորվելու և օգտագործելու իրենց ներուժը: Իսկ դա իրականացնելու համար կազմակերպվում են դասընթացներ, հանդիպումներ տարբեր ոլորտների մասնագետների հետ:

Վերջերս այդ ծրագրի շրջանակներում Ասկերանում ևս կազմակերպվեց հանդիպում ՀՀ Արմավիրի մարզի Երվանդաշատ գյուղի և Ասկերանի Էդմոն Բարսեղյանի անվան միջնակարգ դպրոցների բարձր դասարանցիների միջև: Հայաստանից ժամանել էին նաև մի խումբ երիտասարդներ տարբեր մարզերից և հինգ կամավորներ ծրագրի նախաձեռնող խմբի անդամներ Մայիս Մարգարյանի և Արման Յարալյանի գլխավորությամբ: Երվանդաշատի 15 դպրոցականներին ուղեկցում էր պատմության ուսուցիչ Սուրեն Խաչիկյանը:

Հանդիպումը տեղի ունեցավ Ասկերան քաղաքի «Մայրիկ» սրճարանում, որտեղ երեխաներին սպասվում էր մայրական ջերմություն և սրտացավ ընդունելություն: Համակարգողը Ասկերանի շրջանի ՊՄՊ պետական ծառայության պետ Ալլա Արզումանյանն էր: Հաճելի ծանոթությունից և հյուրասիրությունից հետո հատուկ մշակված օրակարգով միջոցառում էր նախատեսվում դպրոցականների համար:

Նրանք նախ այցելեցին Ասկերանի բերդը, զմայլվեցին գեղեցիկ տեսարաններով, ապա երեկոյան ուղևորվեցին Ստեփանակերտ: Արցախի քաղաքամայրը գիշերային

իր ողջ շքեղությամբ հյուրերին էր սպասում: Խումբը շրջեց քաղաքում, երվանդաշատցիները, որ առաջին անգամ էին Արցախում, չէին կարողանում զսպել իրենց հիացմունքը: Հաղթական Ստեփանակերտն աննկարագրելի գեղեցիկ, մաքուր և լույսերով էր ողողված, իսկ «Մենք ենք, մեր սարերը» հուշարձանն իր հպարտ կեցվածքով դիմավորեց հյուրերին՝ խորհրդանշելով, որ արցախցին ամուր է կանգնած իր մայր հողին:

Դպրոցականների ուրախությանը չափ չկար. նրանք երգելով և ասմունքելով վերադարձան Ասկերան, որտեղ սպասվում էին հաճելի անակնկալներ:

Լեռնագնաց Աղասի Մարտիրոսյանը անցկացրեց սեմինար արշավների և լեռնագնացության թեմայով, Ասկերանի միջնակարգ դպրոցի պատմության ուսուցչուհի Լուսինե Խաչատրյանը պատմեց դպրոցի, աշակերտների հետաքրքրությունների մասին, իսկ հերոսական Ասկերանի պատմությունը ներկայացրեց մի առանձին հպարտությամբ:

Զրույցն անցավ հետաքրքիր, անկեղծ, ջերմ մթնոլորտում, ապա հյուրերը գիշերեցին ասկերանցի իրենց հասակակիցների տներում, ինչն ավելի մտերմացրեց նրանց:

Հաջորդ օրը նորից հավաքվեցին ու մեկնեցին պատմական Տիգրանակերտ և ոտքով բարձրացան Վանքասարի եկեղեցին: Ասկերանի միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանի դասղեկ Ռուզան Հայրապետյանը ծանոթացրեց եկեղեցու պատմությանը և պատասխանեց աշակերտների հարցերին:

Ինչ խոսք, բավականին գեղեցիկ և անմոռանալի տպավորություններով ավարտվեցին երկօրյա միջոցառումները, Երվանդաշատի աշակերտներն ու հյուրերը մեկնեցին կրկին հանդիպելու ակնկալիքով…

Նշենք, որ միջոցառմանն իրենց աջակցությունն են ցուցաբերել Ասկերանի ԱԱԾ տնօրեն Իվան Հարությունյանը և Ասկերանի քաղաքապետ Սամվել Աղաջանյանը:

Կարինե ԲԱԽՇԻՅԱՆ

ԳԻՐՔ - ՇՏԵՄԱՐԱՆ

14 Գրքի 3-րդ բաժնում կարելի է ծանոթանալ՝ ինչ է հայրենիքը, ինչու է մեր երկիրը կոչվում Հայք, ով է հայը խորհրդածություններին, հայոց պետականության խորհրդանիշներին ու համապատասխան չափածո հատվածների, Հայրենիք-Սփյուռք կապին, հայրենիքին նվիրված շարադրությունների, հայ ժողովրդի մեծ բարեկամներին ու բարերարներին, հայրենի եզերքին՝ Արցախ-Ղարաբաղին, Շարժում-88-ին, զինվորների շարադրություններից տողերի, Արցախյան պատերազմին նվիրված արցախցի բանաստեղծների ստեղծագործություններին:

Հայոց պատմության թողած դասերը (Կորյուն, Ագաթանգեղոս, Եղիշե, Ղ. Փարպեցի, Փ.Բուզանդ, Մ. Խորենացի) մեր սերնդին անհրաժեշտ են ամեն քայլափոխի: Գիրքը կօգնի ճանաչել մեր ազգային էպոսի՝ «Սասնա ծռեր»-ի տեղը աշխարհի էպոսների շարքում (1964թ. էպոսների միջազգային մրցույթում մեր էպոսը գրավել է առաջին տեղը), հայկական և հին հունական դիցարանի աստվածներին, հայագիտական նշանավոր կենտրոններն ու դպրոցները (Մխիթարյան միաբանություն, Գևորգյան և Լազարյան ճեմարաններ):

Ընթերցողներին կմատուցվեն հայոց հաղթական բազուկը, Հայկ նահապետի խոսքը, Տիգրան Մեծի պատգամը, Վարդան Մամիկոնյանի կոչը, Գևորգ Մարզպետունու երդումը Մեսրոպ Մաշտոցի շիրմին, Խրիմյան Հայրիկի կոչը, Թումանյանի նամակը Անդրանիկին, Անդրանիկի կտակը, Նժդեհի պատգամները հայ երիտասարդությանը և այլն:

Գիրքը ներառում է նաև հայ վրիժառուների ձեռնարկած գործողության՝ «Նեմեսիսի», հայորդիների՝ ազգի դավաճանների ու եղեռնի կազմակերպիչների նկատմամբ իրականացրած խիզախ քայլերի մասին պատմությունները, փոթորկահույզ Փետրվարի 30-ամյա դասերը (Վազգեն Սարգսյանի պատգամը, Մոնթե Մելքոնյանի, Բեկորի, Լեոնիդ Ազգալդյանի խոսքերից), 2016-ի ապրիլյան պատերազմի վերլուծությունը. «100 ժամ՝ 100 կյանք. սա այն դառը իրականությունն է, որ հառնում է ամուսին կամ հարազատ կորցրած ընտանիքների առաջ… իսկ ազգը, հասարակությունը փորձում է հավերժացնել հերոսների անունները և շուրթից շուրթ փոխանցել նրանց անմահացման պատմությունը…» (Ելիզավետա Միրզոյան):

Նշանավոր գործիչների (Դրո, Անդրանիկ, Նժդեհ, Ղ. Ալիշան, Կոմիտաս, Թումանյան, Տերյան, Շիրազ, Սևակ, Իսահակյան, Վ. Համբարձումյան, Մ. Սարյան) նամակները, կտակներն ու պատգամները շատ կարևոր են մատաղ սերնդի դաստիարակության գործում. ուսուցիչները դրանք կարող են օգտագործել իրենց գործունեության ընթացքում:

Իսկ թե ինչ նշանակություն ունի արվեստը մարդու կյանքում, կարելի է տեղեկանալ համապատասխան խորագրից, որում նշվում է, թե արվեստը ինչքանով է օգնում մարդկանց՝ ճանաչել աշխարհը, ձևավորել իրենց հոգևոր նկարագիրը, զգացմունքներն ու մտքերը: Այստեղ կարող եք գտնել մարդկության կողմից ստեղծված մշակույթի անգնահատելի գանձերը՝ թանգարաններ, հնադարյան կառույցներ, մեծ նկարիչների հայտնի ստեղծագործություններ, քանդակագործության, ճարտարապետության բացառիկ նմուշներ, կինո, թատրոն, երաժշտություն՝ տաղ, բանքեր, գանձ, շարական, «Ղարաբաղի հորովել»-ը, անտունիներ, հայ անվանի երգահաններ:

«Հետաքրքիր փաստեր»-ն էլ ձեր գիտելիքները կհարստացնեն նորանոր տեղեկություններով, որոնք հեղինակը հավաքագրել ու մեկտեղել է գրքում՝ դյուրին դարձնելով ընթերցողների գործը:

Գիրքն իրենից ներկայացնում է գիտելիքների այնպիսի խաչմերուկ, որը հատելիս անպայման դրանից օգտվելու ցանկության կմղի:

Հեղինակ Ելիզավետա Միրզոյանը իր «Գիտելիքների խաչմերուկում» գրքում ստեղծել է գիտելիքների այնպիսի շտեմարան, որն անհրաժեշտություն կդառնա մայրենիի նվիրյալ բոլոր անձանց համար:

Ս. ՂԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ

✉ Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99, E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 4 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 27.01.2020թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: